

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՈՔ  
ՈՒՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔ

ՈՉ ՈՔ ՉՊԵՏՔ Է  
ԿԱՄԱՅԱԿԱՆՈՐԵՆ  
ԶՐԿՎԻ ՔԱՂԱՔԱՑԻ-  
ՈՒԹՅՈՒՆԻՑ

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ  
ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ,  
ՓՈԽԵԼՈՒ ԿԱՄ  
ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՀԱՐՅՈՒՄ  
ԿԱՆԱՅՔ ՈՒՆԵՆ  
ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ  
ՀԱՎԱՍԱՐ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԵՐԵԽԱ  
ՈՒՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ  
ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

12 ՄԻԼԻՈՆ ՄԱՐԴ ԱՄԲՈՂՋ ԱՃԽԱՐՀՈՒՄ ՉՈՒՆԻ  
ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ: ՆՐԱՆՔ ՈՐԵՎԷ ԵՐԿՐԻ  
ՔԱՂԱՔԱՑԻ ՉԵՆ, ՀԵՏԵՎԱԲԱՐ, ԱՊՐՈՒՄ ԵՆ  
ԻՐԱՎԱԿԱՆ ԱՆՈՐՈՇՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԵՐԵԽԱ  
ՈՒՆԻ ԻՐ ԾՆՆԴԻ ԱՆՀԱՊԱՂ  
ԳՐԱՆՑՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

# ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

## ՄԱԿ ՓԳՀ Հայաստան Մարտ 2013

ԱՊԱՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՇԱՏ  
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԻՄՔՈՒՄ  
ԸՆԿԱԾ Է ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱԿ ՓԳՀ-Ի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑԻ  
ՄԱՆԴԱՏՆ Է ՊԱՇՏՊԱՆԵԼ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ  
ՉՈՒՆԵՅՈՂ ԱՆՁԱՆՑ

ԱՊԱՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԿԱՐԵԼԻ Է ԿԱՆԽԵԼ՝ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԾՆՈՒՆԴՆԵՐԻ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ  
ԳՐԱՆՑՄԱՆ ՄԻՋՈՅՈՎ



**UNHCR**  
The UN  
Refugee Agency

---

**ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԱՊԱՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Երևան, մարտ 2013



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան.....	7
Համառոտ ակնարկ.....	9
Ներածություն.....	12
<b>Բաժին 1. Քաղաքացիության վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը և միջազգային պայմանագրերը ..</b>	<b>15</b>
1.1. Հայաստանի քաղաքացիությունը նախքան անկախությունը.....	15
1.2. Անկախությունը և սահմանադրությունը .....	16
1.3. Քաղաքացիների սկզբնական կազմը .....	19
1.3.1. Նախկին Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության քաղաքացիները .....	19
1.3.2. Նախկին ԽՍՀՄ այլ հանրապետությունների քաղաքացիները...20	
1.3.3. Հայերը այլ նախկին ԽՍՀՄ հանրապետություններում .....	22
1.4. ՀՀ միջազգային պարտավորությունները քաղաքացիության և ապաքաղաքացիության ոլորտում.....	23
1.4.1. Միավորված ազգերի կազմակերպություն ..23	
1.4.2. Եվրոպայի խորհուրդ.....	24
<b>Բաժին 2. ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելը և կորցնելը .....</b>	<b>26</b>
2.1. 1961թ. Կոնվենցիայի հիմնական տարրերը.....	26
2.2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերումը .....	27
2.2.1. Քաղաքացիության ձեռքբերումը ծննդով.....	28

2.2.2. Քաղաքացիության ձեռքբերումը հայատակագրման /նատուրալիզացիայի/ միջոցով.....	30
<b>2.3. ՀՀ քաղաքացիությունը կորցնելը.....</b>	<b>40</b>
2.3.1. Քաղաքացիության կորուստը կարգավիճակի փոփոխման, ծնողական իրավունքի ճանաչման և ծնողի կամ ամուսնու քաղաքացիության կորստի դեպքերում .....	40
2.3.2. Քաղաքացիությունից հրաժարումը.....	43
2.3.3. Քաղաքացիությունից զրկելը/ քաղաքացիությունը դադարեցնելը .....	45

**Բաժին 3. Ապաքաղաքացիության պատճառները  
Հայաստանում ..... 48**

<b>3.1. Ապաքաղաքացիության վերաբերյալ վիճակագրական տվյալները .....</b>	<b>48</b>
<b>3.2. Օրենսդրությունում առկա թերություններից բխող ապաքաղաքացիություն .....</b>	<b>50</b>
<b>3.3. Վարչական գործելակերպեր, որոնք կարող են հանգեցնել ապաքաղաքացիության .....</b>	<b>54</b>
<b>3.4. Ապաքաղաքացիություն՝ անհատական հանգամանքների բերումով .....</b>	<b>61</b>
3.4.1. Նախկին Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների քաղաքացիները ..	61
3.4.2. Ազգային փոքրամասնությունները.....	63
3.4.3. Անձինք, ովքեր Հայաստան են գաղթել Աբխազիայից .....	66
3.4.4. Քաղաքացիություն չունեցող անձինք, ովքեր ժամանում են Հայաստան որպես միգրանտներ.....	67

3.4.5. Առանց ծննդի գրանցման երեխաներ ..... 68

<b>Քաժին 4. Քաղաքացիություն չունեցող անձանց հանդեպ վերաբերմունքը Հայաստանում.....</b>	<b>73</b>
4.1. 1954թ. Կոնվենցիայի հիմնական տարրերը .....	73
4.2. Քաղաքացիություն չունեցող անձանց ՀՀ օրենսդրության համաձայն .....	75
4.3. Քաղաքացիություն չունեցող անձանց ճանաչման ֆորմալ ընթացակարգեր.....	78
4.4. Կացության կարգավիճակը .....	84
4.5. Ընտանիքի վերամիավորումը .....	88
4.6. Ինքնության վկայականները.....	89
4.7. Ճամփորդական փաստաթղթերը.....	90
4.8. Ազատ տեղաշարժվելու իրավունքը.....	92
4.9. Վարձու աշխատանքը և անհատ ձեռնարկատիրությունը.....	92
4.10. Կրթության իրավունքը.....	94
4.11. Սոցիալական ապահովության և սեփականության իրավունքը .....	94
4.12. Կրոնի ազատությունը .....	95
4.13. Ազատումը փոխադարձության սկզբունքից.....	95
4.14. Ազատումը բացառիկ միջոցառումներից .....	96
4.15. Անձնական կարգավիճակը .....	96
4.16. Հեղինակային իրավունքները և արդյունաբերական սեփականությունը.....	97
4.17. Միավորումներ կազմելու իրավունքը .....	98
4.18. Դատարան դիմելու իրավունքը.....	98
4.19. Ազատ մասնագիտությունները .....	99

4.20. Վարչական օժանդակությունը .....	99
4.21. Չափաբաժինները և բնակարանով ապահովումը.....	100
4.22. Հանրային օժանդակություն .....	100
<b>Բաժին 5. Աղբբեջանից փախստականները և նրանց երեխաները .....</b>	<b>101</b>
<b>Բաժին 6. Եզրահանգումներ և առաջարկություններ.....</b>	<b>104</b>
6.1. Քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանությունը.....	104
6.2. Ապաքաղաքացիության կանխումը .....	107
6.3. Ապաքաղաքացիության կրճատումը .....	112
<b>Հավելված. Օգտագործված գրականության ցանկ .....</b>	<b>116</b>

## ԱՌԱՋԱԲԱՆ

Միջազգային հանրությունը վաղուց է ընդունել, որ յուրաքանչյուր անհատ, անկախ այն բանից, թե որտեղ է գտնվում, պետության հետ պետք է կապված լինի քաղաքացիության իրավական կապով: Այդուհանդերձ, այսօր աշխարհում հասարակությունից մեկուսացած ապրում է մոտ 15 միլիոն քաղաքացիություն չունեցող անձ՝ զրկված իրենց ամենահիմնական իրավունքներից ու ազատություններից:

Գոյություն ունի միջազգային իրավական համակարգ՝ ուղղված ապաքաղաքացիության կանխմանը, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց հայտնաբերելուն և նրանց համար անվտանգ ու արժանապատիվ կյանք ապահովելուն՝ նախքան որևէ հարատև լուծում գտնելը՝ հաճախ քաղաքացիություն ստանալու միջոցով: Այդ համակարգը սահմանված է «Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին» 1954 թվականի և «Ապաքաղաքացիության կանխման մասին» 1961 թվականի կոնվենցիաներով:

Հայաստանի Հանրապետությունը նախկին Խորհրդային Միության առաջին հանրապետություններից էր, որ միացավ ապաքաղաքացիության վերաբերյալ ՄԱԿ-ի կոնվենցիաները 1994 թվականին: Որքանով է Հայաստանը իրականացրել «Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին» 1954 թվականի և «Ապաքաղաքացիության կանխման մասին» 1961 թվականի կոնվենցիաներով ամրագրված առանցքային սկզբունքները և չափանիշները: Հիմնականում այս հարցի պատասխանն է փորձում տալ սույն հետազոտությունը:

Հետազոտության հիմնական առանցքը, հետևաբար, վերլուծելն էր, թե որքանով է Հայաստանի՝ քաղաքացիության մասին օրենսդրության շրջանակը և բովանդակությունը բխում ու համապատասխանում այդ պայմանագրերով սահմանված միջազգային կանոններին և չափանիշներին: Այն նաև անդրադարձ է կատարել քաղաքացիության և ապաքաղաքացիության ոլորտում Եվրոպայի խորհրդի օրենսդիր աշխատանքին:

Սկզբնական հետազոտությունը կատարել և զեկույցի նախագի-



ծը պատրաստել է ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից այդ նպատակով վարձած խորհրդատուն՝ Մարինե Անտոնյանը: Անկեղծորեն շնորհակալ եմ Մարինե Անտոնյանին համապարփակ վերլուծության և հիմնախնդիրները համակարգված և մտածելու տեղիք տվող եղանակով ներկայացնելու համար: Յորուն Բրենդվոլը, Էդինա Սիլպիչեվիչ-Ձիհոն և Ինգե Ստուրկենբումը, բոլորը ՄԱԿ ՓԳՀ-ից, արժեքավոր դիտողություններ են կատարել և ներդրումներ ունեցել զեկույցը վերանայելիս և ես խորապես երախտապարտ եմ նրանց: Խորին երախտագիտությունս եմ հայտնում նաև Հայաստանի Հանրապետության ոստիկանության, ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության, արդարադատության նախարարության, ազգային անվտանգության ծառայության, տարածքային կառավարման նախարարության և միգրացիոն պետական ծառայության աշխատակիցներին՝ զեկույցը վերանայելու և դիտողություններ կատարելու համար:

Լիահույս եմ, որ այս հետազոտությունը մտորումների տեղիք կտա քաղաքականություն մշակողների, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանների համար՝ ապաքաղաքացիությունը արդյունավետ կերպով կանխելու, ապաքաղաքացիության դեպքերին լուծում տալու և քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքները լավագույնս պաշտպանելու առումով:

**Դամթյու Դեսալեյն**  
**Ներկայացուցիչ, ՄԱԿ ՓԳՀ Հայաստան**  
**Երևան, մարտ 2013**

## ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Սույն զեկույցը պատրաստվել է ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի հանձնարարությամբ կատարված՝ քաղաքացիության և ապաքաղաքացիության թեմայով հետազոտության արդյունքներով: Թեև հետազոտության աշխատանքների մեծ մասն իրականացվել է 2011թ. հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում, մինչև 2012թ. սեպտեմբերը տեղի ունեցած զարգացումները նույնպես արտացոլվել են զեկույցում:

Հետազոտության հիմնական նպատակներն էին՝

- վերլուծել Հայաստանի՝ քաղաքացիության վերաբերյալ օրենսդրության համապատասխանությունը ապաքաղաքացիության վերաբերյալ միջազգային և տարածաշրջանային հիմնական փաստաթղթերով սահմանված նորմերին և չափանիշներին.
- բացահայտել անհրաժեշտ փոփոխությունները, որոնք կպահանջվեն ՀՀ օրենսդրությունը վերոնշյալ չափանիշներին համապատասխանեցնելու համար. և
- մշակել կոնկրետ առաջարկություններ՝ ուղղված կառավարությանը, միջազգային կազմակերպություններին և քաղաքացիական հասարակությանը՝ այդ բարեփոխումների իրականացմանն ուղղված գործողությունների վերաբերյալ:

Հետազոտությունը ցույց տվեց, որ Հայաստանի՝ ապաքաղաքացիության վերաբերյալ օրենսդրությունն ընդհանուր առմամբ համահունչ է միջազգային պայմանագրերի դրույթներով սահմանված չափանիշներին: Այնուամենայնիվ, առկա են թերություններ ՀՀ քաղաքացիության ձեռքբերման և դրա կորստի, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց վերաբերյալ դրույթներում: Օրինակ, ծննդով քաղաքացիության ձեռքբերումը կարգավորող ՀՀ օրենսդրությունը, մեծապես հիմնված լինելով արյան սկզբունքի /*jus sanguinis*/ վրա, լիարժեքորեն չի նախատեսում ծննդյան պահին ապաքաղաքացիության կանխմանն ուղղված երաշխիքները: Մասնավորապես, օրենսդրությունը չի ապահովում ՀՀ քաղաքացիության ձեռքբերումը բոլոր երեխաների կողմից, ովքեր ծնվել են

պետության տարածքում և ովքեր այլապես կդառնան քաղաքացիություն չունեցող անձ: Ավելին, քաղաքացիության կորստի, դրանից հրաժարվելու և այն դադարեցնելու վերաբերյալ օրենսդրական դրույթները բավարար պաշտպանություն չեն ապահովում ապաքաղաքացիության դեմ:

Հետազոտության արդյունքում բացահայտված այլ խնդիրները հետևյալն են.

- ՀՀ օրենսդրությամբ տրված՝ քաղաքացիություն չունեցող անձի սահմանումը չի համապատասխանում «Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին» 1954թ. կոնվենցիայով տրված սահմանմանը.
- Առկա չէ ապաքաղաքացիության որոշման ազգային ընթացակարգ.
- Քաղաքացիություն չունեցող անձանց որոշակի կատեգորիաներ դուրս են մնացել կացության և փաստաթղթերի տրամադրման գործող իրավական ռեժիմից: Նրանցից են ոչ օրինական կարգով Հայաստան մուտք գործած կամ Հայաստանում գտնվող անձինք, ինչպես նաև անձինք, ովքեր Հայաստան են ժամանել այլ պետության կողմից տրված՝ քաղաքացիություն չունեցող անձի ճամփորդական փաստաթղթով.
- ՀՀ օրենսդրությունում նախատեսված չէ դրույթ՝ ուղղված ՀՀ տարածքում գտնվող յուրաքանչյուր քաղաքացիություն չունեցող անձի ինքնության վկայական տրամադրելուն.
- Հայաստանում քաղաքացիություն չունեցող անձանց տրվող ճամփորդական փաստաթղթերը չեն համապատասխանում «Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին» 1954թ. կոնվենցիայի Հավելվածով սահմանված պահանջներին:

Խորհրդային Միության փլուզումը Հայաստանում չհանգեցրեց քաղաքացիություն չունեցող մեծաթիվ բնակչության՝ հիմնականում շնորհիվ ՀՀ քաղաքացիների սկզբնական կազմի ընդգրկուն սահմանման: Փաստը, որ անկախացման պահին Հայաստանի բնակչության ավելի քան 90 տոկոսը կազմված է եղել ազգությամբ հայերից, մեծապես նպաստել է դրան:

Այնուամենայնիվ, հնարավոր է, որ ազգությամբ ոչ հայ՝ նախկին ԽՍՀՄ անձնագիր կրող փոքրաթիվ անձինք քաղաքացիություն չունեն ՀՀ-ում: Հիմնական խնդիրն այն է, որ գոյություն չունի երկրում քաղաքացիություն չունեցող անձանց հաշվառման պատշաճ մեխանիզմ, ինչպես նաև նրանց վերաբերյալ վիճակագրական տեղեկատվություն: Ընդհանուր առմամբ ազգային մակարդակում ապաքաղաքացիության երևույթի մասին իրազեկվածության աստիճանը շատ ցածր է: Հետևաբար, առաջարկվում է, որ Հայաստանում ակտիվ քաղաքացիական հասարակությունը և միջազգային կազմակերպությունները ապաքաղաքացիության խնդիրը ներառեն իրենց օրակարգում, իրականացնեն հետազոտություններ և ներգրավվեն կառավարության կողմից տվյալ խնդրին առնչվող քաղաքականության ձևավորմանը: Եվրոպայի խորհուրդը պետք է ակտիվ կերպով խթանի Հայաստանի անդամակցությունը ԵԽ՝ քաղաքացիությանն առնչվող կոնվենցիաներին: Ապաքաղաքացիության վերաբերյալ ազգային իրավական համակարգի՝ ապաքաղաքացիության վերաբերյալ կոնվենցիաներին համապատասխանությունն ապահովելիս ցանկալի կլիներ կառավարության կողմից սույն զեկույցի բաժին 6-ի առաջարկությունները հաշվի առնելը:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն զեկույցը հանդիսանում է ՀՀ-ում ապաքաղաքացիության հիմնախնդրի և քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանության վերաբերյալ իրականացված երկամսյա ուսումնասիրության արդյունք: Ուսումնասիրության շրջանակներում քննվել է քաղաքացիության և ապաքաղաքացիության վերաբերյալ ազգային օրենսդրությունը՝ տվյալ ոլորտում ՀՀ միջազգային պարտավորություններին, մասնավորապես՝ «Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին» 1954թ. կոնվենցիային (այսուհետև՝ 1954թ. Կոնվենցիա) և «Ապաքաղաքացիության կրճատման մասին» 1961թ. կոնվենցիային (այսուհետև՝ 1961թ. Կոնվենցիա) դրա համապատասխանության տեսանկյունից: Այն նպատակ ուներ հայտնաբերել իրավական և քաղաքականության հարթություններում առկա թերությունները, որոնք անհրաժեշտ է վերացնել՝ ապաքաղաքացիությունը հնարավորինս կանխելու ու կրճատելու և քաղաքացիություն չունեցող անձանց հասանելի պաշտպանությունն ապահովելու համար:

Սույն զեկույցում պարունակվող տեղեկատվությունը հիմնված է առկա իրավական դաշտի և գրականության ուսումնասիրության վրա, ազգային դատարանների որոշումների հետազոտության և շահառուներից ոմանց հետ հարցազրույցների վրա, որոնց թվում էին քաղաքացիություն չունեցող անձանց կամ պոտենցիալ քաղաքացիություն չունեցող անձանց հետ առնչվող պետական մարմիններ<sup>1</sup>, փախստականների և ազգային փոքրամասնությունների շահերը ներկայացնող ոչ կառավարական կազմակերպություններ (ՀԿ-ներ), իրավական աջակցություն տրամադրող կազմակերպություններ, փաստաբաններ, միջազգային կազմակերպություններ<sup>2</sup>,

---

1 ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն, ՀՀ տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն պետական ծառայություն, ՀՀ Ազգային անվտանգության ծառայության կազմում գործող սահմանապահ զորքեր, ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն

2 ՅՈՒՆԻՍԵՖ, Եվրոպայի խորհրդի գրասենյակ Հայաստանում և ԵԱՀԿ երևանյան գրասենյակ

մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը, անձինք, ովքեր հայտնի է, որ չունեն քաղաքացիություն և անձինք, ովքեր հավանական է, որ չունեն քաղաքացիություն:

Ձեկույցում ներկայացված պաշտոնական վիճակագրական տվյալները տրամադրվել են Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության կողմից:

Հարկ ենք համարում նշել, որ սույն հետազոտությունը նպատակ չի ունեցել ներկայացնել երկրում քաղաքացիություն չունեցող կամ պոտենցիալ քաղաքացիություն չունեցող անձանց սպառիչ թիվ և նկարագիր: Այն նպատակ ուներ հավաքագրել և ներկայացնել տեղեկատվությունը, որը կօգներ պետական մարմիններին հայտնաբերել նշված խմբերին:

Ձեկույցը բաժանված է վեց բաժնի:

Բաժին 1-ը ներկայացնում է հետխորհրդային Հայաստանում օրենսդրական զարգացումների նկարագիրը, ինչպես նաև ապաքաղաքացիության վերաբերյալ միջազգային պայմանագրերին անդամակացությունը:

Բաժին 2-ը անդրադառնում է ՀՀ քաղաքացիության ձեռքբերումը և դրա կորուստը կարգավորող իրավական նորմերին՝ 1961թ. Կոնվենցիայի պահանջներին դրանց համապատասխանության տեսանկյունից:

Բաժին 3-ը դիտարկում է իրավիճակներ, որ հանգեցրել են ապաքաղաքացիության կամ ունեն այդպիսի պոտենցիալ, մասնավորապես ուշադրություն դարձնելով այն օրենսդրական թերություններին, որոնք կարող են հանգեցնել ապաքաղաքացիության, այդ թերությունների գործնական հետևանքներին, ինչպես նաև ապաքաղաքացիության վրա ներազդող՝ վարչական պրակտիկայում առկա բացերին: Այս բաժնում են ներկայացված նաև այն առանձնահատուկ հանգամանքները, որոնց բերումով առանձին անհատներ կարող են ապաքաղաքացի լինել:

Բաժին 4-ը ամփոփ ներկայացնում է քաղաքացիություն չունեցող անձանց հանդեպ կիրառվող իրավական ռեժիմը ՀՀ-ում՝ համեմատելով այն 1954թ. Կոնվենցիայով սահմանված իրավունքների

հետ:

Բաժին 5-ը ներկայացնում է Ադրբեջանից ներգաղթած փախստականների և նրանց երեխաների քաղաքացիության կարգավիճակի գնահատումը:

Բաժին 6-ն ամփոփում է գեկույցը՝ հակիրճ ներկայացնելով բացահայտումները և կոնկրետ առաջարկություններ է պարունակում օրենսդրական դաշտի և վարչական պրակտիկայի բարելավման վերաբերյալ:

## ԲԱԺԻՆ 1.

### Քաղաքացիության վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը և միջազգային պայմանագրերը

#### 1.1. Հայաստանի քաղաքացիությունը նախքան անկախությունը

Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է Հայաստանի խորհրդային Սոցիալիստական Հանրապետության իրավահաջորդը, որը մասն էր կազմում խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության /ԽՍՀՄ/ 1920թ.ից սկսած մինչև 1991թ.-ին Միության փլուզումը: 1936 և 1977թթ. ԽՍՀՄ սահմանադրությունները<sup>3</sup>, ինչպես նաև խորհրդային քաղաքացիության մասին 1978 և 1990թթ.<sup>4</sup> օրենքները ենթադրում էին ԽՍՀՄ միասնական քաղաքացիության սկզբունքը, ըստ որի Միության անդամ երկրների յուրաքանչյուր քաղաքացի հանդիսանում էր նաև ԽՍՀՄ քաղաքացի:

Քանի որ հանրապետական քաղաքացիությունը խորհրդային ռեժիմում չունեի մեծ գործնական նշանակություն, Միության հանրապետություններից շատերը չէին մշակել իրենց քաղաքացիության ձեռքբերման կամ այն կորցնելու չափորոշիչները սահմանող օրենքներ կամ որոշումներ: Համընդհանուր պատկերացումն այնպիսին է, որ նման օրենքների բացակայության պայմաններում, նախկին խորհրդային փորձը ենթադրում էր, որ մշտական բնակության վայրը հանդիսանում էր տվյալ խորհրդային հանրապետության քաղաքացիության ձեռքբերման որոշիչ գործոնը: Համաձայն ՀՀ –ում առկա պրակտիկայի, ՀԽՍՀ քաղաքացիներ էին հանդիսանում այն անձինք, ովքեր ԽՍՀՄ անձնագիր էին ստացել ՀԽՍՀ անձնագրային մարմիններից կամ ծննդյան վկայական էին ստացել դրա քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններ:

3 ԽՍՀՄ 1936թ. սահմանադրության հոդված 21 և ԽՍՀՄ 1977թ. սահմանադրության հոդված 33

4 ԽՍՀՄ քաղաքացիության մասին 1978թ. օրենքի հոդված 1, ինչպես նաև ԽՍՀՄ քաղաքացիության մասին 1990թ. օրենքի հոդված 1 և 5



րից<sup>5</sup>:

## 1.2. Անկախությունը և սահմանադրությունը

1990թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհուրդն ընդունեց անկախության մասին հռչակագիրը: 1991թ. սեպտեմբերի 21-ին կայացած հանրաքվեի արդյունքներով բնակչության 99.3 տոկոսը քվեարկեց Հայաստանի անկախության օգտին:

Անկախ Հայաստանի սահմանադրությունն ընդունվեց 1995թ. հուլիսի 5-ին և առաջին անգամ անդրադարձավ քաղաքացիության հարցերին: Այնուամենայնիվ, ՀՀ քաղաքացիության սկզբնական կազմը սահմանված չէր մինչև 1995թ. նոյեմբերի 6-ին<sup>6</sup> «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի ընդունումը: Հայաստանի Հանրապետության անձնագրերը, որոնք եկան փոխարինելու ԽՍՀՄ անձնագրերին, սկսեցին թողարկվել 1994թ. սեպտեմբերից՝ համաձայն ՀՀ կառավարության 1992թ. թիվ 473 որոշման: ԽՍՀՄ անձնագրերը Հայաստանի Հանապետությունում շարունակեցին գործել մինչև 2000թ. հուլիսի 1-ը:

Քաղաքացիության ոլորտում ՀՀ քաղաքականության հիմնարար սկզբունքները սահմանված են Սահմանադրությամբ, որի (2005թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեով ընդունված փոփոխություններով) համաձայն՝

*Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից ծնված երեխան Հայաստանի Հանրապետության քաղաքացի է: Յուրաքանչյուր երեխա, որի ծնողներից մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիության իրավունք:<sup>7</sup>*

Այդպիսով ՀՀ սահմանադրությամբ ամրագրվում է արյան սկզբունքը /jus sanguinis/ որպես ՀՀ քաղաքացիության ճեռքբերման

5 Հարցազրույց անձնագրային և վիզաների վարչության պետի հետ, 28 հուլիսի 2011թ.

6 «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք

7 ՀՀ սահմանադրություն, հոդված 30.1

միանշանակ հիմք: Ի լրումն, ՀՀ սահմանադրության հոդված 11.3-ի համաձայն՝ ազգությամբ հայերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն են ձեռք բերում պարզեցված կարգով:

Ավելին, ՀՀ սահմանադրության հոդված 30.1-ով նախատեսվում է, որ՝

*Ոչ որ չի կարող զրկվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից, ինչպես նաև քաղաքացիությունը փոխելու իրավունքից:*

Հոդված 30.1-ով ամրագրված իրավունքների միակ սահմանափակումը սահմանված է Հոդված 43-ի ընդհանուր դրույթներով, ըստ որի սահմանադրական իրավունքները կարող են սահմանափակվել «... եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պարզի և բարի համբավի պաշտպանության համար»: Հոդված 43-ով այնուհետև սահմանվում է, որ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները»:

ՀՀ սահմանադրության հոդված 30.1-ով սահմանվում է ՀՀ-ում երկքաղաքացիության մասին դրույթը: 2005թ. ընդունված սահմանադրական փոփոխություններով վերացվեց երկքաղաքացիության արգելքը: Այնուամենայնիվ, երկքաղաքացիության ռեժիմը սկսեց գործել միայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում 2007թ. համապատասխան դրույթ ավելացնելուց հետո, ըստ որի «Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին Հայաստանի Հանրապետության համար ճանաչվում է միայն որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացի<sup>8</sup>»: Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացու համար նախատեսված բոլոր

8 «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենք, հոդված 13

իրավունքները և կրում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու համար նախատեսված բոլոր պարտականություններն ու պատասխանատվությունը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով կամ օրենքով նախատեսված դեպքերի<sup>9</sup>:

1995 թվականի հունվարի 1-ից հետո, առանց սահմանված կարգի Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս եկած, այլ պետության քաղաքացիություն ընդունած կամ ստացած, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից միակողմանի հրաժարված Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և նրանց երեխաները դեռևս համարվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ<sup>10</sup>:

Քաղաքացիության վերաբերյալ սահմանադրական դրույթներն այնուհետև վերամամրագրվել են «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» 1995թ. օրենքով:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի հոդված 1-ի համաձայն՝

*«Յուրաքանչյուր անձ, օրենքով սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք ունի: Ազգությամբ հայերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն են ձեռք բերում պարզեցված կարգով» և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից հրաժարվելը ինքնին չի հանգեցնում Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելուն»:*

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի հոդված 3-ով սահմանվում է ՀՀ քաղաքացիների՝ օրենքի առջև հավասարությունը՝

*«Հայաստանի Հանրապետության քաղաքացիները հավասար են օրենքի առաջ՝ անկախ Հայաստանի Հանրապետու-*

9 նույնը

10 նույնը

*թյան քաղաքացիություն ձեռք բերելու հիմքերից, ազգություն-նից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, ունեն Սահմանադրությամբ և օրենք-ներով սահմանված բոլոր իրավունքները, ազատություննե-րը և պարտականությունները»:*

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի հոդված 11-ով սահմանվում է հետևյալը՝

*«Հայաստանի Հանրապետությունը խրախուսում է Հայաս-տանի Հանրապետությունում բնակվող քաղաքացիություն չունեցող անձանց կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելը և չի խոչընդոտում նրանց կողմից այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելուն»:*

### **1.3. Քաղաքացիների սկզբնական կազմը**

#### **1.3.1. Նախկին Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության քաղաքացիները**

Նախկին ՀԽՍՀ քաղաքացիները ընդգրկվել են անկախ Հայաս-տանի քաղաքացիների սկզբնական կազմում «Հայաստանի Հան-րապետության քաղաքացիության մասին» օրենքի հոդված 10(1)-ի համաձայն, ըստ որի՝

*Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են ճանաչ-վում՝*

*Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող նախկին ՀԽՍՀ քաղաքացիները, ովքեր մինչև Սահմանադ-րության ուժի մեջ մտնելը ձեռք չեն բերել այլ պետության քա-ղաքացիություն կամ հրաժարվել են դրանից սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարվա ընթացքում:*

Ի տարբերություն «Հայաստանի Հանրապետության քաղաքա-ցիության մասին» ՀՀ օրենքի այլ դրույթների, այս դրույթը որևէ

փոփոխության չի ենթարկվել՝ 1995թ. ի վեր մի շարք տարածայնություններ և բողոքներ առաջ բերելով քաղաքացիների շրջանում՝ առանց իրենց կամավոր համաձայնության ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու կապակցությամբ<sup>11</sup>:

### 1.3.2. Նախկին ԽՍՀՄ այլ հանրապետությունների քաղաքացիները

Նախկին ԽՍՀՄ այլ հանրապետությունների քաղաքացիները ընդգրկվել են քաղաքացիների սկզբնական կազմում՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 10(2) հոդվածի, որը 1995թ. խմբագրությամբ սահմանում էր հետևյալը՝

*Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են ճանաչվում[...]*

*(2) մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրը վերջին երեք տարին Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձինք կամ օտարերկրյա քաղաքացի չհանդիսացող նախկին ԽՍՀՄ այլ հանրապետությունների քաղաքացիները, ովքեր սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարվա ընթացքում դիմում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու համար:*

11 «Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն» ՀԿ 2006-2007թթ. հաշվետվության 11-րդ էջում նկարագրված է երկու անձանց դեպք, ովքեր չեն ցանկացել դառնալ ՀՀ քաղաքացի և համարել են, որ իրենք պետք է տային իրենց համաձայնությունը: Հետևաբար, նրանք հրաժարվել են ՀՀ անձնագրեր ստանալուց: Բացի այդ, ՀՀ անձնագրային և վիզաների վարչության պետն իր 2011թ. հուլիսի 20-ի հարցազրույցում նշել է, որ վարչությունը ժամանակ առ ժամանակ դիմումներ է ստանում ՀՀ քաղաքացիներից, ովքեր ցանկանում են փաստաթղթավորվել որպես քաղաքացիություն չունեցող անձ, քանի որ գտնում են, որ ԽՍՀՄ փլուզումից հետո իրենք չէին կարող ՀՀ քաղաքացիություն ձեռք բերել՝ առանց իրենց համաձայնության:

1997 – 2000թթ. ընթացքում «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում յոթ անգամ կատարվել են փոփոխություններ և լրացումներ, և դրանք բոլորը, բացառությամբ մեկի, ներառել են նաև հոդված 10(2)-ի փոփոխություն, որը ներկայիս խմբագրությամբ սահմանում է հետևյալը՝

*Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են ճանաչվում[...]*

*(2) Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձինք կամ օտարերկրյա քաղաքացի չհանդիսացող նախկին ԽՍՀՄ այլ հանրապետությունների քաղաքացիները, ովքեր մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը դիմում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու համար:*

Այսպիսով, հոդված 10(2) –ը փոփոխվել է՝ առավել լիբերալ դրույթներ նախատեսելով քաղաքացիություն չունեցող անձանց և այլ պետության քաղաքացիություն ձեռք չբերած նախկին ԽՍՀՄ հանրապետությունների քաղաքացիների համար: Մասնավորապես, վերացվել է օրենքի ուժի մեջ մտնելուն անմիջապես նախորդող երեք տարիների ընթացքում ՀՀ-ում մշտական բնակության պահանջը, ըստ այդմ՝ քաղաքացիության իրավունք են ստացել նաև այն անձինք, որոնք հանդիսանում են ՀՀ մշտական բնակիչներ, անգամ եթե նրանք բնակություն են հաստատել ՀՀ-ում «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո: Նաև՝մի քանի անգամ երկարացվել է ՀՀ քաղաքացիության համար դիմելու ժամկետը: Քաղաքացիների սկզբնական կազմի այս սպառիչ սահմանումը, պատշաճ կիրառելու դեպքում, կարող է բավականին արդյունավետ լինել ՀՀ-ում ապաքաղաքացիությունը կրճատելու առումով:

Հասանելի չեն տվյալներ այն մասին, թե նախկին ԽՍՀՄ հանրապետությունների քանի քաղաքացիներ էին բնակվում ՀՀ-ում՝ ԽՍՀՄ փլուզումից անմիջապես առաջ կամ հետո<sup>12</sup>: Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունն ամենահա-

12 ԱԿԾ-ի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետի հետ 2011թ. 19 սեպտեմբերի հարցազրույց

մասեռ էթնիկ կազմով հանրապետություններից մեկն էր նախկին ԽՍՀՄ 15 հանրապետություններից:<sup>13</sup> ԽՍՀՄ բնակչության 1989թ. մարդահամարի արդյունքներով՝ ազգությամբ հայերը կազմում էին հանրապետության բնակչության 93.3 տոկոսը:<sup>14</sup> Հավանական է, որ Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության բնակչության մնացած 6.7 տոկոսը, ծագումով հայ չլինելով հանդերձ, հանդիսանում էին Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության քաղաքացիներ և ստացել են ՀՀ քաղաքացիություն՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի հոդված 10(1)-ի դրույթների:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 10(2) հոդվածով ճանաչման միջոցով ՀՀ քաղաքացիության ձեռքբերման, ինչպես նաև այդ գործընթացից չօգտված անձանց և դեռևս ԽՍՀՄ անձնագիր ունեցողների թվաքանակի վերաբերյալ որևէ վիճակագրական տվյալ առկա չէ<sup>15</sup>:

### **1.3.3. Հայերը այլ նախկին ԽՍՀՄ հանրապետություններում**

1989թ. կայացած՝ ԽՍՀՄ բնակչության վերջին մարդահամարի տվյալներով՝ նախկին ԽՍՀՄ պետություններում ապրում էր ավելի քան մեկ միլիոն ծագումով հայ<sup>16</sup>:

ԽՍՀՄ հանրապետություններում ապրող նախկին ՀԽՍՀ քաղաքացիները ճանաչվել են ՀՀ քաղաքացի՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 10(3) հոդվածի (1995թ. Խմբագրությամբ), որում, մասնավորապես,

13 Անդերսոն, Բ.Ա. և Սիլվեր Բ.Դ. (1989թ.), «Խորհրդային Միության ազգային կազմի փոփոխության ժողովրդագրական աղբյուրները», հոդ. 15, թիվ 4, էջ 609-656, մեջբերված EUDO Քաղաքացիության վերաբերյալ դիտարկումների կենտրոն, Երկրի վերաբերյալ զեկույցում. Հայաստան, Շուշանիկ Մակարյան, տես <http://eudo-citizenship.eu/docs/CountryReports/Armenia.pdf>

14 Համաձայն 2001թ. բնակչության մարդահամարի՝ ՀՀ բնակչության 97.3 տոկոսը ազգությամբ հայեր են

15 Հարցազրույց անձնագրային և վիզաների վարչության պետի հետ, 28 հուլիսի 2011թ.

16 Անդերսոն, Բ.Ա. և Սիլվեր Բ.Դ. (1989).

նշվում էր հետևյալը՝

*Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են ճանաչվում[...]*

*(3) 1991 թվականի սեպտեմբերի 21-ից հետո Հայաստանի Հանրապետությունից դուրս բնակվող նախկին ՀԽՍՀ այն քաղաքացիները, ովքեր ձեռք չեն բերել այլ պետության քաղաքացիություն, ինչպես նաև մինչ այդ Հայաստանից դուրս բնակվող և այլ պետության քաղաքացիություն ձեռք չբերած ու մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը հյուպատոսական հաշվառման կանգնած ծագումով հայ նախկին ՀԽՍՀ քաղաքացիները:*

Այս դրույթը հետագայում փոփոխվեց՝ սահմանափակելով ՀՀ քաղաքացիության իրավունք ունեցողների շրջանակը: Ներկայիս հոդված 10(3)-ի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են ճանաչվում Հայաստանի Հանրապետությունից դուրս բնակվող միայն ազգությամբ հայ նախկին ՀԽՍՀ այն քաղաքացիները, ովքեր ձեռք չեն բերել այլ պետության քաղաքացիություն: Պետք է նշել, որ օրենքի հոդված 10-ը անհարկիորեն սահմանափակող է թվում, երբ երրորդ կետով քաղաքացիներ է ճանաչում միայն ազգությամբ հայերին:

#### **1.4. ՀՀ միջազգային պարտավորությունները քաղաքացիության և ապաքաղաքացիության ոլորտում**

##### **1.4.1. Միավորված ազգերի կազմակերպություն**

Հայաստանն անդամակցել է Միավորված ազգերի կազմակերպությանը (ՄԱԿ) անկախությունից գրեթե անմիջապես հետո՝ 1992թ. մարտի 2-ից: ՀՀ Գերագույն խորհուրդը 1994թ. մարտի 16-ին վավերացրել է ապաքաղաքացիությանն առնչվող ՄԱԿ-ի երկու կոնվենցիաները՝ «Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին» 1954 թ. կոնվենցիան և «Ապաքաղաքացիության կրճատման մասին» 1961թ. կոնվենցիան: Կոնվենցիաները Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ են մտել 1994 թվականի



օգոստոսի 16-ից<sup>17</sup>:

Հայաստանը միացել է նաև քաղաքացիության և ապաքաղաքացիության հարցերի վերաբերյալ դրույթներ պարունակող՝ ՄԱԿ-ի մի շարք այլ պայմանագրերի, մասնավորապես՝ «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» 1966 թվականի կոնվենցիային, «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» 1966 թվականի միջազգային դաշնագրին, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» 1966 թվականի միջազգային դաշնագրին, «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» 1979 թվականի կոնվենցիային և «Երեխայի իրավունքների մասին» 1989 թվականի կոնվենցիային:

ՀՀ սահմանադրության համաձայն՝ միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են, և եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը<sup>18</sup>: Սակայն փորձը ցույց է տալիս, որ եթե միջազգային պայմանագրերի նորմերն ըստ պատշաճի արտացոլում չեն գտել ազգային օրենսդրությունում, դրանց արդյունավետ և լիարժեք կիրառումը մնում է միմիայն պատրանք:

#### 1.4.2. Եվրոպայի խորհուրդ

Հայաստանը անդամակցել է Եվրոպայի խորհրդին 2001թ. հունվարի 25-ից և վավերացրել է մոտ 54 փաստաթուղթ, ինչպես նաև ստորագրել է, սակայն դեռ չի վավերացրել մոտ 12 փաստաթուղթ<sup>19</sup>: Հայաստանը դեռևս չի միացել քաղաքացիության խնդիրներին առնչվող՝ եվրոպական ամենակարևոր իրավական փաստաթղթերին, մասնավորապես՝ «Քաղաքացիության մասին» 1997թ. եվրոպական կոնվենցիային և «Պետությունների իրավահաջորդության առնչությամբ ապաքաղաքացիության կանխարգելման մասին»

---

17 Տեղեկությունը տրամադրվել է ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից 2011թ. օգոստոսի 9-ի նամակով

18 ՀՀ սահմանադրության հոդված 6

19 Տես [http://coe.am/index.php?cat\\_id=37](http://coe.am/index.php?cat_id=37), կայքն այցելելու ամսաթիվը՝ 25 օգոստոս 2011թ.

կոնվենցիային:

Թեև ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը հանդիսանում է քաղաքացիության հարցերով լիազոր մարմին և «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի համաձայն իրավասու է հանդես գալ քաղաքացիության և ապաքաղաքացիության հարցերով միջազգային պայմանագրեր ստորագրելու նախաձեռնությամբ<sup>20</sup>, այնուամենայնիվ քաղաքացիության հարցերով Եվրոպայի խորհրդի կոնվենցիաներին միանալը այդ մարմնի օրակարգում չէ<sup>21</sup>: Այդ կոնվենցիաներին միանալը Եվրոպայի խորհրդի հայաստանյան գրասենյակի կողմից նույնպես չի նշվում առաջնահերթությունների շարքում: Եվրոպայի խորհրդի հայաստանյան գրասենյակում և Եվրոպայի խորհրդի պայմանագրերի գրասենյակում տեղեկացված չեն, թե արդյոք այդ կոնվենցիաներին միանալը քննարկվել է ՀՀ պետական մարմինների հետ և արդյոք վերջիններս պատրաստվում են ստորագրել այդ կոնվենցիաները տեսանելի ապագայում<sup>22</sup>:

---

20 «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» 2007թ. փետրվարի 22-ի ՀՀ օրենքի հոդված 8 և 20

21 2011թ. հուլիսի 20-ի հարցազրույց վարչության պետի հետ, որտեղ նա ի պատասխան այդ կոնվենցիաներին միանալու վերաբերյալ հարցադրմանը, առաջարկեց այդ հարցն ուղղել ՀՀ արտաքին գործերի նախարարությանը:

22 Տեղեկությունը տրամադրվել է Եվրոպայի խորհրդի հայաստանյան գրասենյակի կողմից:

## ԲԱԺԻՆ 2.

### ՀՀ քաղաքացիությունն ձեռք բերելը և կորցնելը

#### 2.1. 1961թ. Կոնվենցիայի հիմնական տարրերը

1961թ. Կոնվենցիան սահմանում է Հայաստանի միջազգային պարտավորությունները՝ ապաքաղաքացիության կրճատման ուղղությամբ: Հայաստանը վերապահումներ չի կատարել այդ Կոնվենցիայի որևէ հոդվածի վերաբերյալ:

1961թ. Կոնվենցիայի հոդվածներ 1-ից 4-ը վերաբերում են երեխաների ապաքաղաքացիության կանխմանը՝ պահանջելով Պայմանավորվող պետություններից քաղաքացիություն շնորհել իրենց տարածքում ծնված ցանկացած անձի, որն այլապես կդառնար քաղաքացիություն չունեցող անձ: Քաղաքացիության շնորհումը կարող է պայմանավորված լինել որոշակի նախապայմանների առկայությամբ, օրինակ՝ սահմանված ժամկետում մշտապես բնակվելը պետության տարածքում: Քաղաքացիությունը շնորհվում է ավտոմատ կերպով՝ ծնվելիս, կամ սահմանված կարգով դիմում ներկայացնելու միջոցով:

Կոնվենցիայի հոդված 2-ը պահանջում է, որ պետության տարածքում գտնվող ընկեցիկ երեխաներին շնորհվի այդ պետության քաղաքացիությունը:

Կոնվենցիայի հոդվածներ 5-ից 7-ը անդրադառնում են քաղաքացիությունը կորցնելուն կամ դրանից հրաժարվելուն առնչվող հարցերին, մասնավորապես պահանջելով, որ անձի կողմից քաղաքացիությունը կորցնելը կամ դրանից հրաժարվելը պայմանավորվի նրա կողմից այլ քաղաքացիություն ունենալու կամ ձեռք բերելու հանգամանքով: Ընդհանուր կանոնից հնարավոր երկու բացառությունները նախատեսում են հպատակագրված անձի կողմից քաղաքացիության կորուստը համապատասխան Պայմանավորվող պետության օրենսդրությամբ սահմանված ժամկետի ընթացքում արտասահմանում բնակվելու հետևանքով, որը չպետք է լինի յոթ հաջորդական տարիներից պակաս, եթե նա համապատասխան մարմնին չի հայտնում իր քաղաքացիությունը պահպանելու

մտադրության մասին, ինչպես նաև քաղաքացիության կորուստը արտերկրում ծնված քաղաքացիների կողմից, ովքեր չափահաս դառնալու պահին չեն բնակվում համապատասխան պետությունում՝ որոշակի պայմանների առկայության դեպքում:

Կոնվենցիայի հոդված 8-ը և 9-ը վերաբերում են քաղաքացիությունից զրկման դեպքերին: Կոնվենցիան արգելում է որևէ անձի զրկել իր քաղաքացիությունից, եթե զրկելն այդ անձին կդարձներ քաղաքացիություն չունեցող անձ: Որևէ անձի կամ անձանց խմբի չի կարելի զրկել քաղաքացիությունից՝ ռասայական, էթնիկական, կրոնական կամ քաղաքական հիմքերով: Այնուամենայնիվ, բացառիկ դեպքերում անձը կարող է զրկվել քաղաքացիությունից: Մասնավորապես, եթե քաղաքացիությունը ձեռք է բերվել կեղծ տեղեկություններ հայտնելու կամ խաբեության հետևանքով, կամ եթե տվյալ անձը հավատարմության երդում է տվել կամ հավատարմության պաշտոնական հայտարարություն է արել այլ պետության: Բացի կեղծ տեղեկություններ հայտնելու կամ խաբեության դեպքերից, պետությունը կարող է քաղաքացիությունից զրկման այլ հիմքերը կիրառել այն դեպքում, երբ Կոնվենցիայի ստորագրման պահին այն հայտարարել է այդ հիմքերը իր օրենսդրության մեջ պահպանելու մտադրության վերաբերյալ:

## **2.2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերումը**

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի հոդված 9-ի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը ձեռք է բերվում՝

1. քաղաքացիության ճանաչմամբ.
2. ծննդով.
3. քաղաքացիություն ստանալու միջոցով.
4. քաղաքացիությունը վերականգնելու միջոցով.
5. քաղաքացիության խմբային ձեռքբերման միջոցով.
6. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված հիմքերով.
7. օրենքով նախատեսված այլ հիմքերով:

### 2.2.1. Քաղաքացիության ձեռքբերումը ծննդով

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի հոդված 11-ը սահմանում է ծննդյան պահին ծագմամբ քաղաքացիություն ձեռք բերելու դրույթները.

*«Երեխան, ում ծնողները նրա ծնվելու պահին Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են, անկախ ծնվելու վայրից, ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:*

*Երեխան, ում ծնողներից մեկը նրա ծնվելու պահին Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, իսկ մյուսն անհայտ է կամ քաղաքացիություն չունեցող անձ, ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:*

*Այն դեպքում, երբ ծնողներից մեկը երեխայի ծնվելու պահին Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, իսկ մյուսը՝ օտարերկրյա քաղաքացի, երեխայի քաղաքացիությունը որոշվում է ծնողների գրավոր համաձայնությամբ:*

*Համաձայնության բացակայության դեպքում երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, եթե նա ծնվել է Հայաստանի Հանրապետությունում, կամ եթե Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք չբերելու դեպքում դառնում է քաղաքացիություն չունեցող անձ, կամ եթե ծնողները մշտապես բնակվում են Հայաստանի Հանրապետությունում»:*

**Հայաստանում ծնված՝ քաղաքացիություն չունեցող երեխաները**

1961թ. Կոնվենցիայի հոդված 1-ը պետություններից պահանջում է քաղաքացիություն շնորհել իրենց տարածքում ծնված ցանկացած

անձի, որն այլապես կդառնար քաղաքացիություն չունեցող անձ:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի հոդված 12-ը սահմանում է՝

*«Հայաստանի Հանրապետությունում ծնված երեխան, ում ծնողները քաղաքացիություն չունեցող անձինք են, ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն»:*

Այլ կատեգորիայի երեխաներ, որոնք կարող են ծննդյան պահին դառնալ ապաքաղաքացի, ընդգրկված չեն այս դրույթի կարգավորման շրջանակում, այդպիսով՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքը չի համապատասխանում 1961թ. Կոնվենցիայի պահանջներին: Այդ կատեգորիաները ներառում են, մասնավորապես, օտարերկրյա այնպիսի քաղաքացիներից ծնված երեխաներին, ովքեր հնարավորություն չունեն իրենց քաղաքացիությունը փոխանցել իրենց երեխաներին: «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքը անտեսում է այն փաստը, որ կան պետություններ, որոնք իրենց երկրի քաղաքացիությունը շնորհում են երեխայի՝ տվյալ պետության հյուպատոսական մարմիններում գրանցվելու կամ քաղաքացիության երկիր վերադարձի պայմանով, ինչպես նաև՝ կան երկրներ, որոնք չեն թույլատրում կանանց իրենց քաղաքացիությունը փոխանցել իրենց երեխաներին<sup>23</sup>: Ծնողի կողմից իր քաղաքացիությունը փոխանցելու, երեխային գրանցելու կամ քաղաքացիության երկիր վերադառնալու անհնարինությունը կարող է հանգեցնել ապաքաղաքացիության:

23 Օրինակ Իրանը, Լիբանանը և Մալազիան: Լրացուցիչ տեղեկություններ այդ խնդրի շուրջ կարելի է գտնել ՄԱԿ ՓԳՀ՝ Սեռերի հավասարության, քաղաքացիության մասին օրենքների և ապաքաղաքացիության վերաբերյալ ծանոթագրում, 8 մարտի 2012թ., որը հասանելի է <http://www.unhcr.org/refworld/docid/4f59bdd92.html> հասցեում.

## Ընկեցիկ երեխաները

Կոնվենցիայի հոդված 2-ը պահանջում է, որ պայմանավորվող պետության տարածքում հայտնաբերված երեխան, հակառակ ապացույցների բացակայության դեպքում, համարվի այդ տարածքում այդ պետության քաղաքացիություն ունեցող ծնողներից ծնված: «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի հոդված 20-ի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվող երեխան, որի ծնողներն անհայտ են, Հայաստանի Հանրապետության քաղաքացի է: Այդպիսով «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի հոդված 20-ը բավարարում է Կոնվենցիայի հոդված 2-ի նպատակը՝ ապահովելով ՀՀ քաղաքացիության շնորհումն այն երեխաներին, որոնց ծննդյան վայրը և ծնողներն անհայտ են:

## Ծնունդը նավի վրա կամ ինքնաթիռում

1961թ. Կոնվենցիայի հոդված 3-ի համաձայն՝ ծնունդը նավի վրա կամ ինքնաթիռում համարվում է տեղի ունեցած համապատասխանաբար այն պետության տարածքում, որի դրոշի ներքո լողում է նավը կամ այն պետության տարածքում, որտեղ գրանցված է ինքնաթիռը: «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքում նման դրույթ նախատեսված չէ:

## 2.2.2. Քաղաքացիության ձեռքբերումը հպատակագրման /նատուրալիզացիայի/ միջոցով

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի հոդված 13-ը սահմանում է հպատակագրման ընդհանուր պայմանները.

*«Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող 18 տարին լրացած, գործունակ, օտարերկրյա պետությունում բնակվող (գտնվող) կամ Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքով բնակվող (գտնվող) յուրաքանչյուր անձ իրավունք ունի դիմելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար, եթե՝*  
1) օրենքով սահմանված կարգով վերջին երեք տարին

*մշտապես բնակվել է Հայաստանի Հանրապետությունում.<sup>24</sup>*

- 2) կարող է բացատրվել հայերեն լեզվով և
- 3) ծանոթ է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը»:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքը նախատեսում է հպատակագրման արտոնյալ պայմաններ որոշակի կատեգորիայի անձանց համար՝ չկիրառելով բնակության և լեզվի վերաբերյալ պահանջները: Այդպիսիք են՝<sup>25</sup>

*1) անձինք, որ ամուսնացել են Հայաստանի Հանրապետության քաղաքացու հետ կամ ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացի երեխա.*

*2) անձինք, որոնց ծնողները կամ նրանցից մեկը նախկինում ունեցել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն կամ ծնվել է Հայաստանի Հանրապետությունում, և որոնք 18 տարին լրանալուց հետո՝ 3 տարվա ընթացքում, դիմել են Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար.*

*3) որը 1995 թվականի հունվարի 1-ից հետո, իր դիմումի հա-*

24 Պետք է նշել, որ երեք տարի մշտապես բնակվելու պահանջը չի վերաբերում կացության մշտական կարգավիճակի հիման վրա բնակությունը (որը ստանալու համար կպահանջվեր նախապես երեք տարի բնակություն ՀՀ-ում), այլ առհասարակ երեք տարի ընդհանուր առմամբ բնակությանը:

25 Նախքան 2007թ. միայն երեք տարվա բնակության պահանջն էր վերացվում, երբ անձը համապատասխանում էր այդ չափորոշիչներին: 2007թ. փոփոխությունից հետո, վերացվեցին թե բնակության երեք տարվա պահանջը և թե լեզվի իմացության պահանջը՝ բոլոր համապատասխան կատեգորիաների համար: Ավելին, այդ պահանջների վերացումից օգտվող անձանց կատեգորիաները համալրվեցին ևս երկուսով՝ անձինք, որոնց նախնիները ազգությամբ հայեր են և նախկին ՀՀ քաղաքացիները, որոնք 1995 թվականի հունվարի 1-ից հետո իրենց դիմումի համաձայն դուրս են եկել Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից:



*մաճայն, դուրս է եկել Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից:*

Հպատակագրման բոլոր պայմաններից ազատված են ազգությամբ հայերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությանը բացառիկ ծառայություններ մատուցած անձինք:

Նախքան Սահմանադրությամբ սահմանված՝ երկքաղաքացիության արգելքի վերացումը 2005թ. փոփոխություններով, այլ պետությունների քաղաքացիները կարող էին դիմել ՀՀ քաղաքացիություն ստանալու համար միայն այն բանից հետո, երբ կներկայացնեին ապացույց իրենց քաղաքացիությունից հրաժարվելու վերաբերյալ: «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքում 2007թ. կատարված փոփոխության արդյունքում նման պահանջ այլևս չի ներկայացվում ՀՀ քաղաքացիություն ստանալու համար դիմողներին: Այդպիսով, այլ պետությունների քաղաքացիները կարող են դառնալ ՀՀ երկքաղաքացիներ:

Քաղաքացիության դիմումները ընդունվում և դրանց ընթացք է տրվում ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից<sup>26</sup>: Այնուամենայնիվ, քաղաքացիություն շնորհելու վերաբերյալ որոշումները կայացվում են հանրապետության Նախագահի կողմից՝ հանրապետության Նախագահին առընթեր քաղաքացիության հարցերի հանձնաժողովի առաջարկությամբ: ՀՀ Նախագահի 1999թ. հրամանագրի համաձայն՝ հանձնաժողովը նախագահում է արդարադատության նախարարը: Հանձնաժողովի մյուս անդամներն են՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ներման, քաղաքացիության, պարզևների և կոչումների վարչության պետը (որը նաև Հանձնաժողովի քարտուղարն է), ՀՀ կառավարության ներկայացուցիչը, արտաքին գործերի նախարարի տեղակալը, պաշտպանության նախարարի տեղակալը, ազգային անվտանգության ծառայության տնօրենի առաջին

26 Հպատակագրման ենթակա անձինք, որոնց համար բնակության և լեզվի պահանջները պարտադիր պայման չեն հանդիսանում, կարող են իրենց դիմումը ներկայացնել այլ երկրներում գտնվող ՀՀ դեսպանություններ:

տեղակալը և ոստիկանության պետի առաջին տեղակալը:<sup>27</sup> Հանձնաժողովի անդամներն աշխատում են անհատույց<sup>28</sup>:

Հանձնաժողովը ՀՀ Նախագահին առընթեր խորհրդակցական մարմին է: Համաձայն իր կանոնադրության<sup>29</sup> Հանձնաժողովն իրականացնում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը վերականգնելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիության խմբային ձեռքբերման, Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցման վերաբերյալ դիմումների նախնական քննարկումը և դրանք ներկայացնում է ՀՀ նախագահին՝ իր առաջարկությունների հետ մեկտեղ: Հանձնաժողովի որոշումները կայացվում են ներկա անդամների ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասար բաշխման դեպքում որոշիչ է Հանձնաժողովի նախագահի ձայնը: Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ներման, քաղաքացիության, պարզևների և կոչումների վարչությունը պատասխանատու է Հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող փաստաթղթերի նախապատրաստման համար<sup>30</sup>:

Սույն հետազոտության ընթացքում խորհրդատուին չի հաջողվել կապ հաստատել Հանձնաժողովի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ներման, քաղաքացիության, պարզևների և կոչումների վարչության հետ<sup>31</sup>: Հետևաբար, հնարավոր չի եղել պարզել Հանձնաժողովի փաստացի դերը ՀՀ քաղաքացիության շնորհման հարցերով որոշումների

27 ՀՀ նախագահի 1999թ. հուլիսի 23-ի ՆՀ-349 հրամանագրի կետ 1

28 ՀՀ նախագահի 1999թ. հուլիսի 23-ի ՆՀ-350 հրամանագրի կետ 6

29 Հաստատված է ՀՀ նախագահի 1999թ. հուլիսի 23-ի ՆՀ-350 հրամանագրով

30 Նույնը, կետ 3, 7, 10.

31 Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ներման, քաղաքացիության, պարզևների և կոչումների վարչության պետն առաջարկեց այդ հարցով դիմել ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն: Հանձնաժողովի նախագահի հետ հանդիպումը չկայացավ հետազոտության ժամանակային սահմանափակումների պատճառով:

կայացման գործում և, մասնավորապես, թե որքանով է ՀՀ Նախագահը հիմնվում Հանձնաժողովի դիրքորոշման վրա կոնկրետ դեպքերում:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար գանձվում է պետական տուրք 1000 ՀՀ դրամի չափով<sup>32</sup>: Քաղաքացիություն ստացած անձը ընթերցում է երդման տեքստ հայերենով<sup>33</sup>:

Եթե քաղաքացիության դիմումը մերժվում է, անձը կարող է կրկին դիմել դիմումի մերժումից հետո մեկ տարի անց<sup>34</sup>:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դիմումը մերժվում է, եթե տվյալ անձն իր գործունեությամբ վնասում է պետական և հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանը և բարքերին, այլոց իրավունքներին և ազատություններին, պատվին և բարի համբավին:

Քաղաքացիության ստացումը կարգավորող ՀՀ օրենսդրական դաշտն ունի մի շարք թերություններ՝

- i. Անգործունակ անձինք չեն կարող Հայաստանում քաղաքացիություն ստանալ.
- ii. Քաղաքացիության դիմումի մերժումը կարող է չհիմնավորվել և ենթակա չէ դատական կարգով վերանայման.
- iii. Քաղաքացիության դիմումների քննարկման մեկամյա ժամկետը անհարկիորեն երկար է.
- iv. ՀՀ սահմանադրության և հայոց լեզվի իմացության ստուգ-

---

32 «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի հոդված 13

33 «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության» մասին օրենքի հոդված 13

34 «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության» մասին օրենքի հոդված 29

ման ընթացակարգը<sup>35</sup> սահմանող ՀՀ կառավարության որոշումից բխում է, որ նույնիսկ նրանք, ում համար լեզվի իմացության պահանջը հանվել է, պետք է լրացնեն թեսթ՝ հայերենով՝ ՀՀ սահմանադրության իմացության վերաբերյալ: Մյուս կողմից, օրենսդրորեն չի նախատեսվել այդ թեսթը հանձնելու հնարավորություն տվող որևէ ողջամիտ միջոց, ինչպես օրինակ թարգմանչի ծառայություններից օգտվելն է, ինչպես նաև դրա կարգը:

### *Անգործունակ անձանց կողմից քաղաքացիություն ստանալու հնարավորության բացակայությունը*

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի 2006թ. կոնվենցիան<sup>36</sup> ի թիվս այլոց սահմանում է անդամ պետությունների պարտավորությունները հաշմանդամություն ունեցող անձանց քաղաքացիության վերաբերյալ: Դրա 5-րդ հոդվածի համաձայն՝ անդամ պետությունները ճանաչում են, որ բոլոր անձինք հավասար են օրենքի առաջ և ունեն օրենքով սահմանված հավասար պաշտպանության ու հնարավորությունների իրավունք: Նույն կոնվենցիայի 18(1)(ա) հոդվածով սահմանված է, որ անդամ պետությունները ճանաչում են հաշմանդամություն ունեցող անձանց՝ քաղաքացիություն ունենալու իրավունքը՝ այլոց հետ հավասար հիմունքներով՝ այդ թվում ապահովելով հաշմանդամություն ունեցող անձանց՝ քաղաքացիություն ձեռք բերելու իրավունքը:

Ավելին, Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 26-րդ հոդվածը և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածը արգելում են խտրականությունը որևէ հիմքով:

Ներկայումս գործունակությունը պարտադիր պայման է քաղաքացիության մասին օրենքի 13-րդ հոդվածի համաձայն քաղաքացիություն ստանալու մասին դիմում ներկայացնելու համար: Թվում է, թե սա հակասում է հաշմանդամություն ունեցող անձանց՝

35 ՀՀ կառավարության 2007թ. օգոստոսի 30-ի թիվ 1040-Ն որոշում

36 Այդ կոնվենցիան ՀՀ համար ուժի մեջ է մտել 2010թ. հոկտեմբերի 22-ին:

խտրականությունից զերծ մնալու իրավունքին՝ սահմանված Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայով և մարդու իրավունքների վերաբերյալ այլ փաստաթղթերով:

*Չպատճառաբանված մերժումներ և դատական վերանայման հնարավորության բացակայություն*

Թեև քաղաքացիության շնորհումը միշտ հանդիսացել է պետության բացառիկ իրավասություն, այնուամենայնիվ պետության անսահմանափակ լիազորությունը, որը բացառում է գործադիր մարմնի որոշման դատական կարգով վերանայման հնարավորությունը, հակասում է այդ ոլորտում առկա միջազգային լավագույն փորձին:

Մասնավորապես, ՀՀ սահմանադրությունը նախատեսում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք<sup>37</sup>:

«Քաղաքացիության մասին» 1997թ. եվրոպական կոնվենցիան սահմանում է, որ քաղաքացիության ձեռքբերման մասին որոշումները պետք է պարունակեն գրավոր պատճառաբանություն, և որ այդ որոշումները պետք է ենթակա լինեն վերանայման՝ վարչական կամ դատական կարգով<sup>38</sup>:

ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից ներկայացված տեղեկությունների համաձայն՝ 1997-2007թթ. ընթացքում ՀՀ քաղաքացիություն է շնորհվել 1735 անձի, 2008թ.-ին՝ 1554 անձի, 2009թ.-ին՝ 4323 անձի և 2010թ.-ին՝ 9588 անձի: Բոլոր այս անձինք ձեռք են բերել ՀՀ քաղաքացիություն նատուրալիզացիայի միջոցով: Այլ հիմքերով (ճանաչում, վերականգնում և այլն) քաղաքացիություն ձեռք բերած անձանց թվի մասին տվյալներ առկա չեն: Նաև հայտնի չէ, թե քաղաքացիություն ստացած անձանցից քանիսն է եղել քաղաքացիություն չունեցող անձ (միակ բացառությունը թերևս Ադրբեջանից գաղթականների թվի մասին վիճակագրական տվյալներն են: Այդ անձինք քաղաքացի-

37 ՀՀ սահմանադրության հոդված 18

38 «Քաղաքացիության մասին» 1997թ. եվրոպական կոնվենցիայի հոդվածներ 11 և 12

ություն են ստացել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի 10(2) հոդվածի համաձայն): Քաղաքացիության ստացման վերաբերյալ դիմումների թվի կտրուկ աճը թերևս պայմանավորված է 2005թ. սահմանադրական հանրաքվեի արդյունքում երկքաղաքացիության արգելքի վերացմամբ: ՀՀ քաղաքացիություն ստացած անձանց մեծամասնությունը ազգությամբ հայ երկքաղաքացիներ են: Դիմողների ծագման երկրի վերաբերյալ նույնպես վիճակագրական տվյալներ չեն վարվում<sup>39</sup>:

ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ մերժվածների թիվը կազմում է քաղաքացիության համար դիմած անձանց թվի 0.1 տոկոսից ոչ ավելին: Որպես կանոն, մերժման հիմք է հանդիսանում ազգային անվտանգության ծառայության բացասական եզրակացությունը: Այսպես են հիմնավորվել երկու մերժման դեպքերը քաղաքական ակտիվիստներ պրն. Ժ. Ս.-ի և Ս. Հ. -ի դեպքում (երկուսն էլ Լեռնային Ղարաբաղի պատերազմի մասնակիցներ են): Պարոն Ժ.Ս.-ն ապրել է Հայաստանում ավելի քան 20 տարի և չի լքել ՀՀ սահմանները 12 տարվա ընթացքում: Նա Լիբանանի քաղաքացի է, սակայն իր լիբանանյան անձնագրի ժամկետը լրացել է: Նա երեք անգամ ներկայացրել է քաղաքացիություն ստանալու դիմում և մերժվել է այն հիմնավորմամբ, որ նրան ՀՀ քաղաքացիություն շնորհելը նպատակահարմար չէ ազգային անվտանգության տեսանկյունից<sup>40</sup>:

### *Դիմումների քննարկման մեկամյա ժամկետը*

Քաղաքացիության դիմումների քննարկման մեկամյա ժամկետն անհարկի երկար է թվում մի շարք այլ երկրների լավագույն փորձի տեսանկյունից՝ հատկապես քաղաքացիություն ստանալու

39 ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ ՀՀ քաղաքացիություն ստանալու համար դիմում են ավելի քան 30 երկրների ներկայացուցիչներ՝ Արգենտինայից, Բրազիլիայից, Ավստրալիայից, Ռուսաստանից, Ղազախստանից և մի շարք այլ երկրներից:

40 2011թ. օգոստոսի 4-ին իրավաբան պրն. Վ. Գրիգորյանի հետ հարցազրույց, որը խորհրդատվություն է տրամադրել նրան՝ հպատակագրման դիմումների գծով:

պարզեցված ընթացակարգի առումով:<sup>41</sup> Այդ առումով, հետաքրքիր է դիտարկել Վրաստանի փորձը, որտեղ քաղաքացիություն ստանալու դիմումների քննարկումն ընդհանուր առմամբ չի կարող գերազանցել եռամսյա ժամկետը,<sup>42</sup> կամ ՌԴ փորձը, որտեղ պարզեցված ընթացակարգով դիմումների քննարկման ժամկետը չի կարող գերազանցել վեցամսյա ժամկետը,<sup>43</sup> ինչպես նաև Ղրղզստանի փորձը, որտեղ ընդհանուր ժամկետը չի կարող գերազանցել վեց ամիսը, մինչդեռ պարզեցված ընթացակարգով ժամկետը չի կարող գերազանցել երեք ամիսը<sup>44</sup>:

### *ՀՀ սահմանադրության իմացությունը*

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքով որոշ կատեգորիայի անձանց համար հայոց լեզվի իմացության պահանջը վերացվել է: Այդ անձինք, այդուհանդերձ, պետք է հանձնեն ՀՀ սահմանադրության իմացության գրավոր թեստ հայոց լեզվով: Ոչ օրենքը, ոչ էլ կառավարության համապատասխան որոշումը չեն անդրադառնում այն հարցին, թե ինչպես այդ անձինք պետք է հանձնեն թեստը և, մասնավորապես, ինչպես պետք է օգտվեն թարգմանչի ծառայություններից՝ գրավոր թեստը լրացնելու համար: Միևնույն մտահոգությունը կարող է նաև վերաբերել երդմանը, որը պետք է ընթերցել հայերեն լեզվով<sup>45</sup>:

### **Փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց հպատակագրման պարզեցված ընթացակարգը**

---

41 Հարկ է նշել, որ երբ սույն գեկույցը դեռևս նախապատրաստման փուլում էր, ՀՀ ոստիկանությունը շրջանառության մեջ էր դրել օրենքի նախագիծ, որով առաջարկվում էր քաղաքացիություն ստանալու դիմումների քննարկման ժամկետը կրճատել մինչև վեց ամիս: Զեկույցը վերջնականացնելու պահին այդ նախագիծը դեռևս քննարկվում էր ՀՀ կառավարությունում:

42 Վրաստանի քաղաքացիության մասին օրենքի հոդված 38

43 ՌԴ քաղաքացիության մասին օրենքի հոդված 35 /4/

44 Ղրղզստանի քաղաքացիության մասին օրենքի հոդված 37

45 «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի հոդված 13

«Փախստականների կարգավիճակի վերաբերյալ» 1951թ. կոնվենցիայի (1951թ. Կոնվենցիա) հոդված 34-ով և 1954թ.-ի Կոնվենցիայի հոդված 32-ով նախատեսված են համապատասխանաբար փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց հպատակագրումը հեշտացնելու պարտավորություններ: Մասնավորապես, Պայմանավորվող պետությունները պետք է գործադրեն ամեն ջանք, որպեսզի արագացնեն փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց հպատակագրման գործընթացը և հնարավորինս նվազեցնեն դրա հետ կապված գանձումներն ու ծախսերը:

Նատուրալիզացիայի վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում հատուկ դրույթներ փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց վերաբերյալ: Այդուհանդերձ, Հայաստանում բնակվող քաղաքացիություն չունեցող անձինք ճանաչվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացի՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի 10(2) հոդվածի, ըստ որի՝

*Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են ճանաչվում՝*

*Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձինք կամ օտարերկրյա քաղաքացի չհանդիսացող նախկին ԽՍՀՄ այլ հանրապետությունների քաղաքացիները, ովքեր մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը<sup>46</sup> դիմում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու համար:*

46 Պետք է նշել, որ երբ սույն զեկույցը դեռևս նախապատրաստման փուլում էր, ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությունը շրջանառության մեջ էր դրել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծ: Օրենքի նախագծով առաջարկվում է քաղաքացիության մասին օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ժամկետը երկարացնել մինչև 2014թ. դեկտեմբերի 31-ը: Զեկույցը վերջնականացնելու պահին, նախագիծը հաստատվել էր ՀՀ կառավարության կողմից, սակայն դեռևս չէր ընդունվել ՀՀ Ազգային ժողովի կողմից:



Սա նշանակում է, որ լիազորված մարմին ներկայացրած՝ մտադրության մասին հայտարարությունը բավարար է տվյալ քաղաքացիություն չունեցող անձին ՀՀ քաղաքացի ճանաչելու համար՝ առանց լրացուցիչ հաստատումների:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ քաղաքացիության մասին օրենքի հոդված 10(2)-ը նախատեսում է ժամկետային սահմանափակում, հարկ է, որ ապագայում օրենսդիրը դիտարկի օրենքը փոփոխելու հնարավորությունը՝ քաղաքացիություն չունեցող անձանց կողմից ՀՀ քաղաքացիություն ստանալու պարզեցված ընթացակարգ նախատեսելու նպատակով:

Քաղաքացիության մասին օրենքը պետք է նաև փոփոխվի՝ նախատեսելու համար փախստականների հպատակագրման հեշտացված կարգ՝ 1951թ. Կոնվենցիայի 34-րդ հոդվածին համապատասխան:

## **2.3. ՀՀ քաղաքացիությունը կորցնելը**

### **2.3.1. Քաղաքացիության կորուստը կարգավիճակի փոփոխման, ծնողական իրավունքի ճանաչման և ծնողի կամ ամուսնու քաղաքացիության կորստի դեպքերում**

Ամուսնության կամ ամուսիններից մեկի քաղաքացիության փոփոխման հետևանքով քաղաքացիության կորստի առումով «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի հոդված 6-ով նախատեսվում է հետևյալը՝

*«Հայաստանի Հանրապետության քաղաքացու ամուսնությունն օտարերկրյա քաղաքացու հետ ինքնին քաղաքացիության փոփոխման չի հանգեցնում:*

*Ամուսիններից մեկի քաղաքացիության փոխելը ինքնին չի հանգեցնում մյուս ամուսնու քաղաքացիության փոփոխմանը»:*

Համանման կերպով օրենքով չի ենթադրվում քաղաքացիության կորուստ՝ ամուսնության դադարեցման դեպքում:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին»

օրենքով սահմանվում են երեխաների քաղաքացիության կորստի վերաբերյալ հետևյալ դրույթները՝ ծնող/ներ/ի քաղաքացիության փոփոխման դեպքում, խնամակալության կամ հոգաբարձության ներքո գտնվող երեխաների համար, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիների կողմից որդեգրված երեխաների վերաբերյալ:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի հոդված 17-ով սահմանված է՝

*«Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցրած ծնողների երեխան կորցնում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը, եթե նա ձեռք է բերում այլ պետության քաղաքացիություն»:*<sup>47</sup>

Այս դրույթը, որն անդրադառնում է ծնողներից երկուսի քաղաքացիության կորստի դեպքերին, համապատասխանում է 1961թ. Կոնվենցիայի հոդված 6-ի պահանջներին, քանի որ այն ՀՀ քաղաքացիության կորուստը պայմանավորում է այլ պետության քաղաքացիության ձեռքբերմամբ:

Այնուամենայնիվ օրենքով չի սահմանվում միևնույն պահանջը այն դեպքում, երբ ծնողներից միայն մեկն է կորցնում ՀՀ քաղաքացիությունը.

*«Եթե ծնողներից մեկը կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը, իսկ մյուսը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, ապա նրանց երեխան կորցնում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը, եթե առկա է ծնողների համաձայնությունը, կամ եթե երեխան բնակվում է Հայաստանի Հանրապետությունից դուրս, և առկա է Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող ծնողի համաձայնությունը»:*

47 14-18 տարեկան երեխաների մասով «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի 17-րդ հոդվածը սահմանում է, որ նրանք կորցնում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը իրենց գրավոր համաձայնության առակայության դեպքում:

Միևնույն բացն առկա է նաև «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի հոդված 21-ում, որը սահմանում է հետևյալը՝

*«Հայաստանի Հանրապետության քաղաքացի երեխան, որի նկատմամբ հաստատված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների խնամակալություն կամ հոգաբարձություն, պահպանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը՝ անկախ նրա ծնողների կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու հանգամանքից: Նման դեպքում երեխան կարող է դուրս գալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից ծնողների դիմումով, եթե նրանք զրկված չեն ծնողական իրավունքից»:*

Այստեղ նույնպես օրենքով ՀՀ քաղաքացիությունը կորցնելու համար նախապայման չի սահմանվում այլ քաղաքացիություն ունենալը կամ ձեռք բերելը:

Օտարերկրյա քաղաքացու կողմից որդեգրված երեխաների համար «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության» մասին օրենքի 19-րդ հոդվածը սահմանում է հետևյալը՝

*«Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխան, որին որդեգրել են օտարերկրյա քաղաքացիները կամ այնպիսի ամուսիններ, որոնցից մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, իսկ մյուսը՝ օտարերկրյա քաղաքացի, պահպանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը: Նման դեպքում երեխան կարող է փոխել քաղաքացիությունը միայն որդեգրողների դիմումով: Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխան, որին որդեգրել են քաղաքացիություն չունեցող անձինք, կամ որդեգրած ամուսիններից մեկը քաղաքացիություն չունեցող անձ է, իսկ մյուսը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի, պահպանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը»:*

Այսօր, օրենքից չի բխում, որ տեղի է ունենում քաղաքացիության ավտոմատ կորուստ՝ որդեգրման արդյունքում: Այնուամենայնիվ, ապաքաղաքացիության ռիսկը գոյություն ունի, քանի որ առկա է հնարավորություն, որ որդեգրողները կարող են դիմում ներկայացնել երեխայի քաղաքացիությունը փոխելու վերաբերյալ, և այդ առումով առկա չեն երաշխիքներ, որոնց արդյունքում քաղաքացիության կորուստը հնարավոր կլիներ միմիայն այն դեպքում, եթե անձը ստանար այլ քաղաքացիություն՝ ինչպես նախատեսված է 1961թ. Կոնվենցիայի հոդված 7(1)(ա)-ով:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքը չի սահմանում քաղաքացիության կորուստ արտասամուսնական կապից ծնված երեխայի համար՝ ծնողական իրավունքի ճանաչման արդյունքում: Ավելին, այն տարբերակում չի դնում արտասամուսնական և ամուսնական կապից ծնված երեխաների միջև՝ քաղաքացիության ձեռքբերման, պահպանման, վերականգնման կամ կորստի հետ կապված հարցերում:

### 2.3.2. Քաղաքացիությունից հրաժարումը

ՀՀ քաղաքացու կողմից քաղաքացիությունից հրաժարման հարցերը կարգավորվում են «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի հոդված 24-ով, որը սահմանում է հետևյալը՝

*«Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի փոխել քաղաքացիությունը՝ դուրս գալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից և ձեռք բերել այլ պետության քաղաքացիություն:*

*Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու մասին քաղաքացու դիմումը մերժվում է, եթե՝*

- 1) նրա նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում.*
- 2) նրա նկատմամբ կա դատարանի օրինական ուժի մեջ մտած և կատարման ենթակա դատավճիռ կամ վճիռ.*
- 3) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից նրա դուրս գալը հակասում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության շահերին.*

*4) նա ունի պետության հանդեպ չկատարված պարտավորություններ»:*

Վերը նշված դրույթից ակնհայտ է դառնում, որ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքով սահմանված չէ, որ քաղաքացիության կորուստը հնարավոր է միմիայն այն դեպքում, երբ անձը ստանում է այլ քաղաքացիություն կամ այլ երկրի քաղաքացիություն ստանալու վերաբերյալ պաշտոնական հավաստիացում՝ համաձայն 1961թ. Կոնվենցիայի հոդված 7(1)(ա)-ի, որով, մասնավորապես, սահմանվում է, որ քաղաքացիությունից հրաժարումը չի առաջացնում քաղաքացիության կորուստ, եթե տվյալ անձը չունի կամ ձեռք չի բերել այլ քաղաքացիություն:

Որպես այս բացը լրացնելու ակնհայտ ջանքերի արդյունք՝ 2012թ. նոյեմբերին Հայաստանի կառավարությունը ընդունեց որոշում<sup>48</sup>, որով նախատեսված է, որ անձինք, ովքեր ցանկանում են հրաժարվել ՀՀ քաղաքացիությունից պետք է ներկայացնեն տեղեկանք՝ տրված այլ պետության իրավասու մարմնի կողմից, որով հավաստվում է այդ պետության քաղաքացիությունը ձեռք բերելու իրավական հնարավորությունը: Քաղաքացիության ձեռքբերման իրավական հնարավորություն մասնավորապես նշանակում է, որ անձը համապատասխանում է տվյալ երկրի քաղաքացիությունը ձեռք բերելու համար օրենքով նախատեսված չափորոշիչներին:

Կառավարության այս որոշումը գովելի միջանկյալ միջոց է գոյություն ունեցող բացը լրացնելու համար՝ նախքան քաղաքացիության մասին օրենքում փոփոխություն կատարելը: Քանի որ քաղաքացիության դադարեցման մերժման հիմքերը նախատեսված են քաղաքացիության մասին օրենքով, իրավական հստակության տեսանկյունից առավել նպատակահարմար կլինի այլ պետության քաղաքացիության ձեռքբերման հավաստիացման պահանջը ևս նախատեսել այդ օրենքով:

1961թ. Կոնվենցիայի հոդված 7(1)-ի համաձայն՝ քաղաքացիությունից հրաժարումը չպետք է առաջացնի քաղաքացիության կորուստ, եթե տվյալ անձը չունի կամ ձեռք չի բերել այլ քաղաքացիություն: «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության

48 ՀՀ կառավարության 2012թ. նոյեմբերի 29-ի N 1552-Ն որոշում

մասին» օրենքը, ինչպես նաև կիրարկող օրենսդրությունը պետք է նախատեսեն այս էական երաշխիքը՝ ապահովելու համար, որ ՀՀ քաղաքացիության դադարեցումը զուրկ կլինի իրավական ուժից, եթե այլ քաղաքացիությունը փաստացի ձեռք չի բերվում: Պրակտիկայում եղել են դեպքեր, երբ անձինք, ովքեր ձեռք չեն բերել այլ պետության քաղաքացիություն ՀՀ քաղաքացիությունից հրաժարվելուց հետո ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից փաստաթղթավորվել են որպես քաղաքացիություն չունեցող անձինք:

### **2.3.3. Քաղաքացիությունից զրկելը/ քաղաքացիությունը դադարեցնելը**

Ինչպես նշվեց վերևում, ՀՀ սահմանադրության հոդված 30.1-ով սահմանվում է, որ ոչ ոք չի կարող զրկվել ՀՀ քաղաքացիությունից: Այդ դրույթից միակ բացառությունը նախատեսված է հոդված 43-ով, որով սահմանվում են սահմանադրական իրավունքներից օգտվելու առումով ընդհանուր սահմանափակումները:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի 23 հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցվում է՝

8. Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու դեպքում.
9. կեղծ փաստաթղթերի կամ կեղծ տվյալների հիման վրա քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում.
10. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված հիմքերով:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի դրույթը, որը թույլ է տալիս կեղծիքի հիման վրա ձեռք բերված քաղաքացիության դադարեցում, ունի երկու մտահոգող թերություն: Առաջինը՝ առկա չէ ժամանակային սահմանափակում քաղաքացիությունից զրկելու համար, երկրորդ՝ հաշվի չի առնվում կեղծիքի լրջությունը:

Սա համահունչ չէ համաչափության հիմնարար սկզբունքի հետ, որն ամրագրված է միջազգային դատական պրակտիկայում:

*Ռոդրանի* գործով Արդարադատության եվրոպական դատարանը 2010թ. մարտի 2-ի որոշմամբ վճռել է, որ համաձայն 1961թ. Կոնվենցիայի հոդված 8(2)-ի՝ պետությանն արգելված չէ անձին զրկել իր քաղաքացիությունից, անգամ եթե նա դառնա քաղաքացիություն չունեցող անձ, այն դեպքում, եթե քաղաքացիությունը ձեռք է բերվել տվյալ անձին վերագրելի խաբեության, կեղծ տեղեկատվության կամ կարևոր փաստերը թաքցնելու միջոցով: Այնուամենայնիվ, համաչափության սկզբունքի պահպանումը պարտադիր է:

Բացի այդ, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի 14 հոդվածը չի պարունակում քաղաքացիության դադարեցման հետ կապված ընթացակարգային երաշխիքներ, որոնք նախատեսված են 1961թ. Կոնվենցիայի հոդված 8(4)-ով: Վերջինս մասնավորապես սահմանում է, որ ըստ հոդված 8(2)-ի, ոչ մի Պայմանավորվող պետություն չի իրականացնում քաղաքացիությունից զրկելու իրավասությունն այլ կերպ, քան օրենքին համապատասխան, որը նախատեսում է շահագրգիռ անձի՝ դատարանում կամ այլ անկախ մարմնում իր գործի արդար քննության իրավունք: Տվյալ համատեքստում «արդար քննության իրավունք» մասնավորապես նշանակում է, որ տվյալ անձի՝ կեղծիքով կամ խաբեությամբ քաղաքացիությունը ձեռք բերած լինելը քննելիս շահագրգիռ անձին պետք է տրվի դատարանում կամ այլ անկախ մարմնում իր գործի արդար քննության և իր փաստարկները ներկայացնելու իրավունք: Ռուսաստանի Դաշնության և Տաջիկստանի օրենքներով, մասնավորապես, այս իրավունքը ներառվել է դրույթի տեսքով, համաձայն որի՝ դիտավորյալ կերպով կեղծ փաստաթղթեր ներկայացնելու փաստը պետք է հաստատվի դատական կարգով:

Եզրափակելով սույն բաժինը, պետք է նշել, որ ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում քաղաքացիության կորստի, ինչպես նաև ծննդյան պահին ապաքաղաքացիության կանխման առնչությամբ բավարար երաշխիքներ՝ ըստ 1961թ. Կոնվենցիայի: Բացի այդ, թափանցիկության և հիմնավորված որոշումների բացակայությունը հպատակագրման գործընթացներում, ինչպես նաև բացասական որոշման վարչական կամ դատական կարգով վերանայման բացակայությունը կարող են բացասաբար ազդել քաղաքացիություն չունեցող անձանց հպատակագրման հնարավորությունների վրա: «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մա-

սին» օրենքում բացակայում են նաև 1961թ. կոնվենցիայի հոդված 8(4)-ով նախատեսված ընթացակարգային երաշխիքները՝ կապված խաբեության կամ կեղծիքի հիման վրա քաղաքացիությունից զրկելու/քաղաքացիությունը դադարեցնելու հետ: Այս թերությունները վերացնելու համար պետք է դիտարկել բաժին 6-ում ներկայացված կոնկրետ առաջարկությունները:



### ԲԱԺԻՆ 3.

## Ապաքաղաքացիության պատճառները Հայաստանում

### 3.1. Ապաքաղաքացիության վերաբերյալ վիճակագրական տվյալները

Երկրում քաղաքացիություն չունեցող անձանց վերաբերյալ վերջին վիճակագրական տվյալները հիմնված են 2001թ. կայացած մարդահամարի արդյունքների վրա: Ըստ դրա արդյունքների, ՀՀ-ում 13,951 անձ իրեն համարում է քաղաքացիություն չունեցող անձ: Դրանցից 574-ը երբևէ չեն փոխել իրենց բնակության վայրը և միշտ բնակվել են Հայաստանում: Ընդհանուր առմամբ 12,679 անձ է ժամանել Հայաստան այլ երկրներից/վայրերից. 698-ը՝ Արցախից, 11,702-ը՝ Ադրբեջանից, 66-ը՝ Վրաստանից, 118-ը՝ Ռուսաստանից:

Մնացած 698-ը չեն նշել իրենց նախկին բնակության վայրը: Ինչ վերաբերում է մարդահամարի ժամանակ իրենք իրենց քաղաքացիություն չունեցող անձ որակած անձանց ծագմանը, նրանցից 13,733-ը հայեր են, 75-ը՝ ռուսներ և 74-ը բուլղարացիներ: Միայն 69 անձ չի նշել իր ծագումը: 2001թ. մարդահամարի ժամանակ իրենք իրենց քաղաքացիություն չունեցող անձ որակած անձինք հանրապետությունում տեղաբաշխված են եղել աջակողմյան աղյուսակում ներկայացված բաշխմամբ<sup>49</sup>:

2001թ. մարդահամարի տվյալները	
Մարզ	Անձինք
Արմավիր	613
Արարատ	3902
Արագածոտն	312
Գեղարքունիք	1840
Լոռի	608
Կոտայք	512
Շիրակ	199
Սյունիք	1876
Վայոց Ձոր	332
Տավուշ	751
Երևան	2344
<i>Ընդամենը</i>	<i>13,951</i>

49 Համաձայն ԱՎԾ-ի ինտերնետային կայքում հասանելի տվյալների, <http://armstat.am/am/?nid=52>.

Դժվար է արժանահավատ եզրահանգումներ անել վերը նշված մարդահամարի արդյունքներով, քանի որ դրանք հիմնված են եղել նշված անձանց սեփական դիրքորոշման վրա, և պետական մարմինների կողմից որևէ գործողություն չի ձեռնարկվել նրանց փաստացի կարգավիճակը ճշտելու ուղղությամբ: Սեփական կարգավիճակի սխալ որակումը կարող է պայմանավորված լինել տարբեր պատճառներով: Օրինակ՝ անձը կարող է սխալ ընկալել «քաղաքացիություն չունեցող անձ» և «քաղաքացի» հասկացությունները և կարող է հստակ պատկերացում չունենալ իր՝ քաղաքացիություն ունենալու կամ չունենալու մասին<sup>50</sup>: Ավելին, 2001թ.-ին իրենք իրենց քաղաքացիություն չունեցող որակած անձանց մեծ մասը հավանական է, որ արդեն ստացած լինեն ՀՀ քաղաքացիություն: Բացի այդ, այդ անձանց մի մասը կարող է արդեն արտագաղթած լինել Հայաստանից կամ մահացած լինել:

Անչափ դժվար է նաև միանշանակ կերպով կապ սահմանել ապաքաղաքացիության և այդ անձանց նախկին բնակության վայրերի միջև: Կարելի է հավաստիորեն ասել, որ իրենք իրենց քաղաքացիություն չունեցող անձ որակած անձանց մեծամասնությունը Հայաստան ներգաղթել են Ադրբեջանից, Վրաստանից և Ռուսաստանից՝ 1980-ականներին և վաղ 1990-ականներին այդ երկրներում տիրող տարածաշրջանային բախումների հետևանքով: Սա մասնավորապես վերաբերում է արցախյան պատերազմին, որի արդյունքում տեղի ունեցավ Ադրբեջանից և Արցախից բնակչության մեծ ներգաղթ, վրաց-աբխազական բախմանը, որի հետևանքով էթնիկ հայերը ներգաղթեցին Աբխազիայից Հայաստան, ինչպես նաև ՌԴ և Չեչնիայի միջև տեղի ունեցած երկու պատերազմներին:

2001թ. մարդահամարի ժամանակ օգտագործված հարցաշարի հիմնական թերությունն այն էր, որ այն չէր պարունակում հարցեր, որոնք թույլ կտային օգտագործել մարդահամարի արդյունքները՝ ՀՀ-ում բնակվող քաղաքացիություն չունեցող բնակչության թվի ու նկարագրի և ապաքաղաքացիության պատճառների վերաբերյալ ավելի լավ պատկերացում կազմելու համար: 2011թ. կայացած մար-

50 Տես *Ապաքաղաքացիության չափումը բնակչության մարդահամարի միջոցով*: ՄԱԿ ՓԳՀ քարտուղարության ծանոթագիր, 13 մայիսի 2008թ.

դահամարը որոշ չափով փորձեց վերացնել այդ թերությունները՝ ներառելով ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակի առաջարկած հարցերը: Մասնավորապես, բնակության վայրը փոխած անձանց մասով ներառվել էր լրացուցիչ հարց այն մասին, թե ինչու են նրանք փոխել իրենց բնակության վայրը: Պատասխանի տարբերակներից էին՝ «այլ երկրներում ռազմական գործողությունները», «ռասայական, էթնիկ, կրոնական, սոցիալական որոշակի խմբերի պատկանելության, կամ քաղաքական հայացքների համար հետապնդվելու հիմնավոր երկյուղ», «ընտանեկան պատճառներ», «հայրենադարձություն» և այլն: 2011թ. մարդահամարի արդյունքները կիրառարակվեն ոչ շուտ, քան 2012թ. վերջում:

Բացի 2001թ. մարդահամարի անարժանահավատ արդյունքներից, քաղաքացիություն չունեցող անձանց վերաբերյալ առկա պաշտոնական միակ տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանում փաստաթղթավորված քաղաքացիություն չունեցող անձանց թիվը 11-ն է 2012թ. հունվարի դրությամբ: Երկրում ապաքաղաքացիության իրավիճակի հետ կապված որևէ լրացուցիչ հետազոտություն՝ իրականացված ազգային վիճակագրական ծառայության այլ ստորաբաժանումների, սոցիոլոգիական կազմակերպությունների, կրթական հաստատությունների կամ անհատների կողմից, չի հայտնաբերվել սույն ուսումնասիրության շրջանակներում:

### **3.2. Օրենսդրությունում առկա թերություններից բխող ապաքաղաքացիություն**

ՀՀ քաղաքացիության ձեռքբերման առնչությամբ օրենսդրության ամենաէական թերություններից մեկն այն է, որ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքում առկա չեն երաշխիքներ Հայաստանում ծնված յուրաքանչյուր երեխայի ապաքաղաքացիությունը կանխելու համար: Սա արդեն քննարկվել է 2.2.2 կետում:

Այս թերության արդյունքում ապաքաղաքացի դարձած երեխաների վերաբերյալ վիճակագրական տվյալներ առկա չեն: Անձնագրային և վիզաների վարչությունը չի ընդունել այս բացի առկայությունը՝ հիմնավորելով, որ գործնականում, եթե Հայաստանում օտարերկրյա քաղաքացիներից ծնված երեխան հնարավորություն

չունենա ձեռք բերել իր ծնողների քաղաքացիությունը, նա ձեռք կբերի ՀՀ քաղաքացիություն<sup>51</sup>: Այնուամենայնիվ, Վարչությունը չի նշել այնպիսի դեպք, երբ նման հանգամանքների բերումով երեխան ձեռք բերած լինի ՀՀ քաղաքացիություն: Բացի այդ, Վարչությունը նաև չի նշել, թե որոնք են նման ձեռքբերման հիմքերը՝ օրենքի ուժով, թե դիմումի հիման վրա, ինչպես նաև կիրառելի ընթացակարգը և բավարարման ենթակա պահանջները:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի դրույթները քաղաքացիությունից հրաժարման մասին նույնպես խնդրահարույց են, քանի որ դրանք կարող են հանգեցնել ապաքաղաքացիության: Անձնագրային և վիզաների վարչության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն<sup>52</sup>, 2009-ից մինչև 2011թ. հուլիսը ՀՀ քաղաքացիությունը դադարեցրել է 1,194 անձ, որոնցից 236-ը՝ 2011թ. առաջին վեց ամիսների ընթացքում: Պարզ չէ, թե այդ անձանցից քանիսն են ունեցել այլ քաղաքացիություն՝ ՀՀ քաղաքացիությունից հրաժարման պահին:

Անձնագրային և վիզաների վարչության տրամադրած տեղեկատվության համաձայն, միայն 11 անձ ունի քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ 2012թ. հունվարի դրությամբ<sup>53</sup>: Ենթադրվում է՝ նրանք բոլորը հանդիսացել են ՀՀ քաղաքացիներ և հրաժարվել են քաղաքացիությունից՝ այլ երկրի քաղաքացիություն ձեռք բերելու նպատակով: Նրանցից ոչ ոք չի ստացել այլ պետության քաղաքացիություն, և անձնագրային և վիզաների վարչությունը նրանց փաստաթղթավորել է որպես քաղաքացիություն չունե-

51 Հարցազրույց Վարչության պետի հետ, 20 հուլիսի 2011թ.

52 Հարցազրույց Վարչության պետի հետ, 28 հուլիսի 2011թ.

53 Համաձայն ՀՀ արդարադատության նախարարության Միջազգային իրավական հարաբերությունների վարչության ավագ մասնագետի տրամադրած տեղեկատվության, կան ևս 19 անձինք, որոնք ստացել են քաղաքացիություն չունեցող անձի կացության կարգավիճակ: Նրանց փաստաթղթերի վավերականության ժամկետը լրացել է, և նրանք չեն դիմել այն երկարաձգելու համար: Առկա չէ տեղեկություն նրանց կողմից որևէ քաղաքացիություն ստացած լինելու մասին: Հարկ է, սակայն, նշել, որ արդարադատության նախարարությունը քաղաքացիություն չունեցող անձանց վերաբերյալ պաշտոնական տեղեկություններ տրամադրող իրավասու մարմինը չէ:

ցող անձինք՝ չնայած 1961թ. Կոնվենցիայի այն դրույթին, որ քաղաքացիության կորուստը չի կարող իրավական ուժ ունենալ, քանի դեռ անձը ձեռք չի բերել այլ երկրի քաղաքացիություն<sup>54</sup>:

Այդ 11 անձանցից միայն մեկի հետ է հաջողվել կապ հաստատել: Նա Երևանի բնակիչ է և դիմել է ՀՀ քաղաքացիությունից հրաժարվելու համար 1999թ.: Քաղաքացիության դադարեցման դիմումում նշված այն հարցին, թե «Որ երկրի քաղաքացիություն եք պատրաստվում ձեռք բերել», նա պատասխանել է՝ «Այն երկրի քաղաքացիությունը, որը կհամաձայնի ինձ քաղաքացիություն շնորհել»: Երբ անձնագրային և վիզաների վարչության աշխատակիցները մերժել են նրա դիմումը բավարարել առանց նրա կողմից իր ապագա քաղաքացիությունը նշելու, նա իր գրառումը փոփոխել է՝ նշելով «ԱՄՆ քաղաքացիություն», թեև նա որևէ մտադրություն չունեի ԱՄՆ քաղաքացիություն ձեռք բերելու<sup>55</sup>:

ՀՀ քաղաքացիությունից հրաժարվելու մասին նրա դիմումը բավարարվել է 2000թ.: Այդ պահից սկսած նա չի դիմել որևէ այլ երկրի քաղաքացիություն ստանալու համար: Նա ապրում է ծայրաստիճան աղքատության պայմաններում: Երևանի կենտրոնում գտնվող նրա բնակարանը օտարվել է պետության և հասարակության կարիքների համար, և, իր պնդմամբ, նա վտարվել է բնակարանից նախքան համապատասխան դատական ակտի ուժի մեջ մտնելը: Իր խոսքերով՝ նա չի հասցրել հավաքել իրերը, իսկ նրա բոլոր փաստաթղթերը ոչնչացել են: Արդյունքում, նա չի կարողացել դիմել և ստանալ պետական նպաստ: Նա այժմ 59 տարեկան է, վատառողջ, և գոյատևում է միայն բարեկամների օժանդակության շնորհիվ: Նա դիմում է ներկայացրել Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ իր գույքի օտարման դիմաց օրինական փոխհատուցում ստանալու համար: Նա նաև պատրաստում է երրորդ դիմումը ՀՀ սահմանադրական դատարան ներկայացնելու համար (նրա առաջին դիմումը բավարարվել է սահմանադրական դատարանի կողմից, սակայն պետական մարմինների կողմից չի

54 Կոնվենցիայի հոդված 7(1)

55 «Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն» ՀԿ 2006-2007թթ. Հաշվետվություն

կատարվել)<sup>56</sup>: Նա, այնուամենայնիվ, չի նշել, թե արդյոք իր իրադրությունն ուղղակի կամ անուղղակի կերպով հետևանք է իր ապաքաղաքացիության: Բացի այդ, նա երբեք մտադրություն չի ունեցել դիմելու ՀՀ քաղաքացիության վերականգնման համար, թեև «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքով նման հնարավորություն նախատեսվում է:

Երկրորդ անձը, որը պաշտոնապես փաստաթղթավորված է որպես քաղաքացիություն չունեցող անձ, հաշվառված է Գյումրիում (Շիրակի մարզ): Նա հասանելի չէր, սակայն նրա հարևանները տեղեկացրեցին, որ նա արդեն մի քանի տարի է, ինչ բնակվում է Գերմանիայում: Նրա ներկայիս քաղաքացիության կարգավիճակի մասով որևէ տեղեկություն հայտնի չէ:

Երրորդ քաղաքացիություն չունեցող անձը հաշվառված է Կապանում (Սյունիքի մարզ): Ըստ նրա եղբոր տրամադրած տեղեկությունների, նա Հայաստանից մեկնել է Գերմանիա մի քանի տարի առաջ և վերադարձել է Հայաստան միմիայն ՀՀ քաղաքացիությունից հրաժարվելու նպատակով: Այնուհետև նրան տրվել է քաղաքացիություն չունեցող անձի կացության կարգավիճակ և նա լքել է Հայաստանը՝ մեկնելով Գերմանիա, որտեղ էլ ստացել է Գերմանիայի քաղաքացիություն:

Չորրորդը Երևանի բնակիչ է, որը ՀՀ քաղաքացիությունից հրաժարվել է 1998թ.<sup>57</sup> և 2009թ. ստացել է քաղաքացիություն չունեցող անձի կացության կարգավիճակ, սակայն անձնագրային և վիզաների վարչությունից այն չի վերցրել, քանի որ կարծում է, որ այն չի համապատասխանում 1954թ. Կոնվենցիայի պահանջներին: Հայաստանի վարչական դատարանում արված հայտարարության

56 Այս տեղեկատվությունը սուկ ներկայացնում է 2011թ. օգոստոսի 8-ին տված հարցազրույցի ընթացքում տվյալ անձի ներկայացրած տեղեկությունները

57 Նրա հետ կապ հաստատել չհաջողվեց, սակայն նրա դեպքի վերաբերյալ որոշ հանգամանքներ հայտնի են 2008թ. հոկտեմբերի 3-ին վարչական դատարանի կայացրած որոշումից, որը կայացվել է նրա հարցմանը արտաքին գործերի նախարարության ներկայացրած պատասխանում պարունակվող տեղեկությունները հերքելու նրա պահանջի վերաբերյալ:

համաձայն՝ նա համարում է, որ ձեռք չի բերել ՀՀ քաղաքացիություն, քանի որ երբեք համաձայնություն չի տվել նման քաղաքացիություն ձեռք բերելուն: Նա ցանկանում էր ստանալ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ՝ Մեծ Բրիտանիայի քաղաքացիություն ստանալու համար: Առ այսօր նա ձեռք չի բերել որևէ պետության քաղաքացիություն:

Հինգերորդ փաստաթղթավորված քաղաքացիություն չունեցող անձը Ախուրյան գյուղից է (Շիրակի մարզ): Ըստ նրա զարմիկի, նա բնակվում է Ռուսաստանի Դաշնությունում: Նա հրաժարվել է ՀՀ քաղաքացիությունից՝ ՌԴ քաղաքացիություն ստանալու համար, սակայն նրան դա չի հաջողվել, քանի որ ՌԴ օրենսդրությունում կատարվել են փոփոխություններ: Նա նախատեսում է վերադառնալ ՀՀ իր վիզայի ժամկետի ավարտին:

Քաղաքացիություն չունեցող վեցերորդ անձի հարևանը, որն ապրում է Մասիսում (Արարատի մարզ), մեզ տեղեկացրեց, որ նա մեկնել է Լեհաստան շատ տարիներ առաջ: Նրան քաղաքացիություն չունեցող անձի կացության կարգավիճակ է տրվել 2011թ. մարտին:

Յոթերորդ փաստաթղթավորված քաղաքացիություն չունեցող անձի մայրը մեզ տեղեկացրեց, որ նրա որդին ներկայումս բնակվում է Ռուսաստանի Դաշնությունում և ներկայացրել է դիմում ՌԴ քաղաքացիություն ստանալու համար:

Հնարավոր չէրավ կապվել մնացած չորս փաստաթղթավորված քաղաքացիություն չունեցող անձանց հետ, որոնք բոլորը հաշվառված են Երևանում:

### **3.3. Վարչական գործելակերպեր, որոնք կարող են հանգեցնել ապաքաղաքացիության**

Վարչական մի շարք գործելակերպեր կարող են հետաձգել կամ կանխել անձանց՝ ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու իրավունքի իրականացումը, կամ որոշակի դեպքերում կարող են ստեղծել ապաքաղաքացիության վտանգ: Օրինակ՝

1. Քաղաքացիության ճանաչման վերաբերյալ կիրարկող օրենսդրության բացակայության պարագայում տարած-

քային անձնագրային ծառայությունների աշխատակիցները տեղյակ չեն իրենց պարտականություններից և թե ինչպիսի ընթացակարգերի նրանք պետք է հետևեն: Արդյունքում ստեղծվել է իրադրություն, երբ ՀՀ-ում բնակվող և քաղաքացիության իրավունք ունեցող անձանցից ոմանք 20 տարի շարունակ չեն կարողացել ստանալ քաղաքացիության պատճենական ճանաչում և ստանալ ՀՀ քաղաքացու անձնագիր:

2. Հայաստանում մշտական բնակության վայր չունեցող քաղաքացիները հնարավորություն չեն ունեցել անձնագիր ստանալ՝ իրենց իրադրության վերաբերյալ հստակ սահմանված ուղեցույցի բացակայության պատճառով:
3. Արական սեռի քաղաքացիները դժվարությունների են հանդիպել անձնագիր ստանալու հարցում, քանի որ անձնագրային ծառայությունները բոլորից պահանջել են զինվորական հաշվառման փաստաթղթեր, թեև այդ պահանջը վերաբերում է միայն զինապարտներին<sup>58</sup>:

Վերը նշված խնդրահարույց հարցերը առավել մանրամասնորեն քննարկված են ստորև:

## **Քաղաքացիության ճանաչումը**

Ինչպես նշված է վերևում, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի հոդված 10-ը սահմանում է ՀՀ քաղաքացիության իրավունք ունեցող անձանց կատեգորիաները, սակայն չի սահմանում, թե ինչպես պետք է որոշվի այդ իրավունքի առկայությունը: «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի 28(3) հոդվածը համապատասխան կարգը սահմանելու իրավասությունը վերապահում է կառավարությանը՝ մասնավորապես նախատեսելով, որ այն սահմանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը: Թեև դա վերաբերում է ցանկացած հիմքով քաղաքացիության ձեռքբերմանը (քաղաքացիության ճանաչում, քաղաքացիության ստացում և այլն), առ այսօր ՀՀ կառավարության կողմից նման ցանկ սահմանող միայն մեկ որոշում է

58 ՀՀ կառավարության 1998թ. դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշման կետ 11



ընդունվել, որով հղում է արվում «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի 28(2) հոդվածին, սակայն այն անդրառանում է միայն քաղաքացիություն ստանալու միջոցով քաղաքացիության ձեռքբերմանը<sup>59</sup>:

Անձնագրային և վիզաների վարչության կողմից համապատասխան կարգավորման բացակայությունը բացատրվել է կառավարության մեկ այլ որոշման առկայությամբ, որով կարգավորվում է Հայաստանի անձնագրային համակարգը: Վերջինս իր հերթին վերաբերում է ՀՀ քաղաքացիներին անձնագրերի տրամադրման ընթացակարգին, և հիմնված է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի մեկ այլ հոդվածի վրա, որով ՀՀ կառավարությունից պահանջվում է ՀՀ քաղաքացիությունը հավաստող փաստաթղթերի ձևակերպման և դրանք քաղաքացիներին տրամադրելու ընթացակարգի սահմանում<sup>60</sup>: Այդպիսով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի հոդված 10-ի համաձայն քաղաքացիության ճանաչման գծով որևէ կիրարկող օրենսդրություն գոյություն չունի, որը կսահմաներ քաղաքացիների սկզբնական կազմում ընդգրկվելու իրավունքի որոշման մանրամասն ընթացակարգ: Հարց է առաջանում՝

- Ո՞վ է համարվում ՀՀ-ում մշտապես բնակվող, և ինչպես է դա ապացուցվում.<sup>61</sup>

---

59 ՀՀ կառավարության 2007թ. նոյեմբերի 23-ի թիվ 1390-Ն որոշում

60 «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի հոդված 28(2)

61 ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տրամադրած տեղեկության համաձայն՝ պրակտիկայում սա ապացուցվում է ՀՀ-ում ըստ բնակության վայրի հաշվառված լինելու փաստով կամ տեղական մարմինների տրամադրած տեղեկանքի հիման վրա:

- Ո՛վ է համարվում նախկին ՀԽՍՀ քաղաքացի.<sup>62</sup>
- Ինչ փաստաթղթեր պետք է ներկայացնի անձը կամ ինչ գործողություններ պետք է իրականացնի քաղաքացի ճանաչվելու իր իրավունքն ապացուցելու համար.
- Ինչ ժամկետում պետք է քննարկվեն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի հոդված 10-ի համաձայն ներկայացված դիմումները<sup>63</sup>.
- Ինչ չափանիշներ են գործում այն դեպքում, երբ անձը հնարավորություն չունի բավարարել որոշակի պահանջներ՝ իր

62 ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տրամադրած տեղեկության համաձայն՝ նրանք անձինք են, որոնց տրամադրվել է ԽՍՀՄ անձնագիր՝ Հայաստանի Խորհրդային Հանրապետության անձնագրային մարմինների կողմից, կամ ծննդյան վկայական՝ Հայաստանի Խորհրդային Հանրապետության քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների կողմից: Վերջին գործոնը այնուամենայնիվ բավարար պայման չէ ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու համար: Մասնավորապես «Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն» ՀԿ 2006-2007թթ Հաշվետվության 22-րդ էջում, Ադրբեջանից փախստականի դեպքում, վերջինս Հայաստան է եկել ծննդից մի քանի օր անց և ծննդյան վկայական է ստացել ՀՀ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների կողմից: Այդպիսով, ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տրամադրած տեղեկության համաձայն՝ նա հանդիսանում է նախկին Հայաստանի Խորհրդային Հանրապետության քաղաքացի, սակայն չի համարվում ՀՀ քաղաքացի, քանի որ փախստական է:

63 ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տրամադրած տեղեկության համաձայն՝ 11.12.2008թ. ՀՀ կառավարության որոշմամբ ՀՀ քաղաքացուն անձնագրի տրամադրման համար սահմանվում է 5-օրյա ժամկետ: Այնուամենայնիվ, այս դրույթը վերաբերում է անձնագրի տրամադրման այն դեպքերին, երբ տվյալ անձը հայտնի է որպես քաղաքացի, և չի սահմանում, թե ինչպիսի ժամկետում պետք է լիազորված մարմինը որոշի տվյալ անձի՝ ՀՀ քաղաքացի ճանաչվելու իրավունքի առկայությունը՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 10-ի, մի գործընթաց, որն ակնհայտորեն ավելի երկար ժամանակ է պահանջում, քան հինգ աշխատանքային օրը:

վերահսկողությունից դուրս գտնվող պատճառներով:

Ստորև բերված օրինակները ներկայացնում են առանձնահատուկ բարդություններ պարունակող դեպքերը.

Դեպք 1. Անձնագրային ծառայությունը մերժել է քննության առնել նախկին ԽՍՀՄ քաղաքացու դիմումը, ով 1990-ականների սկզբին տեղափոխվել էր Հայաստան վրաց-աբխազական հակամարտության ժամանակ: Հետագայում փոստով ներկայացված նրա դիմումը մնացել էր անպատասխան: Ավելի քան 15 տարի Հայաստանում բնակվող անձից դիմումը չընդունելու բանավոր պարզաբանումն այն էր, որ նա պետք է անձամբ գնա Աբխազիա և դուրս գա իր նախկին բնակության վայրի հաշվառումից: Որևէ նորմատիվ ակտով նման պահանջ սահմանված չէ, սակայն դա այնուամենայնիվ գործնականում կիրառվել է: Ավելին, տվյալ անձը չի կարողացել բավարարել այդ պահանջը, քանի որ չի ունեցել սահմանը հատելու համար վավեր փաստաթուղթ: Միայն մարդու իրավունքների պաշտպանի միջամտությամբ անձնագրային և վիզաների վարչության աշխատակիցները հարցում են կատարել Աբխազիայի լիազոր մարմինն՝ տվյալ անձին հաշվառումից հանելու վերաբերյալ.<sup>64</sup>

Դեպք 2. Անձը, ով ծնվել է Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունում, լքել է հանրապետությունը նախքան ԽՍՀՄ-ի փլուզումը: 1998թ նա բնակություն է հաստատել Հայաստանում: Նա չուներ անձը հաստատող փաստաթուղթ և ի վիճակի չի եղել որոշել իր քաղաքացիության կարգավիճակը ու ստանալ քաղաքացու անձնագիր, նախքան մարդու իրավունքների պաշպանի միջամտությունը 2007թ.<sup>65</sup>:

Դեպք 3. Հայաստանի Խորհրդային Հանրապետության պետական մարմիններից ԽՍՀՄ անձնագիր ստացած

---

64 Տեղեկատվությունը կարող եք գտնել <http://ombuds.am/main/am/9/34/> կայքում

65 Նույնը

անձը 1991թ.-ին Հայաստանից մեկնել է Աբխազիա: Նա կորցրել է իր ԽՍՀՄ անձնագիրը: Միայն 2009թ.-ին է նրան հաջողվել հստակեցնել իր կարգավիճակը և ստանալ քաղաքացու անձնագիր, այն բանից հետո, երբ իր խնդրով սկսել է զբաղվել մարդու իրավունքների հարցերով զբաղվող ՀԿ: Անձնագրային մարմինները այս դեպքում ևս պահանջել են, որ նա անձամբ գնա Աբխազիա և դուրս գա տեղի հաշվառումից<sup>66</sup>:

Դեպք 4. Ռուսաստանի դաշնությունում ԽՍՀՄ անձնագիր ստացած անձը 1998թ.-ին բնակություն է հաստատել Հայաստանում: Նրան հաջողվել է ՀՀ անձնագիր ստանալ միայն 2009թ.: Դժվարությունը կայանում էր նրանում, որ ՀՀ-ում ՌԴ դեսպանության միջոցով ՌԴ-ի հաշվառումից դուրս գալը ձգձգվում էր զանազան բարդությունների պատճառով:

## Մշտական բնակության վայր չունեցող անձինք

Համաձայն ՀՀ Կառավարության՝ անձնագրային համակարգի կանոնադրությունը հաստատելու մասին 1998թ. որոշման, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների անձնագրերը տրվում են ըստ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների մշտական, ժամանակավոր կամ փաստացի բնակության վայրի<sup>67</sup>: Եթե անձը բնակվում է որոշակի վայրում ոչ մշտական հիմունքով, և բնակավայրի սեփականատերը դեմ է նրա՝ տվյալ վայրում հաշվառվելուն, կամ եթե տվյալ վայրը բնակելի տարածք չէ, տարածքային ոստիկանության տեսուչը նշում է կատարում առ այն, որ տվյալ անձը փաստացի բնակվում է տվյալ վայրում, և այդ վայրը դառնում է բնակչության ռեգիստրում տվյալ անձի հաշվառման հիմք (առանց որի նրան անձնագիր հնարավոր չի տալ): Մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպություններն ու մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը հայտնել

66 Տես Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ 2008-2009թթ Հաշվետվությունը

67 ՀՀ կառավարության 1998թ. դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշման կետ 10

են, որ նրանք հաճախ են հանդիպում տեսուչների անբարեխիղճ աշխատանքի, այդ թվում ստուգման բացակայության դեպքերի, ստուգման դեպքերի առանց զգուշացման՝ աշխատանքային ժամերին, երբ տանը ոչ ոք չկա, ինչպես նաև եղել են դեպքեր, երբ տեսուչը չի նշել անձի փաստացի բնակության վայրը՝ պատճառաբանելով, որ վստահ չէ, որ անձը մեկ այլ վայր չի տեղափոխվի ստուգումից հետո: Արդյունքում որոշ անձինք չեն կարողացել ստանալ անձնագիր, քանի դեռ որևէ ՀԿ կամ մարդու իրավունքների պաշտպանը չեն միջամտել<sup>68</sup>: Թեև այդ անձինք քաղաքացիություն չունեցող անձինք չեն, փաստաթղթերի բացակայությունը նրանց համար հետագայում ապաքաղաքացիության ռիսկ է ստեղծում: Մինևույն իրադրությունն է դիտարկվել նաև ստորև ներկայացված անձանց պարագայում:

## Զինվորական հաշվառման փաստաթղթերը

Անձնագիր ստանալու համար զինապարտները պետք է ներկայացնեն զինվորական հաշվառման փաստաթղթեր՝ այլ պահանջվող փաստաթղթերի հետ միասին: «Զինապարտ» սահմանումը տրված է «Զինապարտության մասին» ՀՀ օրենքով.

*Զինապարտներ են համարվում նախազորակոչային(16-18), զորակոչային (18-27) տարիքի և պահեստազորում հաշվառված արական, ինչպես նաև զինվորական մասնագիտություն ունեցող կամ զինվորական ծառայություն անցած իգական սեռի քաղաքացիները:<sup>69</sup>*

Անկախ այս սահմանումից, տարածքային անձնագրային ծառայությունները զինվորական հաշվառման փաստաթղթեր են պահանջել արական սեռի բոլոր քաղաքացիներից<sup>70</sup>, անգամ եթե

68 Հարցազրույցներ Ա.Գ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ –ի իրավաբանի և մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հետ, 19 հուլիսի 2011թ.

69 «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի հոդված 3

70 Տես ՎԴ2/0285/05/10 գործով ՀՀ վարչական դատարանի 10 նոյեմբերի 2010թ. որոշումը

նման փաստաթղթեր չունենալը պայմանավորված է համապատասխան զինվորական մարմինների կողմից նրանց զինվորական հաշվառումը չիրականացնելով, որի արդյունքում նրանք չեն ծառայել բանակում: Եթե դա այդպես է, և անձը այլևս չի համապատասխանում զինապարտի սահմանմանը (մասնավորապես, եթե նրա տարիքը 27-ից բարձր է), զինվորական հաշվառման փաստաթղթերի պահանջը չպետք է կիրառվի նրա նկատմամբ: «Զինապարության մասին» ՀՀ օրենքի հոդված 4-ի համաձայն՝ զինվորական հաշվառումը հանդիսանում է լիազորված զինվորական մարմնի պարտականությունը: Այդպիսով, եթե նրանք ինչ-որ պատճառով չեն իրականանցում տվյալ անձի զինվորական հաշվառումը, ապա վերջինս չպետք է որևէ կերպ տուժի նման թերացման բացասական հետևանքներից:

### **3.4. Ապաքաղաքացիություն՝ անհատական հանգամանքների բերումով**

#### **3.4.1. Նախկին Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների քաղաքացիները**

Առկա չէ որևէ պաշտոնական տեղեկատվություն դեռևս ԽՍՀՄ անձնագիր ունեցող անձանց մասին: Այնուամենայնիվ, ոչ պաշտոնական աղբյուրները, այդ թվում մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ՀԿ-ների զեկույցները<sup>71</sup>, ծնունդների գրանցման մասնագիտացված հարցումների արդյունքները<sup>72</sup>, ինչպես նաև ազգային փոքրամասնությունները ներկայացնող ՀԿ-ների տրամադ-

71 «Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն» ՀԿ 2006-2007թթ. Հաշվետվության 11-րդ էջում նկարագրված է երկու անձանց դեպք, ովքեր չեն ցանկացել դառնալ ՀՀ քաղաքացի և համարել են, որ իրենք պետք է այդ մասին տային իրենց համաձայնությունը:

72 Ինչպես նշում է Հայ Օգնության Միության նախագահը, 2009թ. ծննդի գրանցում չունեցող երեխաների բացահայտման ուղղությամբ կատարված հետազոտության արդյունքում ի հայտ եկան ծնողներ, ովքեր ունեին ԽՍՀՄ անձնագիր, ինչի հետևանքով նրանց երեխաների ծննդյան փաստը չի գրանցվել: Սա է նշվել որպես երեխաների ծնունդը չգրանցելու պատճառ նաև մի շարք մարզերի մարզպետարանների՝ երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների կողմից:

րած տեղեկությունները ցույց են տալիս, որ դեռևս կան անձինք, որոնց միակ անձը հաստատող փաստաթուղթը անվավեր էՍՀՄ անձնագիրն է:

Մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող մի ՀԿ, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանը<sup>73</sup> անդրադարձել են մի հետաքրքիր դեպքի, երբ Վրաստանի Խորհրդային Հանրապետությունում ծնված երեխան ստացել է ծննդյան վկայական՝ նախքան Հայաստանի Հանրապետություն տեղափոխվելը: Նա ընդունվել է գիշերօթիկ դպրոց առանց անձը հաստատող փաստաթղթերի: Չափահաս դառնալուց հետո նրան զորակոչել են բանակ, թեև նա չունի ՀՀ քաղաքացիություն: Բանակից վերադառնալուց հետո ևս նրան չի հաջողվել ձեռք բերել ՀՀ անձնագիր կամ քաղաքացիություն չունեցող անձի կացության վկայական: Թեև ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը ընդունել է, որ նա չունի Վրաստանի քաղաքացիություն, այնուամենայնիվ մերժել է վերջինիս քաղաքացիություն չունեցող անձի կացության վկայական տալ, քանի որ նա ծառայել է ՀՀ զինված ուժերում: Միայն մարդու իրավունքների պաշտպանի միջամտությամբ վարչությունը համաձայնվել է նրան տալ կացության վկայականը: Սակայն երիտասարդը վերջին պահին հրաժարվել է այն ընդունել, քանի որ դրա տրամադրման հիմքերը «կեղծ» կլինեին<sup>74</sup>: Նա դեռևս առանց անձը հաստատող փաստաթղթերի է և նրա քաղաքացիությն կարգավիճակը պարզ չէ:

Ի տարբերություն նախկին Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության, այլ նախկին Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների քաղաքացիներին ավտոմատ կերպով չի շնորհվում ՀՀ քաղաքացիություն: Նրանք պետք է հայտարարեն ՀՀ քաղաքացիություն ստանալու իրենց մտադրության մասին մինչև 2012թ. դեկտեմբերի 31-ը<sup>75</sup>: Այնուամենայնիվ, եղել են դեպքեր, երբ նրանցից պահանջվել է անցնել հպատակագրման գործընթաց, համաձայն «Հայաստանի Հանրապետու-

---

73 Երկուսն էլ առնչվել են միևնույն դեպքի հետ

74 Տպավորություն կա, որ նա զորակոչվել է մեկ այլ անձի փոխարեն

75 «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի հոդված 10(2)

թյան քաղաքացիության մասին» օրենքի հոդված 13-ի<sup>76</sup>: Նման դեպքերը մասնավորապես առնչվում են նորանկախ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների քաղաքացիություն ձեռք բերած անձանց, որոնք ստիպված են եղել հրաժարվել իրենց քաղաքացիությունից և անցնել հպատակագրման գործընթացի միջով՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի հոդված 13-ի<sup>77</sup>: Այնուամենայնիվ, եթե նույնիսկ նրանք ստացել են այլ երկրի քաղաքացիություն, կարելի է ենթադրել, որ նրանք ունեն նաև ՀՀ քաղաքացիության իրավունք՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի հոդված 10(2)-ի, այլ պետությունների քաղաքացիությունից հրաժարվելուց հետո:

### 3.4.2. Ազգային փոքրամասնությունները

Ազգային փոքրամասնությունները ներկայացնող ՀԿ-ների ներկայացուցիչներից շատերը, որոնց հետ մենք կապ ենք հաստատել ուսումնասիրության ընթացքում, առնաձևապես կամ առհասարակ պատկերացում չեն ունեցել ապաքաղաքացիության խնդիրների վերաբերյալ: Շատերը նշում էին, որ իրենց համայնքում առհասարակ չեն հանդիպել քաղաքացիություն չունեցող անձի: Այդպիսով, առկա չէ որևէ վկայություն այն մասին, որ կան ազգային փոքրամասնություններ, որոնք ունեն ապաքաղաքացիության կամ դրա դիսկի առաջացման խնդիր՝ համաձայն այն ՀԿ-ների տրամադրած տեղեկատվության, որոնց հետ մենք կապ ենք հաստատել: Հունական համայնքը ներկայացնող ՀԿ-ն հիշատակեց մի կնոջ պատմություն, որն ունի ԽՍՀՄ անձնագիր՝ տրված Ռուսաստանում: Նա ծնվել է Հայաստանում և ապրում է Լոռու մարզում: Նրան մի քանի անգամ տեղեկացրել են տեղական անձնագրային բաժանմունքից, որ նա ավտոմատ կերպով ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք չունի, սակայն նա կարող է դիմել ՀՀ քաղաքացիություն ստանալու համար՝ հպատակագրման գործընթացի միջոցով<sup>78</sup>:

76 Արմինե Կարախանյան, «ՀՀ քաղաքացիության ձեռքբերումը ԽՍՀՄ կազմալուծումից հետո», էջ 9: Հասանելի է <http://law.aua.am/files/2012/02/acquisition.pdf>.

77 Նույնը

78 Կնոջ քրոջ հետ հարցազրույցից



Ասորական համայնքը ներկայացնող ՀԿ-ն հիշատակեց մի ասորի կնոջ դեպք, որը ստացել է ՌԴ քաղաքացիություն 2000թ.՝ հիմնվելով իր ԽՍՀՄ քաղաքացիության վրա: Նա 2003թ. եկել է Հայաստան կարճ ժամանակով, սակայն չի կարողանում վերադառնալ տուն, այն հիմնավորմամբ, որ նրան ռուսական անձնագիրը տրվել է առանց համապատասխան հիմքերի: Նա այժմ բնակվում է Արտաշատի շրջանի Վերին Դվին գյուղում և ներկայումս փորձում է ստանալ քաղաքացիություն չունեցող անձի կացության վկայական, որը նրան թույլ կտա վերադառնալ ՌԴ, որտեղ ապրում է նրա ընտանիքը:

Ուկրաինական համայնքը ներկայացնող ՀԿ-ն հիշատակեց մի շարք դեպքեր, երբ մարդիկ հրաժարվել են ՀՀ քաղաքացիությունից՝ Ուկրաինայի քաղաքացիություն ձեռք բերելու համար, և հակառակը՝ երբ հրաժարվել են Ուկրաինայի քաղաքացիությունից՝ ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու համար (գոյություն ունեցող քաղաքացիությունից հրաժարվելը ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու նախապայմաններից մեկն էր՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի հոդված 13-ի՝ նախքան երկքաղաքացիության ռեժիմի ընդունումը): ՀԿ-ից հայտնեցին, որ համաձայն իրենց ունեցած տեղեկությունների, այդ անձանց հաջողվել է ստանալ իրենց ցանկացած քաղաքացիությունը:

Քրդական երկու ՀԿ նկարագրեցին յոթ քրդերի իրադրությունը (որոնցից երկուսը՝ կանայք), որոնք հանդիսանում են Քրդական աշխատավորական կուսակցության անդամ և որոնք հետապնդվել ու ազատագրվման են դատապարտվել ՀՀ սահմանի ապօրինի հատման համար 2011թ.-ին: Ազատագրվման ընթացքում նրանք դիմել են ապաստան ստանալու համար, սակայն նրանց դիմումները մերժվել են: ՀԿ-ները նշում են, որ այդ քրդերը չունեն անձը հաստատող փաստաթղթեր և նրանք չեն պատկանում որևէ երկրի: Միգրացիոն պետական ծառայության տեղեկատվության համաձայն, սակայն, նրանցից մի քանիսը ներկայացել են որպես Թուր-

քիայի, մյուսները՝ Իրաքի քաղաքացիներ<sup>79</sup>:

«Եզդիաքրդական համայնք» կոչվող ՀԿ-ն նշել է, որ իրենց համայնքի մոտ 20 անդամներ, որոնք ներկայումս ապրում են Ռուսաստանում, դիմել են իրենց՝ Ռուսաստանի քաղաքացիություն ստանալու նպատակով օժանդակության խնդրանքով: Նրանք ծնվել են Հայկական ԽՍՀ-ում, սակայն երբեք չեն դիմել ՀՀ անձնագիր ստանալու համար: ՀԿ-ն նաև տեղյակ էր մի դեպքից, երբ անձը, ով ներկայումս ունի ԽՍՀՄ անձնագիր և բնակվում է Հայաստանում, ի վիճակի չէ ձեռք բերել ՀՀ քաղաքացիություն, քանի որ հաշվառված է Ռուսաստանի Դաշնությունում:

Ի լրումն վերը նշված ազգային փոքրամասնությունների, ՀՀ-ում կան նաև այլ փոքրամասնություններ, այդ թվում՝ լիտվացիներ, կենտրոնական ասիացիներ, ադրբեջացիներ, թաթարներ, պարսիկներ, հնդիկներ, աֆղաններ և արաբներ: Նրանցից շատերն ապրում են Հայաստանում՝ ամուսնացած լինելով հայերի հետ, որը նրանց իրավունք է տալիս ստանալ ՀՀ քաղաքացիություն պարզեցված ընթացակարգով, այսինքն՝ առանց բնակության և լեզվի պահանջների<sup>80</sup>: Ոմանք ստացել են կացության կարգավիճակ որպես ներգաղթյալներ կամ գործարարներ<sup>81</sup>:

Հայաստանում ապրում են նաև էթնիկ ենթախմբեր, ինչպիսիք են Հայաստանի գնչուները, որոնք ունեն հատուկ ազգանվանում «բոշա»: Նրանք Հայաստան են եկել 11-13-րդ դարերին՝ Արևելյան Հնդկաստանից գնչուների խոշոր ներգաղթի արդյունքում: Ի վերջո,

79 Միգրացիոն պետական ծառայությունը չի նախաձեռնում քայլեր՝ ապաստան հայցողների քաղաքացիության կարգավիճակը պարզելու ուղղությամբ: Այդպիսով, ապաստան հայցողների քաղաքացիությունը նշվում է նրանց գործերում իրենց իսկ հայտարարությունների հիման վրա, եթե այլ բան չի ապացուցվում ազգային անվտանգության ծառայության և ոստիկանության կողմից տրամադրած տեղեկություններով: Աղբյուր՝ Միգրացիոն պետական ծառայության ներկայացուցչի հետ հարցազրույց, 19 հուլիսի 2011թ.

80 «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի հոդված 13-ի երկրորդ մասի կետ 1

81 Հայաստանի ազգային փոքրամասնությունները, Երևան 2002, Գառնիկ Ասատրյան, Վիկտորիա Առաքելովա.

նրանք միաձուլվել են Հայաստանի ազգաբնակչության հետ: 19-րդ դարի սկզբներին նրանք արդեն ունեին հայկական ինքնություն<sup>82</sup>: Ըստ այդմ, նրանք որևէ կերպ չեն տարանջատվում հայերից<sup>83</sup>:

Համաձայն սահմանապահ գորքերի տրամադրած տեղեկատվության, գնչուների ներհույք Հայաստան տեղի չի ունեցել վերջին տարիներին, և առանձին դեպքերից յուրաքանչյուրում անձինք ունեին Մոլդովայի կամ Ռումինիայի ճամփորդական փաստաթղթեր<sup>84</sup>:

ԶԼՄ-ներում առկա էր տեղեկություն մի գնչու կնոջ մասին, ով ծնվել է Հարավային Սախալինում և Հայաստան է եկել 1976թ.: Նա չունի ծննդյան վկայական, հետևաբար չի կարողացել ձեռք բերել ՀՀ քաղաքացիություն: Նա ունի երկու երեխա և չորս թոռ, որոնց քաղաքացիությունը պարզ չէր տեղեկությունից<sup>85</sup>:

### **3.4.3. Անձինք, ովքեր Հայաստան են գաղթել Աբխազիայից**

Շատ ծագումով հայեր Հայաստան են եկել վրաց-աբխազական առաջին հակամարտության տարիներին՝ 1992-1993թթ.: Նրանց մի անորոշ թվաքանակ, որոնք ունեին ԽՍՀՄ անձնագիր, ստացել են ՀՀ քաղաքացիություն՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի հոդված 10-ի, այն բանից հետո, երբ անձնագրային մարմինները վրացական մարմիններին հարցման միջոցով պարզել են այդ անձանց՝ Վրաստանի քաղաքացի չհանդիսանալու փաստը: Համաձայն 2001թ. բնակչության մարդահամարի՝ 66 անձինք, ովքեր իրենց համարել են քաղաքացիություն չունեցող, նշել են Վրաստանը՝ որպես իրենց նախկին մշտական բնակության վայր: Շատ հավանական է, որ Աբխազիայից եկած ավելի մեծ թվով ծագումով հայեր են այժմ քաղաքա-

82 Նույնը

83 Այս էթնիկ ենթախմբի ուսումնասիրությամբ զբաղվող՝ մեր կողմից հարցված մասնագետներից ոչ ոք (ԳԱԱ ազգագրագետ Հարություն Մարությանը, արևելագետ Գառնիկ Ասատրյանը) երբևէ չի առնչվել բոշաների համայնքում ապաքաղաքացիության կամ չգրանցված ծնունդների խնդիրների:

84 Հարցազրույց ներկայացուցչի հետ, 8 օգոստոսի 2011թ.

85 Հրապարակումը տես՝ <http://www.168.am/am/articles/3103-pr>.

ցիություն չունեցող անձինք: Համաձայն «Վրաստանի քաղաքացիության մասին» Վրաստանի 1993թ. մարտի 25-ի օրենքի (2012թ. մարտի 31-ի դրությամբ) հոդված 3(ա)-ի՝ անձը, ով մշտապես բնակվել է Վրաստանում առնվազն 5 տարիների ընթացքում, և բնակվել է Վրաստանում օրենքի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ, և գրավոր կերպով չի հրաժարվել Վրաստանի քաղաքացիությունից վեց ամսվա ընթացքում, համարվում է Վրաստանի քաղաքացի: Սույն դրույթից հետևում է, որ 1992-1993թ. վրաց-աբխազական հակամարտության ընթացքում Աբխազիայից ներգաղթած ծագումով հայերի միայն այն մասն են ճանաչվել Վրաստանի քաղաքացիներ Վրաստանի օրենսդրության համաձայն, ովքեր բնակվել են Վրաստանում 1993թ. մարտի 25-ի դրությամբ (օրենքի ուժի մեջ մտնելու ամսաթիվ) և դրան նախորդող 5 տարիների ընթացքում:

#### **3.4.4. Քաղաքացիություն չունեցող անձինք, ովքեր ժամանում են Հայաստան որպես միգրանտներ**

«Բնակչության պետական ռեգիստրի» մասին ՀՀ օրենքի հոդված 6-ի համաձայն՝ բնակչության պետական ռեգիստրը պետք է պարունակի տվյալներ Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակ ստացած անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց վերաբերյալ: ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տրամադրած տեղեկությունների համաձայն<sup>86</sup>՝ Վարչությունը վիճակագրություն չի վարում քաղաքացիություն չունեցող անձանց վերաբերյալ, որոնց շնորհիվ էլ Հայաստանում կացության կարգավիճակ և որոնք գրանցվել են բնակչության պետական ռեգիստրում: Այդպիսով, Վարչությունը չկարողացավ տեղեկություններ տրամադրել Հայաստանում կացության կարգավիճակ ստացած և բնակչության պետական ռեգիստրում հաշվառված քաղաքացիություն չունեցող անձանց թվի /կամ առհասարակ նրանց առկայության/ վերաբերյալ: Համաձայն ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տրամադրած տեղեկատվության՝ նրանք չեն կարող համակարգից դուրս բերել նման տեղեկատվություն, առանց իմանալու այն անձի անունը, ում մասին հարցում է կատարվում:

86 Հարցազրույց Վարչության պետի հետ, 28 հուլիսի 2011թ.

ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությանն ուղղված պաշտոնական նամակին (որում խնդրում էինք տեղեկատվություն արտասահմանից ժամանած և Հայաստանում կացության կարգավիճակ ստացած քաղաքացիություն չունեցող անձանց մասին) Վարչության պատասխանում նշված էր այն անձանց թիվը, ովքեր քաղաքացիություն չունեցող անձի կացության վկայական էին ստացել ՀՀ-ում:

### **3.4.5. Առանց ծննդի գրանցման երեխաներ**

Ծննդի պետական գրանցումը Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում է «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքով և Քաղաքացիական կացության ակտերի գրանցումների հետ կապված հրահանգչական ցուցումները հաստատելու մասին ՀՀ արդարադատության նախարարի 2007թ. մայիսի 14-ի թիվ 97-Ն հրամանով: Ծննդի գրանցման համար պետական տուրք սահմանված չէ: Օրենսդրությունն ապահովում է ծննդի գրանցումն անկախ ծնողների քաղաքացիությունից կամ իմիգրացիոն կարգավիճակից: Այնուամենայնիվ, առկա չեն բավարար մեխանիզմներ յուրաքանչյուր ծննդի պարտադիր գրանցումն ապահովելու համար:

Բացի այդ, ծննդի գրանցումը կապվում է մի շարք պահանջների հետ, որոնք կարող են դժվարություններ ստեղծել գրանցման գործընթացում՝ խոցելի խմբերի համար, մասնավորապես փաստաթուղթ չունեցող անձանց դեպքում: «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 7-ը պահանջում է, որ ծննդյան պետական գրանցման համար դիմող անձը ներկայացնի անձը հաստատող փաստաթուղթ: Համաձայն ՀՀ Կառավարության 1999թ. դեկտեմբերի 22-ի թիվ 767 որոշման՝ Հայաստանի Հանրապետությունում անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթերն են՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար անձնագիրը, զինվորական գրքույկը, Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթը, մինչև 16 տարեկան երեխաների համար՝ նաև ծննդյան վկայականը, փախստականների համար անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթերն են՝ ճամփորդական փաստաթուղթը, իսկ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար՝ անձը (ինքնու-

թյունը) հաստատող փաստաթղթերն են՝ օտարերկրյա պետության անձնագիրը, անձը (ինքնությունը) հաստատող միջազգայնորեն ճանաչված փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիրը (որը տրվում է Հայաստանում կացության հատուկ կարգավիճակ ստացողներին), կացության քարտը:

Ոչ օրենքով, և ոչ էլ գործնականում բացառություններ թույլ չեն տրվում ծննդի գրանցման համար անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթեր ունենալու պահանջի առումով: Ավելին, «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքով նաև սահմանվում է պահանջ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար, ըստ որի փաստաթղթերը, որոնք տվել են օտարերկրյա պետությունների իրավասու մարմինները և ներկայացվել են ծննդի պետական գրանցման համար, պետք է հյուպատոսական օրինականացման ենթարկվեն:

ՄԱԿ-ի՝ Երեխայի իրավունքների կոմիտեի (CRC) կողմից բազմիցս մտահոգություններ են հայտնվել՝ կապված տարբեր երկրների օրենսդրության բացասական ազդեցության հետ առ այն, որ ծնողները պետք է պատշաճ կերպով փաստաթղթավորված լինեն, որպեսզի կարողանան խնդրո առարկա երկրում իրականացնել իրենց նորածինների գրանցումը<sup>87</sup>: Կոմիտեն նաև առաջարկությամբ է հանդես եկել պետություններին՝ փաստաթուղթ չունեցող միգրանտների երեխաների գրանցման գործընթացի պարզեցման վերաբերյալ<sup>88</sup>:

Ավելին, վարչական համակարգի հասանելի չլինելը, ՔԿԱԳ մարմիններից դուրս ծնունդների գրանցման անհնարինությունը նույնպես խանգարում են գրանցման արդյունավետ գործընթացին: Սրանք 2004թ.-ին Երեխայի իրավունքների կոմիտեի կողմից ՀՀ

87 CRC/C/VEN/CO/2, 5 հոկտեմբերի 2007թ., կոնվենցիայի հոդված 40-ի համաձայն մասնակից պետությունների կողմից ներկայացված հաշվետվությունների դիտարկում, Եզրափակիչ դիտարկումներ: Վենեսուելա, պարբերություն 39.

88 Երեխայի իրավունքների կոմիտեի Եզրափակիչ դիտարկումներ, Նիդեռլանդներ, Անթիլյան կղզիներ 06/07/2002. CRC/C/15/Add.186. (Եզրափակիչ դիտարկումներ/մեկնաբանություններ), պարբերություն 35, ինչպես նաև՝ վերևի պարբերություն 40

կառավարությանը ներկայացված ամփոփիչ դիտարկումներում ևս մատնանշվել են որպես հնարավոր խոչընդոտներ՝ բոլոր երեխաների ծնունդների գրանցումն ապահովելու առումով<sup>89</sup>:

Այդպիսով, թեև չգրանցված ծնունդների խնդրով երկրում զգալի առաջընթաց է գրանցվել օրենսդրական դաշտի զանազան բարեփոխումների միջոցով<sup>90</sup>, այնուամենայնիվ խնդրի վերացումը պահանջում է կառավարության խիստ վերահսկողությունը և ուղղորդումը, ինչպես նաև շարունակական օրենսդրական բարեփոխումներ:

ՀԿ-ների և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների կողմից որպես չգրանցված ծնունդների հիմնական պատճառ են մատնանշվում՝

- Անձը հաստատող փաստաթուղթ չունեցող ծնողները.
- Երեխայի ծննդյան փաստը հաստատող փաստաթղթերի բացակայությունը, քանի որ ծնունդը տեղի է ունեցել տնային պայմաններում, կամ նրանք կորցրել են այդ փաստաթղթերը (սա հատկապես բարդ է այն դեպքերում, երբ երեխան ծնվել է արտասահմանում).
- Որոշ ծնողների անտարբերությունը.
- Որոշ համայնքներում գործող սովորույթները (մասնավորապես եզրի ազգաբնակչության շրջանում), երբ ծննդի գրանցումը չի խրախուսվում, հատկապես աղջիկ երեխայի դեպքում:

Փաստաթղթերի հետ խնդիրներ ունեցող ծնողների զգալի մի

---

89 CRC/C/15/Add.225, 30 հունվարի 2004, Երեխայի իրավունքների կոմիտեի Եզրափակիչ դիտարկումներ, ՀԱՅԱՍՏԱՆ, պարբերություն 27:

90 Օրինակ, պետական տուրքի վերացումը, հայմայնքի ղեկավարների համար պարտականության նախատեսումը՝ քայլեր ձեռնարկելու տվյալ համայնքում չգրանցված ծնունդները հայտնաբերելու և երեխայի ծննդյան վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու ուղղությամբ, եթե հայտարարման այլ ձևերը անհնար են, ինչպես նաև մարզպետարանների՝ երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների՝ մարզում ծնունդների գրանցման գործընթացին օժանդակելու պարտականության նախատեսումը

խումբ են կազմում ծագումով հայ կանայք, ովքեր տեղափոխվել են Հայաստան՝ Վրաստանի Սամցխե-Ջավախեթի շրջանից: Նրանցից ոմանք եկել են Արցախի հակամարտությունից որոշ ժամանակ անց և բնակություն են հաստատել մեծ մասամբ Շիրակի և Լոռու մարզերի սահմանամերձ շրջաններում՝ զբաղեցնելով այդ տարածքները լքած ադրբեջանցիների բնակավայրերը: Մյուսները տեղափոխվել են Հայաստան վերջին շրջանում՝ ավելի վաղ ներգաղթածների հետ ամուսնության արդյունքում<sup>91</sup>: Այդ համայնքում հաճախակի են վաղ ամուսնությունները, հատկապես բռնի ամուսնությունները առևանգման միջոցով, երբ դեպքերից շատերում մայրը դեռևս անչափահաս է և ինքն էլ դեռ չունի անձը հաստատող փաստաթուղթ:

Վրաստանի Սամցխե-Ջավախեթի շրջանից գաղթած և ներկայումս Հայաստանի սահմանամերձ շրջաններում ապրող՝ ծագումով հայերի կոնկրետ թվի վերաբերյալ տեղեկություններ հայտնի չեն: Փաստաթղթերի բացակայության խնդիրն ի հայտ եկավ միայն Հայ օգնության միության և մարզպետարանների ներքո գործող երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների կողմից երեխաների ծննդի չգրանցման դեպքերի ուսումնասիրության ժամանակ:

Առ այսօր Լոռու մարզպետարանը զբաղվել է Վրաստանից եկած՝ ենթադրաբար Վրաստանի քաղաքացի հանդիսացող, սակայն անձնագիր չունեցող 12 կանանց գործերով: Այդ կանանց խոսքերով, նրանք կամ կորցրել են իրենց անձնագիրը, կամ երբևիցե չեն ստացել: Այդ 12 դեպքերից 7-ը լուծում են ստացել, որպես կանոն՝ այդ կանանց ՀՀ քաղաքացիություն շնորհելու միջոցով: Չլուծված են մնում հինգ դեպք<sup>92</sup>: Այդ թվում՝ մի կին, որն ունի վեց երեխա և մեկ թոռ, որոնք բոլորը զուրկ են ծննդի գրանցման փաստաթղթերից, քանի որ կինն ինքը չուներ անձը հաստատող փաստաթուղթ: Ինչպես նշել է Լոռու մարզպետարանի երեխաների իրավունքներ-

91 Հարցազրույց Շիրակի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության բաժնի պետ պրն Ռ. Հարությունյանի հետ

92 Տեղեկատվությունը տրամադրված է Լոռու մարզպետարանի երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի կողմից



րի պաշտանության բաժինը,<sup>93</sup> նրանց հարցումները Վրաստանի պետական մարմիններին, ինչպես նաև դեսպանատան միջոցով խնդիրը լուծելու փորձերը անարդյունավետ են եղել: Թվում է, որ այդ երեխաների համար փաստաթղթեր ձեռք բերելու միակ ձևը այն է, որ մայրը վերադառնա Վրաստան և դիմում ներկայացնի, սակայն նա դա անել չէր կարող, քանի որ չուներ ճամփորդական վավեր փաստաթուղթ: Մեկ այլ կնոջ դեպքում մենք տեղեկացանք, որ նրա ինքնության հաստատումը հնարավոր չէր, քանի որ քաղաքացիական կացության ակտերի գրանցման արխիվը ոչնչացել էր:

Մատնանշվել են չփաստաթղթավորված կանանց ևս երկու դեպք (ծնողներ Սամցխե- Ջավախեթիից) Շիրակի մարզում:<sup>94</sup>

---

93 Հեռախոսային հարցազրույց բաժնի պետի հետ

94 Տեղեկատվությունը տրամադրված է Շիրակի մարզպետարանի երեխաների իրավունքների պաշտանության բաժնի կողմից

## Բաժին 4.

### Քաղաքացիություն չունեցող անձանց հանդեպ վերաբերմունքը Հայաստանում

#### 4.1. 1954թ. Կոնվենցիայի հիմնական տարրերը

Քաղաքացիություն չունեցող անձանց վերաբերյալ Հայաստանի միջազգային պարտավորությունները սահմանված են «Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին» 1954թ. Կոնվենցիայով: Հայաստանը որևէ վերապահում չի կատարել դրա հոդվածներից որևէ մեկի վերաբերյալ:

1954թ. Կոնվենցիան սահմանում է քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանության մեխանիզմները, իսկ հոդված 1-ը սահմանում է այդ մեխանիզմներից օգտվող անձանց: Այդպիսով, Կոնվենցիայում սահմանված իրավունքները գործարկելու նպատակով Պայմանավորվող պետության ազգային օրենսդրությունը պետք է ապահովի հետևյալը՝

- քաղաքացիություն չունեցող անձի սահմանումը՝ 1954թ. Կոնվենցիային համապատասխան.
- անձին որպես քաղաքացիություն չունեցող անձ ճանաչելու համար պաշտոնական ընթացակարգ.
- 1954թ. Կոնվենցիայի պահանջների համաձայն քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանության ռեժիմ:

1954թ. Կոնվենցիայի դրույթները կարող են բաժանվել երկու խմբի՝ հիմնվելով քաղաքացիություն չունեցող անձանց հանդեպ վերաբերմունքի տեսակների վրա: Կամ՝ նույնքան բարեհաճ, որքան տվյալ երկրի քաղաքացիներին, կամ՝ ոչ պակաս բարեհաճ վերաբերմունք, քան նույն հանգամանքներում ընդհանրապես հատկացվում է օտարերկրացիներին:

Համաձայն Կոնվենցիայի՝ Պայմանավորվող պետություններն իրենց տարածքում օրինական կարգով գտնվող կամ բնակվող քաղաքացիություն չունեցող անձանց հատկացնում են առնվազն նույնքան բարեհաճ վերաբերմունք, որքան իրենց քաղաքացիներին հետևյալ իրավունքների իրականացման առումով՝ սեփական

կրոնը դավանելու իրավունք (հոդված 4), արվեստի ստեղծագործությունների նկատմամբ իրավունքների և արդյունաբերական սեփականության պաշտպանություն (հոդված 14), դատարան դիմելու իրավունք (հոդված 16(2) և (3)), չափաբաժիններ (հոդված 20), տարրական կրթություն (հոդված 22(1)), հանրային օժանդակություն (հոդված 23), աշխատանքային օրենսդրություն (հոդված 24) և պետական գանձումներ (հոդված 29):

Պայմանավորվող պետությունները իրենց տարածքում օրինական կարգով գտնվող կամ բնակվող քաղաքացիություն չունեցող անձին հատկացնում են հնարավորինս և, ամեն դեպքում, ոչ պակաս բարեհաճ վերաբերմունք, քան նույն հանգամանքներում ընդհանրապես հատկացվում է օտարերկրացիներին՝ հետևյալ իրավունքների գծով՝ շարժական և անշարժ գույքի ու դրան առնչվող այլ իրավունքների ձեռքբերում (հոդված 13), միավորումներ կազմելու իրավունք (հոդված 15), վարձու աշխատանքով զբաղվելու իրավունք (հոդված 17), անհատ ձեռնարկատիրությամբ զբաղվելու իրավունք (հոդված 18), ազատ մասնագիտությամբ զբաղվելու իրավունք (հոդված 19), կացարանի իրավունք (հոդված 21) և տարրական կրթությունից տարբեր կրթության իրավունք (հոդված 22(2)), վարչական օժանդակություն (հոդված 25), տեղաշարժի ազատության իրավունք (հոդված 26), ճամփորդական փաստաթղթեր ունենալու իրավունք (հոդված 28), չարտաքսվելու իրավունք՝ բացառությամբ ազգային անվտանգությամբ կամ հասարակական կարգի պահպանությամբ պայմանավորված դեպքերի (հոդված 31):

Կոնվենցիայով սահմանված որոշ իրավունքներ կախված չեն քաղաքացիություն չունեցող անձանց՝ Պայմանավորվող պետության տարածքում օրինական կարգով գտնվելու կամ բնակվելու փաստից: Սրանցից են՝ խտրականության արգելքի իրավունքը (հոդված 3), անձնական կարգավիճակին առնչվող իրավունքը (հոդված 12), ինքնության վկայականների իրավունքը (հոդված 27), հպատակագրման իրավունքը (հոդված 32) և գույքի տեղափոխման իրավունքը (հոդված 30):

## 4.2. Քաղաքացիություն չունեցող անձանց սահմանումը ՀՀ օրենսդրության համաձայն

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքով և «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով տրված է քաղաքացիություն չունեցող անձի երկու տարբեր սահմանում: «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի հոդված 8-ը տալիս է քաղաքացիություն չունեցող անձի հետևյալ սահմանումը՝

*«Հայաստանի Հանրապետությունում բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձը, որն այլ պետության քաղաքացիություն ունենալու ապացույց չունի, համարվում է քաղաքացիություն չունեցող անձ»:*

«Օտարերկրացիների մասին» օրենքի հոդված 2-ը տալիս է քաղաքացիություն չունեցող անձի հետևյալ սահմանումը՝

*«անձինք, որոնք չունեն որևէ պետության քաղաքացիություն»*

1954թ. Կոնվենցիայում «քաղաքացիություն չունեցող անձ» հասկացությունը նշանակում է անձ, որը չի համարվում քաղաքացի որևէ պետության կողմից՝ դրա օրենսդրության հիման վրա: Կոնվենցիայի սահմանումն այդիպտով, ըստ որոշ մեկնաբանների, ներառում է միայն այսպես կոչված «դե յուրե» քաղաքացիություն չունեցող անձանց, ովքեր փաստացիորեն չունեն որևէ երկրի քաղաքացիություն՝ շնորհիված ավտոմատ կերպով կամ որևէ գործադիր մարմնի որոշմամբ՝ ընդունված համաձայն տվյալ երկրի օրենքի:

Թեև «Օտարերկրացիների մասին» օրենքով տրված՝ քաղաքացիություն չունեցող անձի սահմանումը գրեթե նույնական է 1954թ. Կոնվենցիայի սահմանմանը, նույնը չի կարելի ասել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի սահմանման մասին: Համաձայն Կոնվենցիայի սահմանման, քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի ամրագրումը ենթադրում է, որ անձը փաստացի չպետք է ունենա որևէ պետության քաղաքա-

ցիություն, որի հետ այն որևէ կերպ փոխկապակցված է, մասնավորապես՝ տարածքում ծնունդով, ծագմամբ, ամուսնությամբ կամ փաստացի բնակությամբ<sup>95</sup>:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքով տրված սահմանումը («Հայաստանի Հանրապետությունում բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձը, որն այլ պետության քաղաքացիություն ունենալու ապացույց չունի<sup>96</sup>») փաստորեն չի համապատասխանում Կոնվենցիայի սահմանմանը: Թեև «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի սահմանումը կարող է առաջին հայացքից ավելի ընդգրկուն թվալ, քան Կոնվենցիայի սահմանումը, նման սահմանումը խնդրահարույց կարող է լինել մի շարք պատճառներով:

Նախ, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի համաձայն՝ անձը պարտավոր չէ ապացուցել, որ չունի որևէ այլ երկրի քաղաքացիություն, այսինքն այն փաստը, որ նա չունի քաղաքացիության ապացույց, արդեն կարող է բավարար լինել որպեսզի տվյալ անձը ստանա քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ: Քաղաքացիություն չունեցող անձի սահմանումը «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի համաձայն ենթադրում է, որ այն կարող է ներառել անձանց, ովքեր առհասարակ չեն հանդիսանում քաղաքացիություն չունեցող անձինք: Քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի շնորհումը այն անձին, որը փաստացիորեն չի հանդիսանում քաղաքացիություն չունեցող, որևէ կերպով չի օգնում ընդհանուր առմամբ քաղաքացիության կրճատմանը:

Այստեղ հարկ է նշել, որ համաձայն անձնագրային և վիզաների վարչության տրամադրած տեղեկատվության<sup>97</sup> քաղաքացիություն չունեցող անձին սահմանելիս Վարչությունը չի առաջնորդվում «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի բառացի սահմանմամբ, և քաղաքացիություն չունեցող անձ ճանաչվելու համար դիմողներից պահանջում է ապացույց այլ քա-

---

95 Նույնը, պարբերություն 11

96 Շեշտադրում

97 Հարցազրույց, 20 հուլիսի 2011թ.

ղաքացիություն չունենալու վերաբերյալ: Կամ՝ հարցումներ է անում համաապատասխան պետություններին՝ համաապատասխան կապի բացակայությունը հավաստելու նպատակով:

Այնուամենայնիվ, առաջարկվում է օրենքի սահմանումը համահունչ դարձնել 1954թ. Կոնվենցիայի հոդված 1(1)-ի հետ՝ հստակության, ինչպես նաև օրենքի որակի ապահովման տեսանկյունից՝ այդ օրենքի պահանջների՝ շահառու անձանց վրա ազդեցության կանխատեսելիության առումով:

Երկրորդ, խուսափելու համար այն տարբերություններից, որոնք կարող են առաջանալ 1954թ. Կոնվենցիայի կիրառելիության առումով, լիազորված անձանց համաժողովում որոշում կայացվեց համընդհանուր սահմանում տալ քաղաքացիություն չունեցող անձին: Համաժողովի այս հաստատուն մոտեցումը հաստատվում է նաև այն փաստով, որ Նորվեգիայի ներկայացուցչի առաջարկը (որին համակարծիք էր նաև Հարավսլավիայի ներկայացուցիչը)՝ հոդված 1-ը ձևակերպելու այնպես, որ այն վերաբերի անձանց, որոնց որևէ երկրի քաղաքացի լինելը չի հաստատվել (այսինքն, եթե բնակության վայր հանդիսացող պետությունը չունի ապացույց առ այն, որ քաղաքացիություն չունեցող անձ ճանաչվելու համար դիմած անձը իրականում քաղաքացիություն ունի), չընդունվեց, և պահպանվեց «համընդհանուր» սահմանումը, ինչպես նաև ժխտական («քաղաքացի չհամարվող [...]» ձևակերպումը<sup>98</sup>:

Երրորդ, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքում քաղաքացիություն չունեցող անձի սահմանումը անդրադառնում է միայն «Հայաստանի Հանրապետությունում բնակվող անձանց»: Համաձայն սահմանման, եթե անձը չունի որևէ պետության քաղաքացիություն, սակայն չի բնակվում Հայաստանի Հանրապետությունում, նա չի հանդիսանում քաղաքացիություն չունեցող անձ: Սա հակասում է 1954թ. Կոնվենցիայի սահմանմանը, որը որևէ հղում չի պարունակում որևէ պետություն-

98 «Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին» կոնվենցիայի պատմությունը և մեկնաբանությունը, Ռոբինսոն Նեհեմիայի մեկնաբանություն (Հրեաների հարցերով ինստիտուտ, Հրեաների Համաշխարհային Համաժողով), 1955թ. (վերատպագրված է Միջազգային պաշտպանության բաժնի կողմից, 1997թ.)

նում բնակվելու փաստին, և ավելին՝ հողված 1(2)-ը սահմանումից չի բացառում այն անձանց, ովքեր չեն բնակվում տվյալ պետությունում: Այսպիսով, տվյալ պետության տարածքում բնակվելը կամ չբնակվելը էական չէ՝ տվյալ անձի ապաքաղաքացիությունը որոշելիս: Օրինակ կարող են լինել չփաստաթղթավորված միգրանտները, ովքեր հասնում են սահմանի անցման կետ առանց վավեր փաստաթղթերի, և այնուհետև պարզվում է, որ նրանք որևէ երկրի քաղաքացիություն չունեն:

Ի վերջո, քաղաքացիություն չունեցող անձի հակասական սահմանումների առկայությունը «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքում և «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքում կարող է հանգեցնել հակասական գործնական կիսառումների: Թեև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 24(3)-ի համաձայն՝ հակասական դրույթների առկայության դեպքում գերակայում է ավելի վաղ ընդունված և գործողության մեջ դրված իրավական ակտը (տվյալ դեպքում «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքը), ամեն դեպքում միշտ նախապատվելի է համահունչ մոտեցումը: Այսպիսով, ինչպես «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքում, այնպես էլ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքում տրված սահմանումը պետք է փոփոխվի՝ դրանք 1954թ. Կոնվենցիայի հոդված 1(1)-ին համահունչ դարձնելու նպատակով:

### **4.3. Քաղաքացիություն չունեցող անձանց ճանաչման ֆորմալ ընթացակարգեր**

Թեև 1954 թ. Կոնվենցիան չի սահմանում քաղաքացիություն չունեցող անձանց որպես այդպիսին ճանաչելու ընթացակարգ, Կոնվենցիայից կարելի է ենթադրել, որ պետությունները պետք է ունենան ընթացակարգ, պարզելու համար Կոնվենցիայով սահմանված վերաբերմունքի չափանիշներից օգտվող անձանց<sup>99</sup>:

Հայաստանում չկա քաղաքացիություն չունեցող անձանց որպես

99 ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատար, *Ապաքաղաքացիության մասին ուղեցույց թիվ 2: Անձի՝ քաղաքացիություն չունենալը սահմանելու ընթացակարգը*, 5 ապրիլի 2012թ., HCR/GS/12/02, պարբերություն 1, տես <http://www.unhcr.org>.

այդպիսին ճանաչելու ֆորմալ ընթացակարգ: Երկու իրավական ակտերով նախատեսվում է քաղաքացիություն չունեցող անձանց կացության կարգավիճակ շնորհելու պայմանները՝ «Օտարերկրացիների մասին» օրենքը, որը սահմանում է կացության կարգավիճակի երեք տեսակ օտարերկրացիների համար (ժամանակավոր, մշտական և հատուկ) և «Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց փաստաթղթավորման կարգը և կացության վկայականի նկարագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը, որը հղում է կատարում 1954թ. Կոնվենցիային և նշում, որ այդ որոշումն ընդունվել է հաշվի առնելով դրա դրույթները: Վերջինս անդրադառնում է Հայաստանի Հանրապետությունում 1 տարվա ընթացքում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձանց, կամ անձանց, ում կենսական շահերի կենտրոնը<sup>100</sup> գտնվում է Հայաստանի Հանրապետությունում, մինչդեռ «Օտարերկրացիների մասին» օրենքը անդրադառնում է անձանց, ովքեր ժամանում են Հայաստան վավեր ճամփորդական փաստաթղթով և մուտքի արտոնագրով (եթե վերջինս պահանջվում է) և դիմում են օրենքով սահմանված կացության կարգավիճակներից մեկը ստանալու համար:

Այս երկու ռեժիմներն էլ ունեն իրենց թերությունները: Նախևառաջ, դրանցից և ոչ մեկը չի սահմանում ապաքաղաքացիության որոշման ֆորմալ ընթացակարգ, այդպիսով հնարավորություն ստեղծելով այդ կապակցությամբ կամայական որոշումների կայացման: Երկրորդ, դրանցից որևէ մեկը չի անդրադառնում Հայաստանում մշտապես չբնակվող /այդտեղ կենսական շահերի կենտրոն չունեցող/ անձանց կամ նրանց, ովքեր չեն բավարարում «Օտա-

<sup>100</sup> Որոշումը կիրառվում է Հայաստանի Հանրապետությունում 12 ամսվա ընթացքում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձանց, կամ այն անձանց նկատմամբ, ում կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանում: Որոշումը չի սահմանում «կենսական շահերի կենտրոն» հասկացությունը. այլ օրենսդրական ակտերում տրված սահմանմանը համանման, այն կարելի է դիտարկել որպես վայր, որտեղ գտնվում է անձի գույքի մեծ մասը, որտեղ բնակվում է անձի ընտանիքը, կամ որտեղ անձը հիմնականում իրականացնում է իր տնտեսական /մասնագիտական/ գործունեությունը:



րերկրացիների մասին» օրենքի համաձայն կացության կարգավիճակ ստանալու համար անհրաժեշտ պահանջներին, այդ թվում՝ չի անդրադառնում այն անձանց կարգավիճակին, ովքեր Հայաստան են ժամանել ապօրինաբար և/կամ այնտեղ բնակվում են ոչ օրինական կարգով:

Այդ հարցերին առանձին անդրադարձ է արվել հաջորդող պարբերություններում:

Թեև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը սահմանում է պետական մարմինների կողմից վարչական վարույթի իրականացման հիմնական նորմերը, ապաքաղաքացիությունը որոշելու համար անհրաժեշտ է ընդունել հատուկ այդ նպատակով սահմանված կանոններ: ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության<sup>101</sup> կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ գործող վարչական պրակտիկան հետևյալն է. քաղաքացիություն չունեցող անձի կացության կարգավիճակի համար դիմում ներկայացնող անձը պետք է ներկայացնի քաղաքացիություն չունենալու ապացույց: Որպես կանոն, դա իրենից ներկայացնում է տեղեկանք այն պետության լիազոր մարմնի կողմից, որի հետ տվյալ անձն ունի որևէ տեսակի կապ: Նման ապացույցի բացակայության դեպքում, կամ եթե Վարչությունը չի բավարարվում ներկայացված ապացույցներով, այն հարցում է կատարում համապատասխան պետության պետական մարմիններին՝ տվյալ անձի քաղաքացիության կարգավիճակը պարզելու համար:

Ապաքաղաքացիության որոշման ֆորմալ ընթացակարգի ներդրումը կխթանի պետությունների կողմից 1954թ. Կոնվենցիայի պահանջների կատարումը: Ապաքաղաքացիության որոշման գործընթացը կարող է փոխկապակցվել կացության կարգավիճակի շնորհման վարույթի հետ: Քանի որ քաղաքացիություն չունեցող անձանցից ոմանք կարող են նաև լինել փախստականներ, պետությունները կարող են դիտարկել ապաքաղաքացիության և փախստականների կարգավիճակի սամանումը միասնական ընթացակարգով: Ապաստան հայցողների և փախստականների դիմումների հետ կապված գաղտնիության պահպանման պահանջը պետք է կատարվի՝ անկախ ապաքաղաքացիության որոշման ընթացակարգի ձևաչափից

---

101 Վարչության պետի հետ հարցազրույց, 20 հուլիսի, 2011թ.

և այն իրականացնող մարմնից<sup>102</sup>: Ապաքաղաքացիության որոշման գործընթացի տեղակայման վերաբերյալ որոշման վրա կարող են ազդել այնպիսի գործոններ, ինչպիսիք են վարչարարություն իրականացնելու հնարավորությունները, առկա փորձը ապաքաղաքացիության հարցերով, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող բնակչության ակնկալվող չափը և նկարագիրը<sup>103</sup>:

Հայաստանը պետք է հայցի ՄԱԿ ՓԳՀ օժանդակությունը՝ ապաքաղաքացիության որոշման ընթացակարգը սահմանելիս, ինչպես նաև համապատասխան աշխատակազմի վերապատրաստումը կազմակերպելու գործում:

Հայաստանը նաև կարող է դիտարկել Հունգարիայի, Իսպանիայի, Ֆրանսիայի, Մոլդովայի և Վրաստանի փորձը, որտեղ առկա են ապաքաղաքացիության որոշման ֆորմալ վարույթներ:

Ինչպես նշվեց վերևում, «Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց փաստաթղթավորման կարգը և կացության վկայականի նկարագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը հնարավորություն է ընձեռում կացության կարգավիճակ շնորհել միայն Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձանց, կամ անձանց, ում կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում: Պետք է նշել, որ Որոշմամբ հատուկ չի սահմանվում բնակության օրինական լինելու պահանջ: Սակայն կարելի է եզրահանգել, որ ապօրինի կերպով Պետություն մուտք գործող կամ բնակվող անձինք դուրս են մնում Որոշման շրջանակներից և ապաքաղաքացիության կարգավիճակի համար դիմելու իրավունքից: Սա պայմանավորված է նրանով, որ «Օտարերկրացիների մասին» օրենքի համաձայն, բոլոր օտարերկրացիները, ովքեր առանց օրինական հիմքերի բնակվում են Հայաստանում, ենթակա են արտաքսման՝ բացառությամբ առանձին դեպքերի: Բացառությունները չեն վերաբերում քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի համար դիմում ներկայացրած անձանց:

102 ապաքաղաքացիության մասին ՈՒՂԵՑՈՒՅՑ թիվ 2, պարբերություն 14.

103 նույնը, պարբերություն 12.

Մյուս կողմից, «Օտարերկրացիների մասին» օրենքը կացության կարգավիճակի շնորհումը պայմանավորում է որոշակի պայմանների բավարարմամբ: Դրանք դիտարկվում են ավելի մանրամասնորեն սույն բաժնի հաջորդ մասերում:

Կարելի է ենթադրել, որ ՀՀ գործող օրենսդրական դաշտը չի անդրադառնում քաղաքացիություն չունեցող անձանց հետևյալ երկու կատեգորիաներին՝

- երկիր ապօրինաբար ժամանած կամ այնտեղ ապօրինաբար բնակվող անձինք.
- անձինք, ովքեր ժամանում են երկիր քաղաքացիություն չունեցող անձանց վավեր ճամփորդական փաստաթղթով, սակայն չեն համապատասպանում «Օտարերկրացիների մասին» օրենքով սահմանված կացության կարգավիճակ ստանալու պահանջներին:

1954թ. Կոնվենցիայի համաձայն, ոչ բոլոր իրավունքներն են փոխկապակցված Պայմանավորվող պետությունում օրինական հիմունքներով գտնվելու հետ<sup>104</sup>: Ավելին, օրինական հիմունքներով բնակությունը չի հանդիսանում քաղաքացիություն չունեցող անձի սահմանման տարր, ինչպես նաև ապօրինի հիմունքներով բնակվելը չի հանդիսանում Կոնվենցիայի 1(2) հոդածի համաձայն բացառման հիմք: Նմանապես, 1954թ. Կոնվենցիան տվյալ պետությունում որոշակի տևողությամբ բնակվելը կամ կենսական շահերի առկայությունը չի համարում ապաքաղաքացիությունը ճանաչելու նախապայման: Քաղաքացիություն չունեցող ցանկացած անձ պետք է տվյալ Պետությունում հնարավորություն ունենա օգտվելու ապաքաղաքացիության որոշման ընթացակարգերից, անգամ եթե նա ապօրինի կերպով է բնակվում տվյալ երկրում<sup>105</sup>: Նման մեկնաբանությունը հիմնավորվում է այն հանգամանքով, որ քաղաքացիություն չունեցող անձանց համար, ովքեր ենթադրաբար չունեն վավեր անձը հաստատող փաստաթղթեր, գործնականում անհնար է որևէ պետություն մուտք գործել կամ այնտեղ գտնվել օրինական կարգով:

104 Օրինակ՝ տես 1954թ. Կոնվենցիայի հոդված 4 և 27

105 Ապաքաղաքացիության մասին ուղեցույց թիվ 2, պարբերություն 17.

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետություն մեկ այլ պետությունից քաղաքացիություն չունեցող անձի ճամփորդական վավեր փաստաթղթերով ժամանող անձանց, ապա նրանց նույնպես պետք է հնարավորություն ընձեռվի դիմել քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ ստանալու համար: 1954թ. Կոնվենցիայով առկա չեն հիմքեր, համաձայն որոնց պետությունները կարող են մերժել ապաքաղաքացիության որոշման ընթացակարգեր իրականացնել այն հիմքով, որ այդ անձը ճանաչվել է քաղաքացիություն չունեցող անձ մեկ այլ պետության կողմից: Կոնվենցիայում պարունակվող միակ դրույթը, որն առնչվում է տվյալ դեպքին, անդրադառնում է այն դեպքերին, երբ բնակության վայր հանդիսացող պետությունը քաղաքացիություն չունեցող անձանց ճանաչում է որպես այն իրավունքներն ու պարտականություններն ունեցող, որոնք կապված են տվյալ պետության քաղաքացիությունն ունենալու հետ<sup>106</sup>:

### **Ապաքաղաքացիության վերաբերյալ որոշման սպասող անձի կարգավիճակը**

Ապահովելու համար ապաքաղաքացիության որոշման ընթացակարգերի արդարացիությունը և արդյունավետությունը, պետությունները խրախուսվում են որևէ անձի չարտաքսել իրենց տարածքից՝ նախքան կարգավիճակի որոշման արդյունքները հայտնի դառնալը<sup>107</sup>: Որևէ այլ խմբագրիոն կարգավիճակի բացակայության պարագայում՝ իրենց ապաքաղաքացիության որոշման հարցի լուծմանը սպասող անձանց պետք է ժամանակավոր հնարավորություն տրվի մնալ տվյալ երկրում,<sup>108</sup> և քաղաքացիության որոշման ընթացակարգերը պետք է կասեցնող ազդեցություն ունենան արտաքսման վրա:

ՄԱԿ ՓԳՀ-ի տեսակետն այս հարցի շուրջ այն է, որ այն պե-

106 1954թ. Կոնվենցիայի հոդված 1(2)(ii)

107 ՄԱԿ ՓԳՀ Ապաքաղաքացիության մասին ուղեցույց թիվ 2-ի պարբերություն 20

108 ՄԱԿ ՓԳՀ Ապաքաղաքացիության մասին ուղեցույց թիվ 2-ում կգտնեք ընթացակարգի ընթացքում այլ ընթացակարգային երաշխիքների, ինչպես նաև ապացուցման ստանդարտների նկարագիրը

տություններում, որտեղ առկա է որոշման ընթացակարգ, որոշման սպասող անձը ունի առնվազն բոլոր իրավունքները՝ հիմնված իրավագործության կամ տարածքում ներկայության վրա, ինչպես նաև այն իրավունքները, որոնք առաջանում են երկրում օրինական կերպով գտնվելու հիմքով<sup>109</sup>: Այդպիսով, դիմողի կարգավիճակը պետք է երաշխավորի, ի թիվս այլոց, անձը հաստատող փաստաթղթերը, անհատ ձեռնարկատիրության իրավունքը, ազատ տեղաշարժվելու իրավունքը և արտաքսումից պաշտպանությունը: Քանի որ վերը նշված Կոնվենցիայով սահմանված իրավունքները գրեթե նույնն են 1951թ. Կոնվենցիայի դրույթների հետ, առաջարկվում է, որ ապաքաղաքացիության որոշման սպասող անձինք ստանան այն նույն վերաբերմունքը, ինչ ապաստան հայցողները, որոնց հայցերը քննվում են միևնույն պետությունում:

#### **4.4. Կացության կարգավիճակը**

Թեև 1954 թ. Կոնվենցիայով հստակ սահմանված չէ, որ քաղաքացիություն չունեցող ճանաչված անձանց պետությունները պարտավորված են տրամադրել կացության իրավունք, նման թույլտվություն տրամադրելը կբավարարեր Կոնվենցիայի<sup>110</sup> նպատակը, քանի որ սահմանված իրավունքները մեծ մասամբ բխում են օրինական կացության որևէ տեսակի շնորհումից:

Այսպիսով, ապաքաղաքացիության ճանաչման արդյունքում պետք է շնորհվի կացության կարգավիճակ, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ անձը կացության կարգավիճակ ունի այնպիսի պետությունում, որտեղ նա կարող է վերադառնալ և բնակվել՝ իր իրավունքների լիարժեք պահպանմամբ:<sup>111</sup>

Ինչպես նշվեց վերևում, Հայաստանում գործում է երկու ռեժիմ՝ քաղաքացիություն չունեցող անձանց կացություն կարգավի-

109 Թե ինչու է որոշման սպասող անձը համարվում տվյալ երկրում օրինական կարգով գտնվող անձ, տես ՄԱԿ ՓԳՀ Ապաքաղաքացիության մասին ուղեցույց թիվ 3-ի նշում 11

110 ՄԱԿ ՓԳՀ Ապաքաղաքացիության մասին ուղեցույց թիվ 3-ի պարբերություն 28

111 Հետագա ցուցումների համար տես ՄԱԿ ՓԳՀ Ապաքաղաքացիության մասին ուղեցույց թիվ 3, պարբերություն 34-38, ինչպես նաև 42-43

ճակ տրամադրելու համար: Առաջինը սահմանված է «Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց փաստաթղթավորման կարգը և կացության վկայականի նկարագիրը հաստատելու մասին» կառավարության որոշմամբ և տրվում է այն անձանց, ովքեր մշտապես բնակվում են Հայաստանում կամ ում կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանում: Մյուս ռեժիմը սահմանված է «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով, որն անդրադառնում է քաղաքացիություն չունեցող անձանց, ովքեր ժամանում են Հայաստանի Հանրապետություն այլ պետության կողմից տրված քաղաքացիություն չունեցող անձի վավեր ճամփորդական փաստաթղթով և բավարարում են օրենքով սահմանված որոշակի չափանիշների:

«Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց փաստաթղթավորման կարգը և կացության վկայականի նկարագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման համաձայն տրվող կացության վկայականը տրամադրում է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը 5 տարի ժամկետով՝ ևս 5 տարի ժամկետով երկարաձգելու հնարավորությամբ: Այդ վկայականն ունեցողն օգտվում է նույն իրավունքներից և կրում է նույն պարտականությունները, ինչ սովորական օտարերկրացիները՝ «Օտարերկրացիների մասին» օրենքով և ընդհանուր առմամբ ՀՀ օրենսդրությամբ: «Օտարերկրացիների մասին» օրենքի հոդված 5(1)-ի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացիներն ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին հավասար իրավունքներ, ազատություններ և պարտականություններ, եթե Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ, օրենքներով և միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

«Օտարերկրացիների մասին» օրենքը սահմանում է կացության երեք տեսակի կարգավիճակ՝ ժամանակավոր, մշտական և հատուկ: Կացության կարգավիճակի դիմումի քննարկման ընթացակարգը սահմանված է ՀՀ կառավարության 2008թ. փետրվարի 7-ի թիվ 134-Ն որոշմամբ, որով նաև սահմանվում է դիմումի հետ ներկայացման ենթակա փաստաթղթերի ցանկը:

Ժամանակավոր կացության կարգավիճակը տրվում է յուրա-

քանչյուր օտարերկրացու, եթե նա հիմնավորում է, որ գոյություն ունեն Հայաստանի Հանրապետության տարածքում մեկ տարի և ավել ժամկետով իր բնակվելը հիմնավորող հանգամանքներ: Այդպիսի հանգամանքներ կարող են լինել՝

- ուսումը, կամ
- օրենքի 4-րդ գլխի համաձայն՝ աշխատանքի թույլտվության առկայությունը, կամ
- Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը, ծնողը կամ զավակը լինելը, կամ
- Հայաստանի Հանրապետության քաղաքացու կամ Հայաստանի Հանրապետությունում մշտական կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը կամ մերձավոր ազգականը (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) լինելը, կամ
- ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը.
- ազգությամբ հայ լինելը:

Ժամանակավոր կացության կարգավիճակը տրվում է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից մինչև 1 տարի ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ 1 տարով երկարաձգելու հնարավորությամբ՝ երկարաձգման վերաբերյալ դիմումի հիման վրա:<sup>112</sup>

Մշտական կացության կարգավիճակը տրվում է օտարերկրացուն, եթե նա՝

- ապացուցում է Հայաստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող ամուսնու կամ մերձավոր ազգականների (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) առկայությունը,
- Հայաստանի Հանրապետությունում ապահովված է բնակարանով ու գոյության միջոցներով և
- մինչև մշտական կացության կարգավիճակ ստանալու հա-

112 «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի հոդված 15

մար դիմում ներկայացնելն օրենքով սահմանված կարգով առնվազն երեք տարի բնակվել է Հայաստանի Հանրապետությունում

Մշտական կացության կարգավիճակը տրվում է նաև անձանց, ովքեր ազգությամբ հայ են կամ Հայաստանի Հանրապետությունում իրականացնում են ձեռնարկատիրական գործունեություն:

Բնակարանի և գոյության միջոցների վերաբերյալ պահանջները համարվում են բավարարված, երբ օտարերկրացին ունի բավարար միջոցներ իր և իր ընտանիքի անդամների կեցության ծախսերը հոգալու համար կամ ունի ընտանիքի անդամ/ներ/, ով հնարավորություն ունի ապահովելու նրա բնակության ծախսերը:

Մշտական կացության կարգավիճակը տրվում է 5 տարի ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ նույն ժամկետով երկարաձգելու հնարավորությամբ<sup>13</sup>: Ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ստանալու համար ներկայացված դիմումի մերժումը օտարերկրացին կարող է բողոքարկել դատական կարգով:

Հատուկ կացության կարգավիճակ տրվում է ազգությամբ հայ օտարերկրացիներին: Հատուկ կացության կարգավիճակ կարող է տրվել նաև Հայաստանի Հանրապետությունում տնտեսական կամ մշակութային գործունեություն ծավալող այլ օտարերկրացիների: Հատուկ կացության կարգավիճակ տրվում է տասը տարի ժամկետով: Այն կարող է տրվել մեկից ավելի անգամ: Ազգությամբ հայ լինելուց և Հայաստանի Հանրապետությունում տնտեսական կամ մշակութային գործունեություն ծավալելուց բացի, «Օտարերկրացիների մասին» օրենքը որևէ այլ պայմաններ չի սահմանում հատուկ կացության կարգավիճակ ստանալու համար դիմողների համար:

Հատուկ կացության կարգավիճակ ստանալու համար դիմումը Հայաստանի Հանրապետության տարածքում ներկայացվում է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն: Եթե անձը մտադիր է դիմում ներկայացնել օտարերկրյա պետությունում, դա պետք է իրականացվի Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի միջոցով:

113 «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի հոդված 16



Հատուկ կացության կարգավիճակ տալու կամ մերժելու որոշում կայացնում է Հայաստանի Հանրապետության Նախագահը: Այդ որոշումը վերջնական է և ենթակա չէ բողոքարկման<sup>114</sup>:

Համաձայն «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի՝ օտարերկրյա պետության կողմից տրված՝ քաղաքացիություն չունեցող անձի ճամփորդական փաստաթղթով Հայաստան ժամանած քաղաքացիություն չունեցող անձինք պետք է ստանան միևնույն վերաբերմունքը՝ կացության կարգավիճակի տրամադրման և դադարեցման հարցերում, ինչ որ օտարերկրյա քաղաքացիները:

#### **4.5. Ընտանիքի վերամիավորումը**

Թեև 1954թ. Կոնվենցիան չի անդրադառնում ընտանիքի վերամիավորման խնդրին, Պայմանավորվող պետություններին այնուամենայնիվ խրախուսվում է նպաստել քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակով անձանց վերամիավորմանը իրենց ամուսինների և երեխաների հետ<sup>115</sup>: Ընտանիքի միասնականության իրավունքն ամրագրված է անձի մասնավոր և ընտանեկան կյանքի հանդեպ հարգանքի իրավունքի ներքո՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի հոդված 8-ով:

«Օտարերկրացիների մասին» օրենքը շատ սահմանափակ դրույթներ է պարունակում ընտանիքի վերամիավորման վերաբերյալ: Այդ դրույթներով սահմանված է, որ Հայաստանում ժամանակավոր կացության կարգավիճակ շնորհելու հիմք կարող են հանդիսանալ հետևյալ գործոնները՝

- Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը, ծնողը կամ զավակը լինելը.
- Հայաստանի Հանրապետության քաղաքացու կամ Հայաստանի Հանրապետությունում մշտական կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը

---

114 «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի հոդված 18

115 ՄԱԿ ՓԳՀ Ապաքաղաքացիության մասին ուղեցույց թիվ 3-ի պարբերություն 32

կամ մերձավոր ազգականը (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) լինելը:<sup>116</sup>

Այդպիսով, «Օտարերկրացիների մասին» օրենքը չի ապահովում ընտանիքի հետ վերամիավորվելու ավտոմատ իրավունք, այլ միայն հնարավորություն է ընձեռում ընտանիքի անդամներին ստանալ կացության կարգավիճակ՝ ընդհանուր պայմաններով, որը բավարար չէ քաղաքացիություն չունեցող անձի պաշտպանության համար, քանի որ որևէ միջոցառումներ չեն ձեռնարկվում ընտանիքի այն անդամների Հայաստան մուտքը ապահովելու համար, ովքեր չունեն վավեր ճամփորդական փաստաթղթեր:

#### 4.6. Ինքնության վկայականները

Անձնագրային և վիզաների վարչության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց փաստաթղթավորման կարգը և կացության վկայականի նկարագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման համաձայն տրամադրվող վկայականը հանդիսանում է ինքնության վկայական, ճամփորդական փաստաթուղթ, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձի կացության կարգավիճակ հավաստող փաստաթուղթ: Քաղաքացիություն չունեցող անձանց ինքնության վկայականների տրամադրման վերաբերյալ որևէ այլ իրավական փաստաթուղթ գոյություն չունի: Կառավարության որոշման համաձայն քաղաքացիություն չունեցող անձանց տրամադրվող փաստաթուղթը կարող է համարվել ինքնության վկայական: Այնուամենայնիվ, նման փաստաթղթի տրամադրման համար Հայաստանում մշտական բնակությունը կամ «կենսական շահերի կենտրոնի» առկայությունը պարտադիր պահանջ սահմանելով՝ Հայաստանը ի կատար չի ածում 1954թ. Կոնվենցիայից բխող իր պարտավորությունները, որով սահմանված է, որ Պայմանավորվող պետություններն ինքնության վկայականներ են տալիս իրենց տարածքում գտնվող ցանկացած քաղաքացիություն չունեցող անձի [շեշտադրումը՝ հեղինակի], որը չունի վավեր ճամփորդական փաստաթուղթ:<sup>117</sup>

116 «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի հոդված 15

117 Կոնվենցիայի հոդված 27

#### 4.7. Ճամփորդական փաստաթղթերը

Ինչպես նշվել է վերևում, «Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց փաստաթղթավորման կարգը և կացության վկայականի նկարագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման համաձայն տրամադրված կացության վկայականը նաև ծառայում է որպես ճամփորդական փաստաթուղթ՝ համաձայն անձնագրային և վիզաների վարչության մեկնաբանության: Այս դիրքորոշումը վերահաստատվել է ՀՀ վարչական դատարանի կողմից պրն Ռ. Գ.-ի ներկայացրած հայցի հիման վրա 2010թ. մարտի 26-ին կայացրած որոշմամբ: Վերջինս քաղաքացիություն չունեցող անձ էր, որին շնորհվել էր կացության կարգավիճակ՝ 2009թ. որոշման համաձայն: Պրն. Ռ. Գ.-ն հայտարարել է, որ իր կացության վկայականը չի համապատասխանում 1954թ. Կոնվենցիայով սահմանված՝ քաղաքացիություն չունեցող անձանց տրամադրվող ճամփորդական փաստաթղթերի միջազգայնորեն ընդունված չափանիշներին<sup>118</sup>, և օտարերկրյա դեսպանությունները հրաժարվում են այն ճանաչել և վիզա ամրագրել դրանում:

Կացության վկայականը երկլեզու (հայերեն-անգլերեն) փաստաթուղթ է՝ բաղկացած 32 էջից: Այն կոչվում է ԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ: Այնտեղ նշվում է, որ «ՎԿԱՅԱԿԱՆԸ ՎԱՎԵՐԱԿԱՆ Է ԲՈՂՈՐ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ» և որ «ՎԿԱՅԱԿԱՆԸ ԿՐՈՂԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՆ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ»: Այս փաստաթուղթը կրողները պետք է երկրից մեկնելու համար ձեռք բերեն ելքի արտոնագիր (միևնույն պայմաններով, ինչ քաղաքացիները): Կրկին երկիր մուտք գործելու համար մուտքի վիզա անհրաժեշտ չէ:

Ռ.Գ.-ի գործով ՀՀ վարչական դատարանը որոշեց, որ նրան տրամադրված կացության վկայականը վավեր ճամփորդական փաստաթուղթ է՝ տրված համաձայն 1954թ. Կոնվենցիայի, քանի որ Որոշումը հղում է կատարում Կոնվենցիային (մինչդեռ վկայականը ինքը նման հղում չի կատարում) և քանի որ վկայականը պարունակում է վերը նշված նախադասությունները՝ օտարերկրյա պետություններում գործելու մասին, ինչը միակ պատճառն է համաձայն Կոնվենցիայի՝ քաղաքացիություն չունեցող անձանց ճամփորդա-

118 Տես որոշումը

կան փաստաթղթեր տրամադրելու համար<sup>119</sup>:

Քաղաքացիություն չունեցող անձանց կացության վկայականը պարունակում է մի շարք դրական տարրեր, մասնավորապես՝ 5 տարվա վավերականության ժամկետը և այն դրույթը, որ այդ վկայականն ունեցողը գտնվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո, որը վերաբերմունքի ավելի բարձր ստանդարտ է ապահովում, քան սահմանված է 1954թ. Կոնվենցիայով: Այնուամենայնիվ, այն չի համապատասխանում 1954թ. Կոնվենցիայի Հավելվածով սահմանված չափանիշներին որոշ առումներով, մասնավորապես՝

- Համաձայն Հավելվածի՝ Կոնվենցիայի 28-րդ հոդվածով սահմանված ճամփորդական փաստաթուղթը պետք է պարունակի նշում այն մասին, որ այն ունեցողը հանդիսանում է քաղաքացիություն չունեցող անձ՝ համաձայն 1954թ. սեպտեմբերի 28-ի Կոնվենցիայի<sup>120</sup>: Մինչդեռ «Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցողանձանց փաստաթղթավորման կարգը և կացության վկայականի նկարագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման համաձայն տրվող կացության վկայականը նման նշում չի պարունակում.
- Համաձայն Հավելվածի՝ Կոնվենցիայով նախատեսված ճամփորդական փաստաթղթերի տրամադրման համար գանձվող գումարը չպետք է գերազանցի տվյալ պետության անձնագրի տրամադրման համար սահմանված նվազագույն վճարի չափը<sup>121</sup>: Ներկայումս, համաձայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի, Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր տալու համար տուրքի չափը սահմանվում է 1000 ՀՀ դրամի չափով, մինչդեռ քաղաքացիություն չունեցող անձանց կացության վկայական տրամադրելու համար սահմանված տուրքի չափը կազմում է

119 նույնը

120 Հավելվածի պարբերություն 1

121 Հավելվածի պարբերություն 3

1500 ՀՀ դրամ<sup>122</sup>:

#### **4.8. Ազատ տեղաշարժվելու իրավունքը**

Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետության տարածքում ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք՝ համաձայն ՀՀ սահմանադրության: Սահմանադրությամբ նաև երաշխավորվում է ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու և քաղաքացիություն չունեցող անձի՝ Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու և Հայաստանի Հանրապետություն վերադառնալու իրավունքը<sup>123</sup>: Այնուամենայնիվ, ազատ տեղաշարժվելու իրավունքը երաշխավորվում է միայն այն անձանց, ովքեր օրինական կարգով են գտնվում երկրում:

#### **4.9. Վարձու աշխատանքը և անհատ ձեռնարկատիրությունը**

«Օտարերկրացիների մասին» օրենքով սահմանվում է, որ օտարերկրացիներն իրավունք ունեն ազատորեն տնօրինելու իրենց աշխատանքը, ընտրելու մասնագիտության և գործունեության տեսակը, զբաղվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված տնտեսական գործունեությամբ: Երաշխավորվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավահավասարության սկզբունքը՝ անկախ նրանց սեռից, ռասայից, ազգությունից, լեզվից, քաղաքացիությունից և աշխատողի գործնական հատկանիշների հետ չկապված այլ հանգամանքներից<sup>124</sup>:

«Օտարերկրացիների մասին» օրենքով օտարերկրացիները կարող են Հայաստանի Հանրապետությունում իրականացնել աշխատանքային գործունեություն՝ աշխատանքի թույլտվություն ձեռք բերելու դեպքում:

---

122 «Պետական տուրքի մասին» 1997թ. դեկտեմբերի 27-ի ՀՀ օրենքի հոդված 14

123 Սահմանադրության հոդված 25

124 Օրենքի հոդված 22

Գործատուներն իրավունք ունեն օտարերկրացի աշխատողի հետ աշխատանքային պայմանագիր (ծառայությունների մատուցման պայմանագիր) կնքելու և նրա աշխատանքն օգտագործելու՝ լիազորված մարմնի կողմից օտարերկրացի աշխատողին տրված աշխատանքի թույլտվության հիման վրա: Օտարերկրացիների աշխատանքի և զբաղվածության բնագավառում Հայաստանի Հանրապետության լիազորված պետական կառավարման մարմինը օտարերկրացի աշխատողի համար աշխատանքի թույլտվություն տրամադրելիս հաշվի է առնում Հայաստանի Հանրապետության աշխատանքի շուկայի կարիքները և զարգացումները:

Հայաստանի Հանրապետության աշխատանքի շուկայի կարիքների գնահատման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ գործատուի համար սահմանվում է ժամկետ, որի ընթացքում նա պարտավոր է իր մոտ առկա թափուր աշխատատեղը համալրել Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից:

Սահմանված ժամկետում զբաղվածության հանրապետական ծառայությունների կողմից իր պահանջներին համապատասխանող թեկնածուի առաջադրման բացակայության դեպքում գործատուն կարող է գտնել այդ պահանջներին համապատասխանող օտարերկրացու և դիմել լիազորված մարմին՝ կոնկրետ օտարերկրացի աշխատողի համար կոնկրետ ժամկետով աշխատանքի թույլտվության տրամադրման համար՝ ներկայացնելով Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը:

«Օտարերկրացիների մասին» օրենքով սահմանվում են բացառություններ աշխատանքի թույլտվություն ձեռք բերելու պահանջից, որոնք տարածվում են Հայաստանի Հանրապետությունում մշտական և հատուկ կացության կարգավիճակ ունեցողների, փախստականի կարգավիճակ ունեցողների, որոշակի հիմքերով Հայաստանի Հանրապետությունում մշտական կացության կարգավիճակ ունեցողների և այլոց վրա<sup>125</sup>:

Անհրաժեշտ է նշել, որ այս գեկույցը պատրաստելու պահին աշխատանքի թույլտվություն ստանալու վերաբերյալ «Օտարերկ-

125 Օրենքի հոդված 23

րացիների մասին» օրենքի պահանջը դեռևս չէր գործում դրա կիրարկման վերաբերյալ կառավարության որոշման բացակայության պատճառով:

#### **4.10. Կրթության իրավունքը**

Ինչ վերաբերում է կրթության իրավունքին, օտարերկրյա դպրոցական վկայագրերի, դիպլոմների ու գիտական աստիճանների ճանաչման, տուրքերից ու վճարումներից ազատման, կրթաթոշակների շնորհման կապակցությամբ քաղաքացիություն չունեցող անձանց հանդեպ կիրառվում է նույն վերաբերմունքը, ինչ օտարերկրյա քաղաքացիների հանդեպ, քանի որ ոչ «Օտարերկրացիների մասին» օրենքը, ոչ էլ կառավարության համապատասխան որոշումները տարբերակում չեն դնում այդ երկու խմբերի միջև՝ Հայաստանի Հանրապետությունում նրանց ունեցած իրավունքների տեսանկյունից:

Հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է, իսկ միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է<sup>126</sup>: Պետությունը միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար երաշխավորում է անվճար միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտական կրթություն:

#### **4.11. Սոցիալական ապահովության և սեփականության իրավունքը**

ՀՀ սահմանադրության և աշխատանքային օրենսդրության համաձայն<sup>127</sup> յուրաքանչյուր աշխատող, լինի քաղաքացի, օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձ, ունի արդարացի և օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի, ինչպես նաև անվտանգության և այլ պահանջները բավարարող աշխատանքային պայմանների իրավունք: Յուրաքանչյուր ոք, լինի քաղաքացի, օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձ, ունի ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով

---

126 ՀՀ սահմանադրության հոդված 39 և «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի հոդված 1

127 ՀՀ սահմանադրության հոդված 32

նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք: Սոցիալական ապահովության ծավալն ու ձևերը սահմանվում են օրենքով:<sup>128</sup>

Քաղաքացիություն չունեցող անձանց համար սեփականություն ունենալու գծով միակ սահմանափակումը վերաբերում է հողի սեփականությանը: Համաձայն ՀՀ սահմանադրության և հողային օրենսգրքի՝ օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք չեն կարող հողի նկատմամբ ունենալ սեփականության իրավունք<sup>129</sup>: Բացառություն են կազմում միայն Հայաստանի Հանրապետությունում կացության հատուկ կարգավիճակ ունեցող անձինք<sup>130</sup> :

#### **4.12. Կրոնի ազատությունը**

Կրոնի ազատության իրավունքը երաշխավորվում է բոլորին ՀՀ սահմանադրության հոդված 26-ի համաձայն, ըստ որի «յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ քարոզի, եկեղեցական արարողությունների և պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատությունը»:

#### **4.13. Ազատումը փոխադարձության սկզբունքից**

Կոնվենցիայի հոդված 7-ով սահմանվում է, որ երեք տարվա բնակությունից հետո քաղաքացիություն չունեցող բոլոր անձինք Պայմանավորվող պետությունների տարածքում ազատվում են օրենսդրորեն սահմանված փոխադարձության պահանջից և Պայմանավորվող պետությունները բարեհաճ են վերաբերվում քաղաքացիություն չունեցող անձանց, փոխադարձության բացակայությամբ, բացի 2-րդ և 3-րդ կետերով տրամադրվող իրավունքներից ու արտոնություններից, այլ իրավունքներ ու արտոնություններ տրամադրելու և փոխադարձությունից ազատումը քաղաքացիու-

128 ՀՀ սահմանադրության հոդված 37

129 Սահմանադրության հոդված 31 և Օրենսգրքի հոդված 4

130 Հողային օրենսգրքի հոդված 4



թյուն չունեցող այն անձանց վրա տարածելու հնարավորությանը, ովքեր չեն բավարարում 2-րդ և 3-րդ կետերում նշված պայմանները:

«Փոխադարձությունից ազատումը» նշանակում է, որ անձին պետք է տրամադրվեն իրավունքներ, որոնք սովորաբար տրվում են փոխադարձության հիմունքով, առանց փոխադարձություն պահանջելու: Քաղաքացիություն չունեցող անձանց փոխադարձությունից ազատումը հիմնավորված է այն փաստով, որ նրանք չեն օգտվում որևէ երկրի պաշտպանությունից: Հետևաբար, նրանք չեն կարող համապատասխանել փոխադարձության կանոններին:

Այս դրույթը չի ներառվել ոչ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքում, և ոչ էլ փոխադարձության սկզբունքին հղում անող օրենսդրական այլ ակտերում:

#### **4.14. Ազատումը բացառիկ միջոցառումներից**

Կոնվենցիայի հոդված 8-ով սահմանվում է, որ այն բացառիկ միջոցառումները, որոնք կարող են կիրառվել ընդդեմ օտար պետության քաղաքացիների անձի, սեփականության կամ շահերի, Պայմանավորվող պետությունները չեն կիրառում քաղաքացիություն չունեցող անձի նկատմամբ՝ պարզապես հիմնվելով նախկինում նրա՝ տվյալ երկրի քաղաքացիություն ունենալու վրա: Այս դրույթը չի ներառվել ՀՀ օրենսդրությունում:

#### **4.15. Անձնական կարգավիճակը**

Կոնվենցիայի հոդված 12-ով սահմանվում է, որ քաղաքացիություն չունեցող անձի անձնական կարգավիճակը որոշվում է նրա մշտական բնակության երկրի օրենսդրությամբ կամ, եթե նա չունի մշտական բնակության վայր, բնակության երկրի օրենսդրությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 1262-ով սահմանվում է, որ քաղաքացիություն չունեցող անձի անձնական օրենքն այն պետության իրավունքն է, որտեղ տվյալ անձը մշտապես բնակվում է:

Կոնվենցիայի հոդված 12.2-ը սահմանում է, որ քաղաքացիություն չունեցող անձի կողմից նախկինում ձեռք բերված և անձնական կարգավիճակից կախված իրավունքները, մասնավորապես,

ամուսնության հետ կապված իրավունքները, հարգվում են Պայմանավորվող պետության կողմից, անհրաժեշտության դեպքում, տվյալ պետության օրենսդրությամբ պահանջվող ձևականություններին համապատասխան՝ պայմանով, որ խնդրո առարկա իրավունքն այդ պետության օրենսդրությամբ կճանաչվեր, եթե անձը չլիներ քաղաքացիություն չունեցող անձ: Այդ առումով էական է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 1271-ը, որը, մասնավորապես, սահմանում է, որ օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների կողմից համապատասխան պետությունների օրենքներով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարված քաղաքացիական կացության ակտերի հավաստման նպատակով տրված փաստաթղթերը Հայաստանի Հանրապետությունում վավեր են հյուպատոսական օրինականացման առկայության դեպքում, եթե այլ բան սահմանված չէ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

#### **4.16. Հեղինակային իրավունքները և արդյունաբերական սեփականությունը**

Կոնվենցիայի հոդված 14-ով սահմանվում է, որ արդյունաբերական սեփականության, ինչպիսին են գյուտերը, արդյունաբերական դիզայնը կամ նմուշը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, ինչպես նաև գրական, արվեստի և գիտական ստեղծագործությունների նկատմամբ իրավունքների պաշտպանության կապակցությամբ քաղաքացիություն չունեցող անձին իր փաստացի բնակության երկրում տրամադրվում է նույն պաշտպանությունը, ինչ այդ երկրի քաղաքացիներին: Ցանկացած այլ պայմանավորվող պետության տարածքում նրան տրամադրվում է նույն պաշտպանությունը, ինչ այդ տարածքում այն երկրի քաղաքացիներին, որտեղ նա ունի իր փաստացի բնակության վայրը:

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» 2006 թվականի հունիսի 15-ի ՀՀ օրենքի 71 հոդվածով սահմանվում է, որ օտարերկրյա պետությունների քաղաքացիները կամ ռեզիդենտները, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան կամ փոխադարձության

սկզբունքով, օգտվում են օրենքով նախատեսված իրավունքներից: 2008 թվականի հունիսի 10-ի «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքի հոդված 4-ով ինչպես նաև 2010թ. հունիսի 10-ի «Ապրանքային նշանների» մասին օրենքով սահմանված է, որ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերին համապատասխան կամ փոխադարձության սկզբունքով օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձինք օգտվում են այդ օրենքներով նախատեսված իրավունքներից:

#### **4.17. Միավորումներ կազմելու իրավունքը**

Կոնվենցիայի հոդված 15-ով սահմանվում է, որ ոչ քաղաքական և շահույթ չհետապնդող միությունների և արհմիությունների կապակցությամբ Պայմանավորվող պետություններն իրենց տարածքում օրինականորեն գտնվող քաղաքացիություն չունեցող անձանց հատկացնում են հնարավորինս և, ամեն դեպքում, ոչ պակաս բարեհաճ վերաբերմունք, քան միևնույն հանգամանքներում հատկացվում է օտարերկրացիներին: Այս իրավունքը նաև սահմանված է ՀՀ սահմանադրության հոդված 28-ով, ըստ որի, յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում՝ արհեստակցական միություններ կազմելու և դրանց անդամագրվելու իրավունք:

#### **4.18. Դատարան դիմելու իրավունքը**

Համաձայն Կոնվենցիայի հոդված 16-ի՝ յուրաքանչյուր քաղաքացիություն չունեցող անձ իրավունք ունի ազատորեն դիմելու Պայմանավորվող պետությունների տարածքում գտնվող դատարաններին:

Այն Պայմանավորվող պետությունում, որտեղ քաղաքացիություն չունեցող անձն ունի իր փաստացի բնակության վայրը, դատարան դիմելու հետ կապված հարցերում նա օգտվում է նույն վերաբերմունքից, ինչ քաղաքացիները՝ ներառյալ իրավաբանական օգնությունն ու ազատումը *cautio judicatum solvi*-ից:

Այս իրավունքը ամրագրված է ՀՀ սահմանադրության 19-րդ հոդվածով, որով սահմանվում է, որ ուրաքանչյուր ոք ունի իր

խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Ինչ վերաբերում է իրավական օժանդակությանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 165 հոդվածի համաձայն՝ բոլոր կասկածյալներին և մեղադրյալներին երաշխավորվում է անվճար իրավաբանական օգնությունը, եթե նրանք համապատասխանում են որոշակի պահանջներին: Ի լրումն, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի հոդված 41-ով անվճար իրավաբանական օգնություն է ապահովվում քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով՝ որոշակի պայմանների բավարարման դեպքում:

#### **4.19. Ազատ մասնագիտությունները**

Համաձայն ՀՀ սահմանադրության հոդված 32-ի՝ յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ընտրության ազատություն: Ավելին, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև «Փաստաբանության մասին» օրենքներով որևէ սահմանափակում սահմանված չէ համապատասխան դրույթների՝ օտարերկրացիների հանդեպ կիրառելիության առումով:

#### **4.20. Վարչական օժանդակությունը**

Հայաստանը չի ընդունել Կոնվենցիայի հոդված 25-ը կիրարկող օրենսդրություն: Միակ համապատասխան դրույթը պարունակվում է Միգրացիոն պետական ծառայության կանոնադրության կետ 7(9)-ում՝ համաձայն որի Ծառայությունը օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց պետք է տրամադրի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավական, սոցիալական և այլ բնույթի օժանդակություն: Այնուամենայնիվ, գործնականում այս դրույթը մեկնաբանվում է որպես քաղաքացիություն չունեցող փախստականներին օժանդակության տրամադրման պահանջ (այսինքն՝ Ադրբեյջանից փախստականներին):

#### **4.21. Չափաբաժինները և բնակարանով ապահովումը**

Իրականացված հետազոտության արդյունքում չի հայտնաբերվել որևէ օրենսդրական դրույթ, որը կվերաբերեր չափաբաժիններով և բնակարանով ապահովմանը: Այդպիսով, թվում է, թե այդ հարցերը օրենսդրական կարգավորում չեն ստացել, և չեն գտնվում պետական մարմինների վերահսկողության ներքո:

#### **4.22. Հանրային օժանդակություն**

Համաձայն ՀՀ սահմանադրության և «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի՝ յուրաքանչյուր անձ ունի անվճար բուժօգնության իրավունք, որի տեսակները յուրաքանչյուր տարի հաստատվում են նպատակային ծրագրով<sup>131</sup>: Այդպիսով, պետական երաշխավորությամբ տրամադրվող առաջնային բուժօգնության առումով քաղաքացիություն չունեցող անձանց հանդեպ ցուցաբերվում է նույն մոտեցումը, ինչ ՀՀ քաղաքացիների հանդեպ:

Համաձայն «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի հոդված 6-ի՝ սոցիալական աջակցություն ստանալու իրավունք ունեն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, Հայաստանի Հանրապետությունում կացության համապատասխան կարգավիճակ ունեցող օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք: Համանման դրույթ է պարունակվում նաև «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի հոդված 2-ում:

---

131 Սահմանադրության հոդված 38 և Օրենսգրքի հոդված 4

## ԲԱԺԻՆ 5.

### Ադրբեջանից փախստականները և նրանց երեխաները

1988-1992թթ. ընթացքում Հայաստանը հարևան Ադրբեջանից ընդունել է մոտ 360,000 ազգությամբ հայ փախստականների: Համաձայն Միգրացիոն պետական ծառայության՝ այդ տարիներից ի վեր փախստականներից շուրջ 85,000-ը ձեռք է բերել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

Այս փախստականները Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք են բերում ճանաչման միջոցով՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի հոդված 10(2)-ի՝ որպես «մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելու օրը վերջին երեք տարին Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձինք կամ օտարերկրյա քաղաքացի չհանդիսացող նախկին ԽՍՀՄ այլ հանրապետությունների քաղաքացիները, ովքեր սույն օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարվա ընթացքում դիմում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու համար»:<sup>132</sup> Փախստականները, ովքեր բավարարում են նշված պահանջներին, ձեռք են բերում ՀՀ քաղաքացիություն առանց ՀՀ քաղաքացիության համար դիմումի ներկայացման օրվա դրությամբ այլ երկրի քաղաքացիություն ձեռք բերած լինելու վերաբերյալ անհատական որոշման: Հետևաբար, ստացվում է, որ անձանց այդ խումբը ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության, ինչպես նաև Միգրացիոն պետական ծառայության կողմից դիտարկվում է որպես քաղաքացիություն չունեցող անձինք *prima facie* հիմունքով:

Ադրբեջանից գաղթած փախստականների երեխաների երեք հիմնական կատեգորիա գոյություն ունի.

132 Հոդված 10(2)-ը 1995թ. նոյեմբերի 6-ի խմբագրությամբ: Սույն դրույթի համաձայն ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու համար սահմանված վերջնաժամկետը մի քանի անգամ երկարաձգվել է (վերջին անգամ՝ մինչև 2012թ. դեկտեմբերի 31-ը): Երեք տարվա բնակության պահանջը վերացվել է 1999թ.:

- Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունում ծնված երեխաներ, այսինքն՝ երեխաներ, ովքեր ծնվել են մինչև 1991թ. սեպտեմբերի 21-ը.
- Անկախ Հայաստանի Հանրապետությունում ծնված երեխաներ, այսինքն՝ երեխաներ, ովքեր ծնվել են 1991թ. սեպտեմբերի 21-ից հետո. և
- Երեխաներ, ովքեր ծնվել են Հայաստանի Հանրապետությունից դուրս և ում ծնողներն այնուիետև ձեռք են բերել ՀՀ քաղաքացիություն:

Անձանց առաջին կատեգորիան Հայաստանի Հանրապետության քաղաքացի է ճանաչվում համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի հոդված 10(1)-ի, որը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է ճանաչում «Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող նախկին ՀԽՍՀ քաղաքացիներին, ովքեր մինչև Սահմանադրության ուժի մեջ մտնելը ձեռք չեն բերել այլ պետության քաղաքացիություն»:

Եթե երկրորդ կատեգորիային պատկանող անձինք ծնվում են ծագումով հայ փախստական ծնողներից, ովքեր հեռացել են Ադրբեջանից 1988-1992թթ., նրանք ձեռք են բերում ՀՀ քաղաքացիություն ծնունդով՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի հոդված 12-ի (Հայաստանի Հանրապետությունում ծնված երեխաներ, ում ծնողները քաղաքացիություն չունեցող անձինք են): Եթե նրանք ծնվել են ծնողներից, որոնցից մեկը ՀՀ քաղաքացի է, իսկ մյուսը՝ փախստական Ադրբեջանից, ապա երեխան Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն է ձեռք բերում համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի հոդված 11(2)-ի, որը, մասնավորապես, նշում է, որ երեխան, ում ծնողներից մեկը նրա ծնվելու պահին Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, իսկ մյուսն անհայտ է կամ քաղաքացիություն չունեցող անձ, ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

Ինչ վերաբերում է երրորդ կատեգորիային, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի հոդված 16-ը նախատեսում էր, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերած ծնողների մինչև 14 տարեկան

երեխան ավտոմատ կերպով ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն: Նախքան 2011թ. դեկտեմբերին «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները, 14-18 տարեկան երեխաները դուրս էին մնացել իրավական դաշտից, քանի որ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը չէր կարգավորում նրանց կարգավիճակը<sup>133</sup>: Հետևաբար, նրանք չունեին ՀՀ քաղաքացիություն ստանալու հնարավորություն՝ հետևելով իրենց ծնողներին: 2011թ. փոփոխություններից հետո, այդ երեխաները կարող են ձեռք բերել ՀՀ քաղաքացիություն իրենց գրավոր համաձայնությամբ:

---

133 «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի հոդված 22-ը միակ հոդվածն էր, որն անդրադառնում էր 14-18 տարեկան երեխաների քաղաքացիության կարգավիճակին, սակայն այն անդրադառնում էր միայն այն իրադրություններին, երբ առկա էր երեխայի քաղաքացիության փոփոխության հարցը նրա ծնողների կողմից քաղաքացիության փոփոխության արդյունքում, այլ ոչ թե այն դեպքերին, երբ երեխան քաղաքացիություն էր ձեռք բերում իր ծնողների կողմից ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում: «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի հոդված 22-ը մասնավորապես սահմանում էր, որ ծնողների քաղաքացիության փոփոխության դեպքում, 14-18 տարեկան երեխաների քաղաքացիությունը փոխվում է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ երեխաների համաձայնության առկայության դեպքում:



## ԲԱԺԻՆ 6.

### Եզրահանգումներ և առաջարկություններ

#### 6.1. Քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանությունը

- Հայաստանի Հանրապետությունը միացել է «Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին» 1954թ. Կոնվենցիային: Այնուամենայնիվ, միջազգային իրավական պարտավորությունները, որոնք ստանձնված են համաձայն կոնվենցիայի, լիարժեքորեն չեն արտացոլվում ազգային օրենսդրությունում: Օրենքով նախատեսված չէ ընթացակարգ՝ ուղղված ապաքաղաքացիությունը որոշելուն: Քաղաքացիություն չունեցող անձի սահմանումը համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի, չի համապատասխանում 1954թ. Կոնվենցիայի սահմանմանը: Ավելին «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում և «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքում տրված են քաղաքացիություն չունեցող անձի երկու տարբեր սահմանումներ: Գործող համակարգում՝ ոչ օրինական կարգով Հայաստան ժամանող կամ Հայաստանում գտնվող անձինք, և անգամ այն անձինք, ովքեր ՀՀ են ժամանում քաղաքացիություն չունեցող անձի վավեր ճամփորդական փաստաթղթով, չեն կարող օգտվել 1954թ. Կոնվենցիայով սահմանված իրավունքներից:
- Պաշտպանության գծով այլ թերություններից են քաղաքացիություն չունեցող անձանց՝ ընտանիքի հետ վերամիավորման դրույթների բացակայությունը, Հայաստանի Հանրապետությունում ինքնության վկայականներ չտրամադրելը քաղաքացիություն չունեցող բոլոր անձանց, Հայաստանի Հանրապետությունում տրամադրված ճամփորդական փաստաթղթերի անհամապատասխանությունը 1954թ. Կոնվենցիայի հոդված 28-ի հավելվածի դրույթներին, աշխատանքի թույլտվություն ձեռք բերելու պահանջը աշխատա-

շուկա մուտք գործելու համար, ազգային օրենսդրությունում փոխադարձության սկզբունքը և բացառիկ միջոցները բացառող դրույթներ չներառելը, վարչական օժանդակություն ցուցաբերելու համար պատասխանատու մարմնի բացակայությունը, ինչպես նաև արվեստի ստեղծագործությունների և արդյունաբերական սեփականության նկատմամբ իրավունքների պաշտպանության գծով քաղաքացիություն չունեցող անձանց և քաղաքացիների համար հավասար վերաբերմունք չապահովելը:

- Ի վերջո, չկա լիարժեք և միաժամանակ թարմ վիճակագրական տեղեկատվություն՝ երկրում ապաքաղաքացիության գծով առկա իրավիճակի վերաբերյալ:

## Առաջարկություններ

1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում քաղաքացիություն չունեցող անձանց սահմանումը պետք է վերանայվի և ապահովվի համապատասխանություն 1954թ. Կոնվենցիայի հոդված 1-ի հետ: Նաև պետք է համապատասխանեցվեն քաղաքացիություն չունեցող անձի սահմանումները «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում և «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքում:
2. Պետք է ներդրվի ապաքաղաքացիության որոշման ֆորմալ ընթացակարգ՝ հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը և ՄԱԿ ՓԳՀ-ի առաջարկությունները:
3. Ոչ ոք (բացառությամբ այն անձանց, ովքեր ընկնում են 1954թ. Կոնվենցիայով սահմանված մեկ կամ ավելի բացառությունների տակ) չպետք է զրկվի քաղաքացիություն չունեցող անձ ճանաչվելու իրավունքից: Մասնավորապես, այն անձինք, ովքեր ժամանել են կամ բնակվում են Հայաստանում ապօրինաբար, և նրանք, ովքեր ժամանել են մեկ այլ պետության կողմից տրամադրված՝ քաղաքացիություն չունեցող անձի վավեր ճամփորդական փաստաթղթով, պետք է անարգել իրավունք ունենան դիմելու քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի որոշման ընթացակարգի: «Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց փաս-

տաթղթավորման կարգը և կացության վկայագրի նկարագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված պահանջը՝ բնակչության որոշակի ժամկետի և կենսական շահերի կենտրոնի վերաբերյալ, պետք է վերացվի:

4. Օրենսդրությունը պետք է վերանայվի՝ ապահովելու համար քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի համար դիմող անձի համար բոլոր իրավունքները՝ հիմնված իրավագրության և տարածքում ներկայության վրա, ինչպես նաև «օրինական կարգով երկրում գտնվողի» իրավունքները: Այդ կարգավիճակը պետք է ի թիվս այլ երաշխիքների, ապահովի ինքնության վկայականի իրավունքը, անհատ ձեռնարկատիրությամբ զբաղվելու իրավունքը, ազատ տեղաշարժվելու իրավունքը և արտաքսումից պաշտպանությունը:
5. Օրենսդրությունը պետք է վերանայվի՝ ապահովելու համար այն, որ ապաքաղաքացիության ճանաչումից հետո անձը ստանա կացության կարգավիճակ, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ անձը արդեն իսկ ունի կացության կարգավիճակ այնպիսի պետությունում, որտեղ նա կարող է վերադառնալ և բնակվել՝ իր իրավունքների լիարժեք պահպանմամբ:
6. «Օտարերկրացիների մասին» օրենքը պետք է փոփոխվի՝ ապահովելու համար ընտանիքի վերամիավորման ավտոմատ իրավունքը քաղաքացիություն չունեցող այն անձանց համար, ովքեր ստացել են կացության կարգավիճակ: Ավելին, պետք է ապահովվի Հայաստան մուտքը ընտանիքի այն անդամների համար, ովքեր չունեն վավեր ճամփորդական փաստաթղթեր:
7. ՀՀ օրենսդրությունը պետք է բարեփոխվի ապահովելու համար, որ ինքնության վկայականներ տրամադրվեն Հայաստանում քաղաքացիություն չունեցող բոլոր անձանց՝ համաձայն 1954թ. Կոնվենցիայի հոդված 27-ի:
8. 1954թ. Կոնվենցիայի հոդված 28-ի և դրա հավելվածի հետ լիակատար համապատասխանություն ապահովելու նպատակով և հաշվի առնելով որ 1954թ. Կոնվենցիայի համաձայն՝ Պայմանավորվող պետությունները պարտավոր են ճանաչել միայն հոդված 28-ի համաձայն տրամադրված ճամփորդական փաստաթղթերը, առաջարկվում է, որ ՀՀ օրենսդրությունում հա-

տուկ դրույթ սահմանվի՝ ապահովելով քաղաքացիություն չունեցող անձանց Կոնվենցիայով նախատեսված ճամփորդական փաստաթղթերի տրամադրումը<sup>134</sup>: Ավելին, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում պետք է փոփոխություն կատարվի՝ ապահովելով, որ քաղաքացիություն չունեցող անձանց ճամփորդական փաստաթղթերի տրամադրման համար գանձվող գումարը չգերազանցի քաղաքացուն անձնագրի տրամադրման համար սահմանված տուրքի չափը:

9. Հաշվի առնելով 1954թ. Կոնվենցիայում պարունակվող առաջարկությունը առ այն, որ քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքները՝ կապված վարձատրվող աշխատանքի հետ, պետք է նույնական լինեն տվյալ երկրի քաղաքացիություն ունեցող անձանց իրավունքների հետ, առաջարկվում է վերացնել աշխատանքի թույլտվության պահանջը քաղաքացիություն չունեցող անձանց համար: Ավելին, «Օտարերկրացիների մասին» օրենքը պետք է փոփոխվի՝ փոխադարձության սկզբունքը և բացառիկ միջոցառումները բացառելու համար, և պետք է սահմանվի վարչական օժանդակություն ապահովող մարմին՝ համաձայն 1954թ. Կոնվենցիայի հոդված 25-ի: Համապատասխան օրենսդրությունը պետք է փոփոխվի՝ հստակ կերպով հավասարեցնելով ՀՀ քաղաքացիների և ՀՀ-ում փաստացի բնակվող քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքները արդյունաբերական սեփականության և արվեստի ստեղծագործությունների նկատմամբ:

## 6.2. Ապաքաղաքացիության կանխումը

Հայաստանը միացել է «Ապաքաղաքացիության կրճատման մասին» 1961թ. Կոնվենցիային: Այնուամենայնիվ, ինչպես 1954թ. Կոնվենցիայի դեպքում, 1961թ. Կոնվենցիայի ոչ բոլոր դրույթներն են արտացոլում գտել ՀՀ օրենսդրությունում: Հայտնաբերված թերությունների թվում են՝

- ՀՀ օրենսդրությունում առկա չէ դրույթ, համաձայն որի պե-

<sup>134</sup> Նաև առաջարկվում է դիմել ՄԱԿ ՓԳՀ խորհրդատվությանը առ այն, թե ինչպես կարելի է ապահովել Կոնվենցիայի համաձայն տրված ճամփորդական փաստաթղթերի համապատասխանությունը ICAO-ի չափանիշներին:

տությունն իր քաղաքացիությունը կշնորհեր իր տարածքում ծնված ցանկացած անձի, որն այլապես կդառնար քաղաքացիություն չունեցող անձ, ինչպես դա պահանջվում է 1961թ. կոնվենցիայի հոդված 1-ով:

- «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքում առկա չէ դրույթ՝ կապված Հայաստանի Հանրապետության դրոշի ներքո լողացող նավի կամ Հայաստանի Հանրապետությունում գրանցված օդանավի վրա տեղի ունեցած ծնունդների հետ:
- Երաշխիք չի նախատեսված ապաքաղաքացիությունը կանխելու համար այն երեխաների համար, ում որդեգրած անձինք դիմում են ներկայացնում նրա քաղաքացիությունը փոխելու համար:
- «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքը (հոդված 17) ապաքաղաքացիությունից պաշտպանություն չի ապահովում այն երեխաների համար, որոնց ծնողներից մեկը կորցնում է ՀՀ քաղաքացիությունը, և երեխաների համար, որոնց նկատմամբ հաստատված է խնամակալություն կամ հոգաբարձություն (հոդված 21):
- «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը չի ապահովում ՀՀ քաղաքացիության դադարեցման պայմանավորված լինելը այլ երկրի քաղաքացիության ստացման կամ երաշխավորման հանգամանքով:
- Խաբեության կամ կեղծիքի հետևանքով քաղաքացիության դադարեցման վերաբերյալ ՀՀ օրենսդրության դրույթները չեն պարունակում ժամանակային սահմանափակում այդպիսի դադարեցման համար, ինչպես նաև որպես հստակ պահանջ չեն սահմանում համաչափության սկզբունքի պահպանումը: «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքը չի ներառում ընթացակարգային երաշխիքներ քաղաքացիության դադարեցման վերաբերյալ, ինչպես դա սահմանված է 1961թ. կոնվենցիայի 8(4) հոդվածով:

Ինչ վերաբերում է ապաքաղաքացիության ռիսկի վերացմանը, ապա առկա չեն բավարար պաշտպանության միջոցներ՝ ապահովելու համար բոլոր երեխաների ծննդի փաստի գրան-

ցումը:

Բացի այդ, քաղաքացիները դժվարությունների են հանդիպում անձնագրերի ձեռքբերման հարցում, քանի որ ոստիկանության տեսուչները հաճախ չեն պահպանում նրանց փաստացի բնակության վերաբերյալ արձանագրություն կազմելու պատշաճ կարգը:

Ավելին, արական սեռի քաղաքացիները դժվարանում են ստանալ անձնագիր, քանի որ անձնագրային բաժնի աշխատակիցները պահանջում են զինվորական հաշվառման փաստաթղթեր արական սեռի բոլոր ներկայացուցիչներից՝ անկախ զինապարտ լինելու կամ չլինելու հանգամանքից:

### Առաջարկություններ

10. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքում պետք է փոփոխություն կատարվի՝ արտացոլելու համար 1961թ. Կոնվենցիայի պահանջները այն մասին, որ ՀՀ քաղաքացիություն պետք է շնորհվի ՀՀ տարածքում ծնված այն երեխաներին, որոնք այլապես կլինեին քաղաքացիություն չունեցող անձ՝ ներառյալ այն երեխաներին, որոնց ծնողները օտարերկրյա քաղաքացիներ են, ովքեր չեն կարող իրենց քաղաքացիությունը փոխանցել երեխային:
11. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքում առաջարկվում է ամրագրել, որ Հայաստանի Հանրապետության դրոշի ներքո լողացող նավի կամ Հայաստանի Հանրապետությունում գրանցված օդանավի վրա տեղի ունեցած ծնունդը համարվում է տեղի ունեցած Հայաստանի Հանրապետությունում:
12. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքում առաջարկվում է փոփոխություն կատարել, ըստ որի՝ որդեգրված երեխայի կողմից ՀՀ քաղաքացիության կորուստը՝ հիմնված իրեն որդեգրող անձանց դիմումի վրա, պետք է պայմանավորված լինի այլ երկրի քաղաքացիություն ձեռք բերելով:
13. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի հոդված 24-ը պետք է փոփոխվի՝ ՀՀ քաղաքացիությունից հրաժարման համար նախապայման սահմանելով այլ երկրի քաղաքացիության ստացումը կամ այլ պետության կողմից

պաշտոնական հավաստումը (լիազոր մարմնի հավաստագիրը) առ այն, որ այդ անձին կշնորհվի քաղաքացիություն: Ավելին, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքը պետք է նաև ամրագրի այն, որ ՀՀ քաղաքացիության կորուստը այս դեպքում չի գործի քանի դեռ տվյալ անձը ձեռք չի բերել այլ երկրի քաղաքացիություն, ինչպես պահանջվում է 1961թ. Կոնվենցիայի հոդված 7-ի համաձայն:

14. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի հոդված 17.2 և 21-ը պետք է փոփոխվեն՝ ապահովելու, որ երեխայի կողմից ՀՀ քաղաքացիության կորուստը պայմանավորված լինի մեկ այլ պետության քաղաքացիության ձեռքբերմամբ, համաձայն 1961թ. հոդված 6-ի:
15. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքը պետք է փոփոխվի՝ ժամանակային սահմանափակում սահմանելով անձի քաղաքացիությունը դադարեցնելու համար՝ խաբեության կամ կեղծիքի արդյունքում ձեռք բերված քաղաքացիության դեպքում: Համապատասխանաբար, Օրենքը պետք է փոփոխվի՝ պահանջ սահմանելով որոշում կայացնողների համար՝ հաշվի առնելու նման խաբեության կամ կեղծիքի ծանրությունը՝ քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ որոշում կայացնելիս: Օրենքի հոդված 23-ում պետք է ներառվի դրույթ, որով կսահմանվի, որ կեղծ փաստաթղթերի կամ կեղծ տվյալների հիման վրա քաղաքացիություն ձեռք բերելու փաստը պետք է ապացուցվի դատական կարգով և որ քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ որոշումները ենթակա են դատական վերանայման:
16. Իրենց անձը և քաղաքացիությունը հաստատող փաստաթղթերի տրամադրմանը քաղաքացիների անխափան հասանելիությունն ապահովելու համար հստակ ցուցումներ պետք է սահմանվեն ոստիկանության տարածքային տեսուչների համար՝ սահմանելով նրանց կողմից քաղաքացու փաստացի բնակության վայրը ստուգելու և գրանցելու առնչությամբ նրանց կոնկրետ պարտականությունները:
17. Հստակ ցուցումներ պետք է տրվեն ՀՀ անձնագրային ինչպես նաև գինվորական մարմիններին՝ պարզաբանելով, որ գինվորական հաշվառման փաստաթղթեր կարող են պահանջվել մի-

այն զինապարտներից՝ համաձայն «Ձինապարության մասին» ՀՀ օրենքի հոդված 3-ի, և որ զինվորական հաշվառումը հանդիսանում է լիազորված զինվորական մարմնի պատասխանատվությունը:

18. Հետևյալ քայլերը պետք է ձեռնարկվեն՝ չգրանցված ծնունդների հարցն ավելի արդյունավետ լուծելու համար.

- Պետք է կատարվեն օրենսդրական փոփոխություններ՝ ապահովելու համար յուրաքանչյուր երեխայի ծննդի պետական գրանցումը ծննդից անմիջապես հետո՝ անկախ նրա ծնողների կողմից վավեր անձը հաստատող փաստաթուղթ ունենալու հանգամանքից:
- Մարզպետարանների ներքո գործող երեխաների իրավունքների պաշտանության բաժինները պետք է համապատասխան վարչական լծակներ ունենան՝ նախաձեռնություն ցուցաբերելու և արդյունավետ գործելու այնպիսի դեպքերում, երբ ծնողները կամ շահագրգիռ անձինք ի վիճակի չեն ինքնուրույն կերպով լուծել հարցը:
- Ծննդի գրանցման հնարավորությունը պետք է ֆիզիկապես հասանելի դարձվի ողջ բնակչության համար: Ավելին, պետք է դիտարկվի ծննդի գրանցման գործընթացի հեշտացումը հիվանդանոցներում կամ կացության ակտերի գրանցման մարմիններից դուրս այլ վայրերում:
- Օրենսդրական փոփոխություններ պետք է կատարվեն՝ երեխայի ծնունդը հաստատող դատական գործընթացները արագացնելու ուղղությամբ:
- Քայլեր պետք է ձեռնարկվեն, այդ թվում՝ ՁԼՄ-ների և հանրային իրազեկման միջոցով, ծննդի գրանցման կարևորությունն և անհրաժեշտությունը ընդգծելու նպատակով:
- Թեև երեխաների իրավունքների պաշտանության բաժիններից շատերը տիրապետում էին համապատասխան մարզում տիրող փաստացի իրավիճակին, կային նաև այնպիսիները, որոնք չէին տիրապետում: Հետևաբար, առաջարկվում է ուժեղացնել մոնիտորինգը և լրացուցիչ ուղղորդում ապահովել համայնքների ղեկավարների և երեխաների իրավունքների պաշտանության բաժինների համար:



### 6.3. Ապաքաղաքացիության կրճատումը

- «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի հոդված 10(3)-ը անհարկի սահմանափակող բնույթ ունի, քանի որ ՀՀ քաղաքացիներ է ճանաչում միայն ազգությամբ հայ նախնիին ՀԽՍՀ քաղաքացիներին:
- Հպատակագրման վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը բավականաչափ թափանցիկ չէ՝ մերժումների պատճառաբանվածության և դատական կարգով վերանայման հնարավորության բացակայության պատճառով: Քաղաքացիության դիմումների քննարկման մեկամյա ժամկետը թվում է երկար՝ մի շարք այլ երկրների (Վրաստանի, ՌԴ, Ղրղզստանի) լավագույն փորձի տեսանկյունից, հատկապես եթե խոսքը գնում է քաղաքացիություն ստանալու պարզեցված ընթացակարգի մասին:
- Ներկայումս գործունակությունը պարտադիր պայման է Հայաստանի քաղաքացիություն ստանալու համար: Ավելին, անգործունակ անձինք չեն կարող դիմել քաղաքացիություն ստանալու համար իրենց խնամակալի միջոցով:
- Թեև «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքով որոշ կատեգորիայի անձանց համար հայոց լեզվի իմացության պահանջը վերացվել է, այդ անձինք պետք է հանձնեն ՀՀ սահմանադրության իմացության թեստ հայոց լեզվով: Այդուհանդերձ, ոչ օրենքը, ոչ էլ կիրարկող օրենսդրությունը չեն սահմանել կարգ այն մասին, թե ինչպես այդ անձինք պետք է հանձնեն թեստը և, մասնավորապես այն մասին, թե ինչպես պետք է նրանք օգտվեն թարգմանչի ծառայություններից՝ գրավոր թեստ հանձնելու նպատակով:
- «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի 28(3) հոդվածով սահմանված պահանջով որևէ կիրարկող օրենսդրություն չի ընդունվել՝ անձի՝ ՀՀ քաղաքացի ճանաչվելու իրավունքի առկայությունը որոշելու համար:
- «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում տեղի ունեցած փոփոխությունները,

որոնք հնարավորություն են տալիս 14-18 տարեկան երեխաներին ստանալ ՀՀ քաղաքացիություն՝ իրենց ծնողների կողմից այդ քաղաքացիությունը ստանալուց հետո, չունի հետադարձ ուժ: Այսինքն՝ նախքան 2012թ. հունվարի 1-ը՝ /փոփոխությունների ուժի մեջ մտնելու ամսաթիվը/ քաղաքացիություն ստացած ծնողների երեխաները չեն կարող ստանալ ՀՀ քաղաքացիություն՝ իրենց ծնողների կողմից այդ քաղաքացիությունը ստանալու ուժով:

- «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքը չի նախատեսում քաղաքացիություն ստանալու հեշտացված կարգ փախստականների համար:

### Առաջարկություններ

19. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի հոդված 10(3)-ը պետք է փոփոխվի՝ քաղաքացիներ ճանաչելով նախկին ՀԽՍՀ բոլոր քաղաքացիներին և ոչ միայն ազգությամբ հայերին:
20. Հպատակագրումը պետք է դառնա ստանդարտ վարչական ընթացակարգ՝ մերժումների պատճառաբանման և դատական կարգով վերանայման հնարավորությամբ: Ավելին, դիմումների քննարկման 1 տարվա ժամկետը պետք է կրճատվի մինչև 6 ամիս:
21. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքը պետք է փոփոխվի՝ հնարավորություն ստեղծելով անգործունակ անձանց քաղաքացիություն ստանալու մասին դիմում ներկայացնել խնամակալի միջոցով, որը նրան կներկայացնի ողջ գործընթացում: Անգործունակ անձանց հարկ է նաև ազատել լեզվի և սահմանադրության իմացության պահանջներից:
22. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքը և/կամ կիրարկող օրենսդրությունը պետք է փոփոխվեն՝ նախատեսելու սահմանադրության իմացության թեսթը հանձնելու ողջամիտ հնարավորություն այն անձանց համար, ովքեր ազատված են հայոց լեզվի իմացության պահանջից:
23. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին»

օրենքի հոդված 10(2)-ը ՀՀ քաղաքացիության հնարավորություն է տալիս քաղաքացիություն չունեցող անձանց և նախկին ԽՍՀՄ պետությունների քաղաքացիներին, ովքեր այդ մասին դիմում կներկայացնեն մինչև 2012թ. դեկտեմբերի 31-ը:

Եթե օրենսդրորեն նման ժամկետային երկարագծում չնախատեսվի, ապա «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքում պետք է ներառվեն հատուկ դրույթներ, որոնք կհեշտացնեն քաղաքացիություն չունեցող անձանց հպատակագրման գործընթացը: Դրանք պետք է, մասնավորապես, ներառեն հետևյալը.

Պետք է վերացվի բնակության պահանջը, կամ հպատակագրման համար պետք է կրճատվի բնակության տևողության պահանջը, որը պետք է հաշվարկվի քաղաքացիություն չունեցող անձանց՝ Հայաստանի Հանրապետությունում օրինական կարգով բնակության իրավունք ստանալու պահից:

Պետք է վերացվի հայոց լեզվի իմացության պահանջը:

24. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի հոդված 16-ում 2011թ. դեկտեմբերի 8-ին տեղի ունեցած փոփոխությունները, որոնք հնարավորություն են տալիս 14-18 տարեկան երեխաներին ստանալ ՀՀ քաղաքացիություն՝ իրենց ծնողների կողմից այդ քաղաքացիությունը ստանալուց հետո, պետք է ստանան հետադարձ ուժ:
25. Ինչպես նախատեսված է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի 28(3) հոդվածով՝ կառավարությունը պետք է ընդունի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի հոդված 10-ը կիրակող որոշում: Նման ընթացակարգերի սահմանումը ապահովող կանոնակարգը պետք է մասնավորապես սահմանի, թե ով է համարվում ՀՀ-ում մշտապես բնակվող, և ինչպես է դա ապացուցվում, ով է համարվում նախկին ՀԽՍՀ քաղաքացի, ինչ փաստաթղթեր պետք է ներկայացնի անձը կամ ինչ գործողություններ պետք է իրականացնի քաղաքացի ճանաչվելու իր իրավունքն ապացուցելու համար, ինչպիսի ժամանակային սահմանափակումներ կան «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի հոդված 10-ի համաձայն ներկայացված

դիմումների քննարկման համար: Համաձայն միջազգային լավագույն փորձի՝ այն նաև պետք է նվազեցնի ապացուցման ստանդարտն այն դեպքում, երբ անձը, իրենից անկախ հանգամանքների բերումով, չի կարող բավարարել որոշակի պայմանների, մասնավորապես՝ չի կարող ստանալ տվյալ պետության դեսպանատնից որոշակի փաստաթուղթ, քանի որ վերջինս իր դիմումին չի արձագանքում ողջամիտ ժամկետներում<sup>135</sup>:

26. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը պետք է փոփոխվի՝ նախատեսելու հանար քաղաքացիություն ստանալու հեշտացված ընթացակարգ փախստականների համար:

---

135 Մասնավորապես, տես Եվրոպայի խորհրդի «Պետությունների իրավահաջորդության առնչությամբ ապաքաղաքացիության կանխարգելման մասին» 2006թ. կոնվենցիայի հոդված 8(1)-ը՝ «Իրավահաջորդ պետությունը չպետք է պարտադրի իր ստանդարտ չափանիշները իր քաղաքացիությունը տրամադրելիս այն դեպքերում, երբ անձինք կդառնային քաղաքացիություն չունեցող պետությունների իրավահաջորդության արդյունքում և երբ նրանք ողջամտորեն չեն կարող ապահովել այդ ստանդարտ չափանիշների իրագործումը»:

## Հավելված

### Օգտագործված գրականության ցանկ

1. 168 ժամ, «Հայն ու ցիգանը շատ նման են...» (2005), <http://www.168.am/am/articles/3103-pr>
2. ՀՀ Վարչական դատարանի որոշում թիվ ՎԴ2/0285/05/10 գործով, 10 նոյեմբեր 2010թ.
3. ՀՀ Վարչական դատարանի որոշում թիվ ՎԴ/3906/05/09 գործով, 26 մարտի 2010թ.
4. ՀՀ Վարչական դատարանի որոշում թիվ ՎԴ/2265/05/08 գործով, 3 հոկտեմբերի 2008թ.
5. Անդերսոն Բ.Ա. և Սիլվեր Բ.Դ (1989), «Խորհրդային միության փոփոխվող էթնիկ կազմի ժողովրդագրական աղբյուրները», ազգաբնակչության և զարգացման ամփոփագիր, հատոր 15, թիվ. 4
6. Ասատրյան Գառնիկ, Առաքելովա Վիկտորիա, Հայաստանի ազգային փոքրամասնությունները (2002թ.)
7. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (1998թ.)
8. ՀՀ սահմանադրություն (1995թ.)
9. ԽՍՀՄ սահմանադրություն (1936թ.)
10. ԽՍՀՄ սահմանադրություն (1977թ.)
11. Եվրոպայի խորհուրդ, Կոնվենցիա «Պետությունների իրավահաջորդության առնչությամբ ապաքաղաքացիության կանխարգելման մասին» (2006թ.)
12. Եվրոպայի խորհուրդ, Քաղաքացիության մասին եվրոպական կոնվենցիա (1997)
13. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում, 30 օգոստոսի 2007 թվականի N 1040-Ն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացող անձանց համար Հայաստանի Հանրապետության սահմանադրության և հայոց լեզվի

ինձացության ստուգման կարգը սահմանելու մասին»

14. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում, 23 նոյեմբերի 2007 թվականի N 1390-Ն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և դրանք ներկայացնելու կարգը սահմանելու մասին»
15. ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N 297 – Ն որոշում «Հայաստանի Հանրապետության վերադարձի վկայանի նկարագիրը հաստատելու և այն տրամադրելու կարգը հաստատելու մասին»
16. ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 2-ի N 318 – Ն որոշում «Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց փաստաթղթավորման կարգը և կացության վկայականի նկարագիրը հաստատելու մասին»
17. ՀՀ կառավարության 25 դեկտեմբերի 1998 թվականի N 821 որոշում «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին»
18. Կանադայի Իմիգրացիայի և փասխտականների խորհուրդ, *Իրան/Նորվեգիա /Հարավսլավիա : Նորվեգիայում հարավսլավացի հորից և իրանցի մորից ծնված երեխայի քաղաքացիություն, 1 մայիսի 1999թ , ZZZ31881.E, <http://www.unhcr.org/refworld/docid/3ae6ac7d5b.html>*
19. Կանադայի Իմիգրացիայի և փասխտականների խորհուրդ, Իրան. *Արդյոք իրանցի մորից և քաղաքացիություն չունեցող բեղուին հորից ծնված երեխան, ով ապրում է Քուվեյթում, իրավունք ունի ստանալ Իրանի քաղաքացիություն: Արդյոք Իրանը ապաքաղացիությունից պաշտպանություն է ապահովում Քուվեյթում ծնված երեխաների համար, 15 հոկտեմբեր 2004, IRN43041.FE, <http://www.unhcr.org/refworld/docid/42df610e20.html>*

20. Կանադայի Իմիգրացիայի և փաստականների խորհուրդ, Իրան. *Արդյոք իրանցի կինը կորցնում է Իրանի քաղաքացիությունը, եթե ամուսնանում է ոչ իրանցու հետ, կամ ձեռք է բերում այլ քաղաքացիություն առանց տեղեկացնելու Իրանի պետական մարմիններին. Արդյոք իրանցի մորից և ոչ իրանցի հորից ծնված երեխան իրավունք ունի Իրանի քաղաքացիության*, 1 մայիսի 1999թ, IRN31882.E, <http://www.unhcr.org/refworld/docid/3ae6ad9423.html>
21. Կանադայի Իմիգրացիայի և փաստականների խորհուրդ, պատասխաններ տեղեկատվության հարցումներին, [http://www.irb-cisr.gc.ca:8080/RIR\\_RDI/RIR\\_RDI.aspx?id=452321&l=e](http://www.irb-cisr.gc.ca:8080/RIR_RDI/RIR_RDI.aspx?id=452321&l=e)
22. Արմինե Կարախանյան «ՀՀ քաղաքացիության ձեռքբերումը ԽՍՀՄ կազմալուծումից հետո» (2006թ, <http://law.aua.am/files/2012/02/acquisition.pdf>)
23. ՀՀ Հոդված 19-ի օրենսգիրք (2001թ.)
24. «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենք (2006թ.)
25. «Քաղաքացիական կացության ակտերի» մասին ՀՀ օրենք (2004թ.)
26. «Զինապարտության մասին» ՀՀ օրենք (1998թ.)
27. «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենք (2006թ.)
28. «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենք (2008թ.)
29. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք (1996թ.)
30. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք (2009թ.)
31. «Պետական տուրքի մասին» ՀՀ Օրենք (1997թ.)
32. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենք (1995թ.)
33. «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենք (2007թ.)

34. «Ապրանքային նշանների» մասին ՀՀ օրենք (2010թ.)
35. ԽՍՀՄ օրենք «ԽՍՀՄ քաղաքացիության մասին» (1978թ.)
36. ԽՍՀՄ օրենք «ԽՍՀՄ քաղաքացիության մասին» (1990)
37. Մակարյան Շուշանիկ, EUDO Քաղաքացիության դիտարան, Հայաստանի հաշվետվություն (2010թ.), <http://eudo-citizenship.eu/docs/CountryReports/Armenia.pdf>
38. Մեսսի Հյու, ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՍԵՐԻԱ, ՄԱԿ ՓԳՀ-ն և դե ֆակտո ապաքաղաքացիությունը
39. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, բնակչության մարդահամար (2001թ.), <http://armstat.am/am/?nid=52>
40. ՀՀ մարդու իրավունքների պաշտպան, տեղեկատվական հայտարարություններ, <http://ombuds.am/main/am/9/34/>
41. «Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր քաղաքացիության հարցերի հանձնաժողովի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ Նախագահի 1999թ. հուլիսի 23-ի հրամանագիր թիվ ՆՀ -350
42. «Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր քաղաքացիության հարցերի հանձնաժողովի նոր կազմի մասին» ՀՀ Նախագահի 1999թ. հուլիսի 23-ի հրամանագիր թիվ ՆՀ -349
43. Ռոբինսոն Նեհեմիա, *Կոնվենցիա քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին*, մեկնաբանություն (Հրեաների հարցերով ինստիտուտ, Հրեաների Համաշխարհային Համաժողով), 1955թ. (վերատպագրված է Միջազգային պաշտպանության բաժնի կողմից, 1997թ)
44. «Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն» Տարեկան հաշվետվություն (2006-2007թթ.), <http://sakharovcenter.org/?page=reports&lng=am&year=2006-2007>
45. «Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն» Տարեկան հաշվետվություն, (2008-



2009թթ.), <http://sakharovcenter.org/?page=reports&lng=am&year=2008-2009>

46. «Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն» Տարեկան հաշվետվություն, (2010-2011թթ.), <http://sakharovcenter.org/?page=reports&lng=am&year=2010-2011>
47. ՄԱԿ ՓԳՀ քարտուղարություն, *Ապաքաղաքացիության չափումը բնակչության մարդահամարի միջոցով*, 2008թ.
48. Օկսանա Շևել, EUDO Քաղաքացիության դիտարան, Ուկրաինայի հաշվետվություն, (2010թ.), <http://eudo-citizenship.eu/docs/CountryReports/Ukraine.pdf>
49. ՄԱԿ-ի Փախստականների հարցերով զերագույն հանձնակատար, *Միավորված ազգերի կազմակերպության 1954թ. Կոնվենցիա «Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին»*: Իրականացումը ԵՄ անդամ երկրներում և ներդաշնակեցման գծով առաջարկություններ, (2003), <http://www.unhcr.org/refworld/docid/415c3cfb4.html>
50. ՄԱԿ ՓԳՀ և Բաց հասարակության արդարադատության նախաձեռնություն, փորձագետների համաժողով կազմակերպված Ժնևում, Շվեյցարիա, 6-7 դեկտեմբերի, 2010թ., Ամփոփ եզրահանգումներ
51. ՄԱԿ ՓԳՀ, Փորձագետների համաժողով, Պրատո, Իտալիա, 27- 28 մայիսի, 2010թ., Ամփոփ եզրահանգումներ
52. ՄԱԿ ՓԳՀ, *Քաղաքացիություն և ապաքաղաքացիություն, խորհրդարանականների ձեռնարկ* (2005թ.)
53. Միավորված ազգերի կազմակերպության Կոնվենցիա «Ապաքաղաքացիության կրճատման մասին» (1961թ.)
54. Միավորված ազգերի կազմակերպության Կոնվենցիա «Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին» (1954թ.)
55. Ուոլդրոջ Հարալդ, Քաղաքացիության ձեռքբերում (2006), <http://www.law.ed.ac.uk/citmodes/files/chapter3acquisitionofnationality.pdf>



**ՄԱԿ ՓԳՀ Հայաստան**

Հեռ՝ (+37410) 56 48 92, 58 48 92, 54 59 35

Ֆաքս՝ (+37410) 56 78 17

Էլ-փոստ՝ [ARMYE@unhcr.org](mailto:ARMYE@unhcr.org)

[www.unhcr.org](http://www.unhcr.org)

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՐՅԵՐՈՎ  
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ